

«Հաստատում եմ»

Ռեկտոր _____ Ա.Ա. Ղուկասյան

«___» _____ 2017թ.

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ԻՆՔՆԱՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

(Ուսումնական հաստատության անվանումը)

Սյունիքի մարզ, ք. Գորիս, Ավանգարդ 2

(Հաստատության հասցեն)

Գորիս 2017

Ինքնավերլուծությունն իրականացրած աշխատանքային խումբ

Անուն, Ազգանուն		Պաշտոն
1.	Սյուզաննա Հայրապետյան	Միջազգային համագործագության և կրթության որակի ապահովման բաժնի վարիչ
2.	Զարեհ Գրիգորյան	Ուսումնական ծրագրերի և ուսումնամեթոդաան աշխատանքների գծով պրոռեկտոր
3.	Վարդան Դանիելյան	Ուսումնական վարչության պետ
4.	Արա Գալստյան	Ավագ ճարտարագետ
5.	Ալբերտ Դինգչյան	Ճարտարագիտական և տնտեսագիտության մասնագիտությունների ֆակուլտետի դեկան
6.	Թեհմինա Մարության	Հումանիտար և հասարակագիտական մասնագիտությունների ֆակուլտետի դեկան
7.	Արփինե Դինունց	Բնագիտական մասնագիտությունների ֆակուլտետի դեկան
8.	Տիգրան Վանդունց	Գիտական քարտուղար
9.	Արևիկ Արզումանյան	Աշխատակազմի կառավարման բաժնի դեկավար
10.	Ռուզաննա Թապտուղյան	Գլխավոր հաշվապահ
11.	Նաիրա Սաֆարյան	Օտար լեզուների ամբիոնի դասախոս
12.	Գուրգեն Մինասյան	Տնտեսագիտության ամբիոնի վարիչ
13.	Լուիզա Վարդանյան	Ք.գ.դ. , դոցենտ
14.	Լիլիթ Աթաբեկյան	Ք.գ.թ. , դոցենտ
15.	Հայկ Բաբայան	Միջազգային համագործագության և կրթության որակի ապահովման բաժնի մասնագետ
16.	Թամարա Օհանյան	Միջազգային համագործագության և կրթության որակի ապահովման բաժնի մասնագետ
17.	Կամո Մովսիսյան	Ֆիզիկայի սեկտորի վարիչ

18.	Գայանե Շաբունց	Պատմության ամբիոնի վարիչ
19.	Հրայր Պետրոսյան	Մանկավարժության և հոգեբանության ամբիոնի վարիչ
20.	Սամվել Պողոսյան	Էլեկտրոնիկայի և էլեկտրաէներգետիկայի ամբիոնի վարիչ
21.	Լիանա Օհանյան	Օտար լեզուների ամբիոնի վարիչ
22.	Գայանե Գասպարյան	Ուսանողների կարիերայի աջակցման մասնագետ
23.	Նուարդ Շալունց	Գրադարանի վարիչ
24.	Աշոտ Ֆարամազյան	Համակարգչային տեխնիկ
25.	Հասմիկ Միրզոյան	Փաստաթղթաշրջանառության, վերահսկման, ավարտական փաստաթղթերի ստացման, պահպանման և տրամադրման պատասխանատու
26.	Վարդուհի Մուսայելյան	Անձնակազմի հաշվառման պատասխանատու
27.	Նոնա Միրզոյան	Հասարակության հետ կապերի և լրատվության բաժնի պատասխանատու
28.	Մոնա Ալավերդյան	Ուսանող
29.	Արուս Անդրիյան	Ուսանող

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ	4
ՕԳՏԱԳՈՐԾԱԾ ԵԶՐՈՒՅԹՆԵՐ	5
I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐ	6
II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ.....	12
III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ.....	21
IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐ	31
V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄ	44
VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԶԱՐԳԱՅՈՒՄ.....	58
VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ	70
VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ.....	82
IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՄԻԶԱԶԳԱՅՆԱՅՈՒՄ	91
X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ.....	98

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Ուսումնական հաստատության կառավարումը, կրթական ու հետազոտական գործունեությունը և հասարակությանը մատուցվող ծառայությունները պարբերաբար բարելավվում են և միտված են.

- որակի մշակույթի ձևավորմանը,
- կրթական այնպիսի միջավայրի ստեղծմանը, որը կնպաստի աշխատաշուկայի հարափոփոխ պահանջներին համապատասխան ուսումնառողների գիտելիքների, հմտությունների, կարողությունների ձևավորմանը,
- մասնագիտական կրթության արդյունավետության բարձրացմանը և հասարակության առջև հաշվետվողականության ապահովմանը,
- ազգային և միջազգային մակարդակներում ուսումնական հաստատության կողմից մատուցվող ծառայությունների համադրելիության և մրցունակության, ինչպես նաև թափանցիկության ապահովմանը:

ՕԳՏԱԳՈՐԾԱԾ ԵԶՐՈՒՑԹՆԵՐ

Չափանիշներ - հատուկ առանձնացված ձևակերպումներ, որոնք վերստուգելի տերմիններով սահմանում են հաստատության գործունեության կամ իրականացվող կրթական ծրագրերի բնութագրերը:

Չափորոշիչներ – ձևակերպումներ, որոնք սահմանում են յուրաքանչյուր չափանիշին համապատասխանելու չափը և անաչառ գնահատելու համար անհրաժեշտ պայմանները:

ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

«Գորիսի պետական համալսարան» ՊՈԱԿ-ը, արժևորելով ու պահպանելով Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի առաջատար բարձրագույն ուսումնական հաստատության իր առաքելությունը, շուրջ հինգ տասնամյակ շարունակում է զարգացնել բարձրագույն կրթության համակարգը՝ ապահովելով միջբուհական և միջմշակութային կապերը՝ Բոլոնիայի հոշակագրի դրույթներին համապատասխան:

Գորիսում բարձրագույն ուսումնական հաստատություն ստեղծվել է ՀԽՍՀ կառավարության 1967թ. հոկտեմբերի 1-ի որոշմամբ, և բուհն իր գործունեությունը սկսել է սկզբում՝ որպես Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի (այժմ՝ համալսարանի), այնուհետև՝ որպես Հայաստանի պետական պոլիտեխնիկական ինստիտուտի (այժմ՝ Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան) Գորիսի մասնաճյուղ: Տարիների ընթացքում բուհը, գործելով ՀՀ վերոնշյալ հեղինակավոր ուսումնական հաստատությունների համակարգում, անցել է բարձրագույն կրթության բարեփոխումների հիանալի դպրոց, կուտակել է բուհական համակարգի գործունեության հսկայական փորձ: Բուհի ստեղծումը, բարձրագույն կրթությամբ որակյալ մասնագետներով տարածաշրջանը ապահովելուն զուգընթաց, ի սկզբանե նպատակ է հետապնդել տարածաշրջանից երիտասարդության արտահոսքի կանխման, Արցախի հետ կապի ամրապնդման և բնակչության հասարակական-քաղաքական գիտակցության ակտիվացման:

ՀՀ կառավարության 2005թ. հոկտեմբերի 6-ի թիվ 2400-ն որոշմամբ Գորիսի մասնաճյուղի հենքի վրա ստեղծվել է «Գորիսի պետական համալսարան» ՊՈԱԿ-ը՝ որպես ինքնուրույն բարձրագույն ուսումնական հաստատություն՝ համալսարանի կարգավիճակով (կանոնադրությունը հաստատվում է 22.02.2006թ. և վերահաստատվում փոփոխություններով՝ 8.11.2012թ.):

Գորիսի պետական համալսարանն այն հաստատությունն է, որտեղ տասնամյակների ընթացքում պահպանվել է սերունդների հաջորդականությունը, բազմապատկվել են գիտակրթական նվաճումները:

Ունենալով հարուստ ավանդույթներ՝ համալսարանը մշտապես ձգտել է գերազանցության ու նորարակական ուսուցման՝ կրթության զարգացման պետական ռազմավարության շրջանակներում:

2004թ.-ից անցնելով բարձրագույն կրթության երկաստիճան համակարգի՝ բուհը նորամուծություններ է իրականացրել ուսուցման կազմակերպման կրեդիտային համակարգի ներդրման ուղղությամբ, ներդրել է նոր մասնագիտություններ ու մասնագիտացումներ:

Գործիսի պետական համալսարանում այժմ գործում են երեք ֆակուլտետներ՝

1. Բնագիտական մասնագիտությունների ֆակուլտետ
2. Հումանիտար և հասարակագիտական մասնագիտությունների ֆակուլտետ
3. Տնտեսագիտության և ճարտարագիտության ֆակուլտետ:

Ֆակուլտետներում իրականացվում է բարձրագույն կրթություն՝ 14 մասնագիտություններով: Ուսուցումն իրականացվում է առկա և հեռակա ձևերով:

Ներկա ժամանակաշրջանում պայմանավորված ժողովրդագրական, տեխնոլոգիական, սոցիալ-տնտեսական, մշակութային բազմազան ու բազմաբնույթ գործոններով՝ համալսարանը վերագնահատում ու վերանայում է իր դերն ու պատասխանատվությունը, փորձում է մեծացնել մրցակցային առավելություններն ու ներուժը: Վերանայվել է մասնագիտությունների անվանացանկը, բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով ներդրվել են նոր մասնագիտություններ՝ «Կերպարվեստ», «Կառավարում (ըստ ոլորտի)», «Անգլերեն լեզու և գրականություն», «Զբոսաշրջության կառավարում», «Ձեռնարկությունների տնտեսագիտություն», «Հատուկ մանկավարժություն»:

Համալսարանում իրականացվում են միջազգային մի շարք ծրագրեր. Tempus-ի «MAHATMA» ծրագրի շրջանակներում ԳՊՀ-ում ներդրվել է «Կրթության կառավարում» մագիստրոսական ծրագիրը, Erasmus+-ի շրջանակում մեկնարկել է LNSS («Գրադարանային ցանցի աջակցության ծառայություններ, գրադարանների արդիականացում Հայաստանում, Մոլդովայում և Բելառուսում՝ գրադարանների անձնակազմի զարգացման և գրադարանային ծառայությունների բարեփոխումների միջոցով»), ինչպես նաև HERITAG («Բարձրագույն կրթության միջառարկայական բարեփոխումներ զբոսաշրջության կառավարման և երկրատեղեկատվության ոլորտների ուսումնակրթական ծրագիր») ծրագրերը: Արտաքին կապերի և միջազգային գործընթացների շրջանակներում նախատեսվում է հայաստանյան բուհերի, ինչպես նաև ԱՊՀ բուհերի համագործակցության պայմանագրերի կնքում:

Լինելով բարձրագույն կրթության առաջատարը մարզում՝ համալսարանն իր դիմորդներին տրամադրում է որակյալ կրթական ծրագրեր, առաջարկում է նորարարական ուսանողամետ ուսուցում՝ իր գործունեության բոլոր բնագավառներում ապահովելով որակի անընդհատ բարելավում:

I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

ԶԱՓԱՆԻՇ: Մասնագիտական ուսումնական հաստատության (այսուհետ՝ ՄՈՒՀ) վարած քաղաքականությունն ու ծավալած գործունեությունը համապատասխանում են հաստատության որդեգրած առաքելությանը, որը համահունչ է ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակին:

Ժամանակակից կրթական բարեփոխումների համատեքստում խիստ արդիական են մասնագիտական կրթության որակական զարգացման հիմնախնդիրները: Հատկապես կարևորվում է տարածաշրջանը որակյալ և աշխատաշուկայում մրցունակ կադրերով ապահովելու գործընթացը, որը պետք է նպաստի տարածաշրջանի զարգացմանը և երիտասարդության արտահոսքի կանխմանը:

ԳՊՀ-ի գործող հայեցակարգը կոչված է ուղղորդելու համալսարանի առաջանցիկ զարգացման գործընթացը՝ նոր մարտահրավերներին համապատասխան, ինչպես նաև նպաստելու կրթության ոլորտում առկա հիմնախնդիրների լուծմանը:

ՄՈՒՀ-ի կողմից իրականացվող գործունեությանն ու քաղաքականությանը համապատասխանում են հայեցակարգում նշված առաքելությանն ու նպատակներին, ինչպես նաև հաստատված կանոնադրությանը:

ՉԱՓՈՐՈՇԻՉ ա. ՄՈՒՀ-ն ունի նպատակներն ու խնդիրներն արտացոլող հստակ ձևակերպված առաքելություն, որը համահունչ է ՈԱՇ-ին:

Հիմքեր

ՄՈՒՀ-ի կանոնադրությունը /[ԳՊՀ կանոնադրություն/](#),

ՄՈՒՀ-ի առաքելությունը, նպատակները և խնդիրները /[ԳՊՀ հայեցակարգ 2011-2016թթ.](#)/,

ՄՈՒՀ-ի ռազմավարական ծրագիրը /[ԳՊՀ հայեցակարգ 2011-2016թթ.](#)/:

Վերլուծել և հիմնավորել, թե որքանով է հաստատության ռազմավարական ծրագիրը համապատասխանում ՄՈՒՀ-ի առաքելությանը, նպատակներին ու խնդիրներին /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/

Համաձայն Գործիսի պետական համալսարանի (այսուհետև՝ ԳՊՀ) կանոնադրության առաջին կետի համալսարանը կրթական, գիտահետազոտական բարձրագույն ուսումնական հաստատություն է, որի գործունեությունը նպատակաուղղված է բնագիտական, սոցիալ-տնտեսագիտական, ճարտարագիտական, հասարակագիտական կրթության հիմնարար ու կիրառական գիտական հետազոտությունների և ուսումնառության կազմակերպմանը՝ հանրակրթական, միջին մասնագիտական, հետբուհական մասնագիտական կրթության մակարդակներում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված կարգով և կրթական ծրագրերով:

Համալսարանի առաքելությունն է.

- Հենվելով ազգային ու միջազգային փորձին՝ մասնագիտական-կրթական ծրագրերի ու ծառայությունների միջոցով պատրաստել բակալավրի ու մագիստրոսի որակավորումներով համակողմանի զարգացած, աշխատաշուկայում մրցունակ, ժամանակի մարտահրավերներին դիմակայելու ընդունակ բարձրորակ կադրեր տարածաշրջանի կրթության, տնտեսության, արդյունաբերության ու տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտների համար;
- Ստեղծել ուսանողակենտրոն միջավայր, որը բնութագրվում է տնտեսության և հասարակության կրթական ու տեխնոլոգիական կարիքներին համահունչ ճկուն կրթական ծրագրերով, մշակված դասընթացներով, դասավանդման և ուսումնառության արդի մեթոդներով:

ԳՊՀ-ն իր ռազմավարությունը մշակում, նպատակներն իրականացնում է համապատասխան համալսարանի առաքելությանը, որոնք ներկայացված են համալսարանի 2011-2016թթ. հայեցակարգում: /[ԳՊՀ հայեցակարգ 2011-2016թթ](#) էջ3/: Հայեցակարգը մշակել է ԳՊՀ Գիտական խորհրդի որոշմամբ ստեղծված հանձնաժողովը՝ նախորդող ռազմավարական

պլանի կատարման արդյունքների վերլուծության և արտաքին ու ներքին միջավայրային գործոնների ազդեցության հետազոտության հիման վրա /[հավելված 1բ2](#)/: Ռազմավարական պլանավորման ժամանակակից մեթոդաբանության համաձայն՝ հայեցակարգի անմիջական մշակմանը նախորդել է համալսարանի գործունեության արդյունավետության ուսումնասիրությունը: Այդ հետազոտությունները հնարավորություն ընձեռեցին համարժեքորեն գնահատելու միջավայրային փոփոխությունների ներգործությունը համալսարանի գործունեության տարբեր ասպեկտների վրա, շաղկապելու համալսարանի ապագա զարգացումը ներքին ու արտաքին միջավայրերի, կարիքների ու փոփոխությունների հետ:

Վերլուծելով և ամփոփելով ԳՊՀ 2006-2010թթ. ռազմավարական պլանի իրականացման արդյունքները՝ որպես Համալսարանի հետագա զարգացման ռազմավարական հիմնական թիրախներ, հաջորդող հինգ տարիների համար առաջադրվել են հետևյալ հիմնախնդիրները.

- բուհի և աշխատաշուկայի փոխկապակցված գործունեություն. ընդունելություն՝ աշխատաշուկայում պահանջված մասնագիտությունների գծով,
- որակյալ ուսանողական համակազմ,
- որակի ապահովման կայուն զարգացող համակարգ,
- ուսուցման աճող որակ և արդյունավետություն,
- ինտեգրում Եվրոպական բարձրագույն կրթական համակարգին,
- որակյալ կադրային ներուժ և նյութատեխնիկական բազա,
- սոցիալական ծրագրեր և ինֆրակառուցվածք,
- կայուն ֆինանսներ և արդյունավետ ու թափանցիկ կառավարում,
- տեղեկատվական (ինֆորմացիոն) համալիր ապահովվածություն,
- զարգացող արտաքին կապեր և գործունեության միջազգայնացում:

Պլանի նախագիծը տեղադրվել է համալսարանի ինտերնետային կայքում և հղվել Համալսարանի ֆակուլտետներ՝ քննարկման ու գնահատման համար: Քննարկումների արդյունքում լրամշակված նախագիծն արժանացել է ԳՊՀ-ի Գիտական խորհրդի հավանությանը և հաստատվել ԳՊՀ Խորհրդի կողմից:

Ռազմավարական պլանավորումը պարբերական մոնիթորինգի, վերլուծության և բարելավման շարունակական, ցիկլիկ գործընթաց է, որն ընդգրկում է Համալսարանի բոլոր հիմնական միավորներն ու բնագավառները:

Համալսարանն իրականացնում է բարձրագույն մասնագիտական կրթություն՝ 23 հիմնական կրթական ծրագրերի՝ բակալավրի /14/ և մագիստրոսի /9/ որակավորման աստիճանների շնորհմամբ: Համալսարանը թողարկում է մանկավարժական, ճարտարագիտական, տնտեսագիտական ուղղվածության մասնագիտություններ:

ՀՀ կառավարության կողմից սահմանված որակավորումների շրջանակներում յուրաքանչյուր մասնագիտության համար առանձին ներառված են ուսումնառության ելքային համապատասխան արդյունքներ, որոնք մատնանշում են, թե ուսումնառողն ուսուցման ավարտին ինչ կոմպետենցիաներ պետք է ձեռք բերի: Կոմպետենցիաները ներկայացվում են գիտելիք, կարողություններ և հմտություններ համատեքստում:

Բակալավրի ու մագիստրոսի կրթական ծրագրով յուրաքանչյուր մասնագիտության համար համալսարանն ունի նախարարության կողմից հաստատված գործունեության թույլտվություն:

Դրանց հիման վրա համալսարանի կազմած ուսումնական պլաններով նախատեսված դասընթացների իրականացումը և արտադրական ու նախաավարտական պրակտիկաների անցկացումը ապահովում են ուսանողների տեսական ու գործնական գիտելիքների անհրաժեշտ պաշար, որը նպաստում է ՀՀ կառավարության կողմից համապատասխան որոշմամբ հաստատված որակավորումների՝ ազգային շրջանակի պահանջներին համադրելի

գիտելիքների, հմտությունների ու կարողությունների ձեռքբերմանը:

Այսպիսով, վերոշարադրյալից հետևում է, որ համալսարանի ռազմավարական զարգացման ծրագրով նախատեսված միջոցառումները հիմնականում բավարար հիմք են ապահովում Համալսարանի առաքելության իրագործման համար: Բացի այդ, բուհում իրականացվող մի շարք բարեփոխումներ անհրաժեշտություն են ստեղծում փոփոխություններ ու լրամշակումներ կատարելու, ինչն ամփոփված կլինի 2017-2021թթ. ռազմավարական նոր ծրագրում: Այդ նպատակով համալսարանի գիտխորհրդի որոշմամբ ստեղծվել է ռազմավարական նոր ծրագրի մշակման աշխատանքային խումբ [/հավելված 1բ2/](#):

Նոր ռազմավարական նպատակների իրագործման և խնդիրների լուծման նպատակով տարվել են աշխատանքներ, որի արդյունքում համալսարանը նոր ուսումնական տարում առաջարկում է նոր մասնագիտություններ՝ «Տուրիզմի կառավարում», «Հատուկ մանկավարժություն», «Սոցիալական մանկավարժություն», «Կերպարվեստ», որոնք կնպաստեն տարածաշրջանային որոշ տնտեսական ռազմավարական խնդիրների լուծմանը և աշխատաշուկայի կարիքների բավարարմանը:

Ելնելով համալսարանական գործընթացներից և աշխատանքային խմբի՝ ռազմավարական ծրագրի լրամշակման գործունեությունից՝ համալսարանի ռազմավարական նոր ծրագիրը առավել մեծ հավանականություն է ունենալու համապատասխանելու ՀՈԱՇ-ի պահանջներին:

ՉԱՓՈՐՈՇԻՉ Բ. ՄՈՒՀ-ի առաքելությունը, նպատակները և խնդիրներն արտացոլում են ներքին և արտաքին շահակիցների կարիքները:

Հիմքեր

ՄՈՒՀ-ի առաքելության, սահմանած նպատակների և խնդիրների վերանայման քաղաքականությունը (առկայության դեպքում),

Ներքին և արտաքին շահակիցների պահանջները բացահայտող մեխանիզմները (օրինակ՝ հարցումներ և այլն) / [հավելված 1բ1/](#),

ՄՈՒՀ-ի առաքելության վերանայումն արտահայտող որոշումներ (փաստաթղթեր) / [հավելված 1բ2/](#):

Վերլուծել, թե ինչպես է ՄՈՒՀ-ը վերհանում ներքին և արտաքին շահակիցների կարիքները: Հիմնավորել մոտեցման արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Ելնելով համալսարանի առջև դրված խնդիրների իրատեսական իրականացման, գործունեության բարելավման և առաջընթացի ապահովման պահանջներից, ինչպես նաև հաշվի առնելով համապատասխան ստորաբաժանումներից ստացած առաջարկություններն ու դիտողությունները՝ ռազմավարական պլանի աշխատանքային խումբը նախանշված ժամկետում կազմում և ռեկտորատի քննարկմանն է ներկայացնում ռազմավարական պլանի նախագծի բաղկացուցիչ մասերը: Նախագիծը ռեկտորատում մանրամասն քննարկվում է և հավանության արժանանալուց հետո տեղադրվում է համալսարանի կայքում, ինչպես նաև հրապարակվում է համալսարանի մամուլում՝ հանրայնացվելու և ծրագրի հիմնադրույթները լայնորեն քննարկելու նպատակով: Նախագծի մեկամսյա քննարկումներից հետո ներքին ու արտաքին շահակիցների կողմից արված առաջարկությունների, լրացումների ու ճշգրտումների հիման վրա ռեկտորի հրամանով ստեղծված և նրա գլխավորությամբ գործող հանձնախումբը սահմանված ժամկետում կազմում է ռազմավարական պլանի լրամշակված տարբերակը և ներկայացնում համալսարանի Գիտական խորհրդի քննարկմանը: Գիտական խորհրդի կողմից հավանության արժանացած տարբերակը ներկայացվում է Համալսարանի Խորհրդին (ՀԽ): Համալսարանի Խորհուրդը, ունենալով բոլոր առաջարկությունների և դիտողությունների ընդունման ու

մերժման հիմքերը, վերջնական տեսքով ընդունում ու հաստատում է ռազմավարական պլանը՝ ի կատարումն:

ԲՈՒՀ-ում ներքին շահակիցների կարիքների համար մեխանիզմներ են հանդիսանում նաև ամբիոնների, ֆակուլտետային խորհուրդների, գիտխորհրդի, ռեկտորատի նիստերը, ռեկտորի հանդիպումները կոլեկտիվի անդամների և ուսանողության հետ: Հնարավորություն է ընձեռված նաև ռեկտորատին ու գիտական խորհրդին առաջարկություններ ներկայացնել:

Հարկավոր է նշել, որ համաձայն ԳՊՀ-ի կանոնադրության՝ ՀԽ-ի 50 տոկոսը կազմում են արտաքին շահակիցները, իսկ մյուս 50 տոկոսը՝ ներքին շահակիցները: Ընդ որում, ներքին շահակիցների մասնաբաժնի 25 տոկոսը ներկայացնում են ուսանողության ներկայացուցիչները, իսկ 25 տոկոսը՝ դասախոսական կազմի ներկայացուցիչները: / [հավելված 1գ2/](#)

Ի լրացումն ֆակուլտետի խորհրդի գործունեության՝ պետք է հավելել, որ ֆակուլտետները գործում են համաձայն իրենց կանոնադրությունների և Ֆակուլտետի խորհուրդներում հաստատված աշխատանքային պլանների: Ֆակուլտետի խորհուրդները նույնպես բաղկացած են ուսանողներից (25%), այսինքն՝ ֆակուլտետի խորհուրդները նույնպես հաշվի են առնում արտաքին շահառուների կարծիքը՝ համաձայն ԳՊՀ-ի ռազմավարական պլանի: / [հավելված 1գ2/](#)

ՉՍՓՈՐՈՇԻՉ գ. ՄՈՒՀ-ում գործում են առաքելության ու նպատակների իրականացման արդյունքների գնահատման ու բարելավման հաստատված մեխանիզմներ ու ընթացակարգեր:

Հիմքեր

Առաքելության ու նպատակների իրականացման արդյունքների գնահատման քաղաքականությունն ու ընթացակարգերը /[ԳՊՀ հաշվետվություն/](#),

Շահակիցների (դասավանդողների, ուսումնառողների) ներգրավվածությունն արտացոլող հիմքեր / [հավելված 1գ2/](#),

Շահակիցների արձագանքները (առկայության դեպքում) /[հավելված 1բ1/](#),

Ռազմավարական ծրագրի իրականացումը գնահատելու քաղաքականությունը (առկայության դեպքում),

Ռազմավարական ծրագրի իրականացման գնահատմանը նպաստող այլ հիմքեր/[հավելված 1բ1/](#)

ՄՈՒՀ-ի առաքելության ու նպատակների իրականացման արդյունքների գնահատման տարեկան զեկույցները /[ԳՊՀ հաշվետվություն/](#):

Ռազմավարական ծրագրի իրականացմանն ու որակի ապահովմանը նպաստող մեխանիզմների վերլուծություն (տրամադրել համապատասխան հիմքեր և կատարել հղումներ համապատասխան փաստաթղթերին): Վերլուծել, թե ինչքանով են որակի ապահովման մեխանիզմները նպաստում շարունակական բարելավմանը:

ԳՊՀ-ի առաքելության ու նպատակների իրականացման արդյունքները գնահատվում են ըստ համալսարանի ռազմավարական պլանի համապատասխան նպատակների գնահատման կողմնորոշիչ ցուցանիշների, որոնք ներկայացված են կարճաժամկետ ու երկարաժամկետ ծրագրերով:

Համալսարանի Գիտական խորհուրդը՝ պարբերաբար, ռեկտորատը՝ ըստ անհրաժեշտության գումարված նիստերում քննարկում են վերոնշյալ ծրագրերի իրականացման կատարողականը, կատարում անհրաժեշտ ճշգրտումներ և ընդունում համապատասխան որոշումներ: Համալսարանի խորհրդի կազմում ընդգրկված են ներքին ու արտաքին շահակիցների ներկայացուցիչներ, որոնք իրավասու են մասնակցելու քննարկմանը, ներկայացնելու կարծիք Համալսարանի գործունեության տարբեր ոլորտների վերաբերյալ: Բացի այդ, յուրաքանչյուր հաշվետու տարվա ավարտին ռեկտորի հաշվետվության մեջ մանրամասն ներկայացվում են

ԳՊՀ-ի առաքելության ու նպատակների իրականացման այն գործընթացները, որոնք կատարվել են ընթացիկ տարում: Հաշվետվությունը զեկուցվում է Գիտական խորհրդում, կատարվում են անհրաժեշտ լրացումներ ու ներկայացվում Համալսարանի խորհրդին, որտեղ կատարվում է հաշվետվության մանրամասն քննարկում, ճշտվում են հաջորդ ուսումնական տարվա խնդիրները և դրանց կատարման ժամկետները: Նկարագրված գործընթացը կրում է ցիկլիկ բնույթ [/ԳՊՀ-ի հաշվետվություն/](#):

Ռազմավարական պլանում նախատեսված են նպատակադիր խնդիրների իրականացման, բուհի առաջընթացի գնահատման կողմնորոշիչ ցուցանիշներ, որոնք իրականացվում են կարճաժամկետ (մեկ տարվա) և երկարաժամկետ (հինգ տարվա) կտրվածքներով: Այդ կողմնորոշիչ ցուցանիշները հաջորդում են Ստրատեգիական պլանում ամրագրված բոլոր 8 ռազմավարական նպատակներին :

Չափանիշ 1-ի վերաբերյալ ներկայացնել SWOT վերլուծություն վերջին 5 տարիների համար

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
<p>1. Բուհի ռազմավարական ծրագիրը հիմնականում համապատասխանում է առաքելությանը, նպատակներին ու խնդիրներին: Այն մասը, որը չի արտացոլում բուհի առաքելությունը, լրամշակման փուլում է:</p> <p>2. Ռազմավարական խնդիրների առաջընթացը գնահատող ցուցանիշներ:</p> <p>3. Շրջակա միջավայրի գործոններով պայմանավորված և աշխատաշուկայի պահանջներից բխող ռազմավարական նպատակներ, խնդիրներ ու կրթական ծրագրեր:</p> <p>4. Արտաքին շահակիցների հետ հստակ գործընկերային հարաբերություններ՝ համատեղ ծրագրերի տեսքով:</p> <p>5. Համալսարանի նպատակների և իրականացրած խնդիրների գնահատում, գործընթացների թափանցիկություն և գործիքներ (օրինակ՝ միջանկյալ ու վերջնական զեկույցներ, ինքնագնահատում և արդյունքների հրապարակում):</p>	<p>1. Համալսարանի առաքելության ու դրան համապատասխան ռազմավարական ծրագրերի մշակման փորձառության պակաս:</p> <p>2. Ռազմավարական պլանում ներկայացված խնդիրները ամբողջ համալսարանի համար չեն հանդիսանում ուշադրության օբյեկտ:</p> <p>3. Համալսարանի առաքելությունից բխող խնդիրների ձևավորման մեջ ներքին շահակիցների (հատկապես ուսանողների) ինտերմասնակցություն:</p> <p>4. Բուհի արտաքին շահակիցների կարիքների վերհանման մեխանիզմների անկատարություն:</p> <p>5. Երբեմն շրջակա միջավայրի փոփոխություններին համապատասխան ռազմավարական պլանի ոչ ճկուն փոփոխություններ:</p> <p>6. Բուհի առաքելության ու նպատակների իրականացման արդյունքների գնահատման ու բարելավման մեխանիզմներն ու ընթացակարգերը դեռևս մշակված չեն:</p>

Հնարավորություններ	Վտանգներ
<p>1. ՀՀ-ում մանկավարժական կրթության հետագա զարգացմանն ուղղված պետական ռազմավարական աջակցություն:</p> <p>2. ԳՊՀ-ի շրջանավարտների միության առկայություն:</p> <p>3. Միջազգային կազմակերպությունների կողմից համալսարանի առաքելության իրագործման աջակցությանն ուղղված համապատասխան դրամաշնորհային ծրագրերում ընդգրկվելու հնարավորություն, ինչպես նաև համալսարանի գործունեությանը աջակցող, հովանավորող ծրագրերի ներդրման հնարավորություն:</p> <p>4. Աշխատաշուկայի պահանջներին համապատասխան նոր ՄԿԾ-ների մշակման և իրականացման հնարավորություն:</p>	<p>1. Կրթության բնագավառում, մասնավորապես համալսարանի կազմակերպաիրավական ձևին բնորոշ ուսումնական հաստատությունների գործունեության ոլորտում որոշ խնդիրների առկայություն, որոնց համակարգային լուծում չստանալու պարագայում համալսարանի առաքելության որոշ դրույթների իրագործումը դառնում է անարդյունավետ:</p> <p>2. Համալսարանի առաքելության իրականացման և կրթության զարգացման համար ոչ բավարար մակարդակի ֆինանսավորում:</p> <p>3. Համալսարանի ռազմավարական նպատակների ու խնդիրների ձևավորման և իրականացման գործընթացում արտաքին շահակիցների ոչ բավարար հետաքրքրվածություն:</p> <p>4. Տարածաշրջանի աշխարհաքաղաքական ու տնտեսական բարդ իրավիճակը:</p>

ԳՊՀ-ն հենվելով իր ուժեղ կողմերի վրա, օգտագործելով հնարավորությունները, հաշվի առնելով նաև առկա վտանգները, փորձում է վերանայել իր կողմից տարվող քաղաքականությունը, այն դարձնելով ավելի ճկուն, որը թույլ կտա պահպանել ուժեղ կողմերը, նվազեցնել թույլ կողմերը և վտանգները:

II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը, վարչական կառույցները և դրանց գործառնումն արդյունավետ են և միտված են հաստատության առաքելության ու նպատակների իրականացմանը՝ պահպանելով կառավարման էթիկայի նորմերը:

ՉԱՓՈՐՈՇԻՉ ա. Հաստատության կառավարման համակարգն ապահովում է սահմանված էթիկայի կանոններին համապատասխան որոշումներ կայացնելու կանոնակարգված գործընթաց և ունի կրթական ու այլ նպատակների իրականացման համար անհրաժեշտ մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ:

Հիմքեր.

Կառավարման մարմինների կանոնակարգերը և աշխատակարգերը

ԳՊՀ Խորհրդի, [Գիտական խորհրդի](#) և Ուսանողական խորհրդի կանոնակարգերը /[հավելված 2ա1](#)/:

Ֆինանսների տնօրինման քաղաքականություն և ընթացակարգ / [հավելված 2ա2](#), [Էկամուտների և ծախսերի նախահաշիվ](#) /

Ֆինանսական աուդիտի նշանակման կանոնակարգը և աուդիտի արդյունքները:

ՄՈՒՀ-ի ստորաբաժանումների ցանկը և գործունեության կանոնակարգերը / [հավելված 2ա3](#)/:

Կառավարման մարմինների ընտրության կարգերը / [ԳՊՀ կանոնադրության](#) 15-40 հոդվածներ/:

Կազմակերպական [կառուցվածքի սխեմատիկ պատկերը](#)` ըստ ենթակայության և հաղորդակցության:

ՄՈՒՀ-ի աշխատակիցների աշխատանքի ընդունման, տեղափոխման, հեռացման, առաջխաղացման, խրախուսման ու տույժի կիրառման քաղաքականությունն ու ընթացակարգերը / [ԳՊՀ ներքին աշխատանքային կանոններ](#), էջ 7-9/:

Ներկայացնել կազմակերպական կառուցվածքում ներգրավված մարմինների տեղաբաշխման քարտեզը / [հավելված 2ա6](#)/:

Վերլուծել կազմակերպական կառուցվածքի արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից /: Ինչքանո՞վ է այն նպաստում հաստատության առաքելության արդյունավետ իրականացմանը և որքանո՞վ է այն հասանելի անձնակազմին:

Գործիսի պետական համալսարանի կառավարման և կազմակերպական կառուցվածքի արդյունավետությունը գնահատվում է ըստ համալսարանի ռազմավարական ծրագրի կատարման համար կառավարման մարմիններում ընդունված որոշումների և ստորին օղակներում դրանց իրագործման աստիճանի:

Օրինակ 1. Համալսարանի Խորհուրդը իր աշխատանքային պլանի համաձայն լսում և քննարկում է ԳՊՀ-ի ռեկտորի հաշվետվությունը մեկ ուսումնական տարում կատարած աշխատանքների վերաբերյալ, գնահատում է կատարողականը, նշում թերությունները և ընդունում որոշում` հետագա գործունեության համար:

Օրինակ 2. Համալսարանի Գիտական Խորհուրդը իր աշխատանքային պլանի համաձայն լսում և քննարկում է ֆակուլտետի կամ այլ ստորաբաժանման մեկ ուսումնական տարվա [աշխատանքների հաշվետվությունը](#), գնահատում է կատարողականը, նշում է բացթողումները և թերությունները, ընդունում է որոշում և այն տրամադրում ստորին օղակներին` հետագա աշխատանքային գործունեության համար:

Ընդհանուր առմամբ ընդունված որոշումները որոշակի թերություններով իրագործվում են ստորաբաժանումների կողմից /դա ստուգվում է աշխատանքային պլանի և հաշվետվության համեմատությամբ, ինչպես նաև շահակիցների շրջանում կատարած գրավոր հարցումների վերլուծությամբ/, և կարելի է ընդունել, որ ԳՊՀ կառավարման համակարգը և կազմակերպական կառուցվածքը, ստորաբաժանումների միջև փոխգործակցությունը հնարավորություն են տալիս արդյունավետ կառավարել և կատարել անհրաժեշտ գործառույթներ, որոնք միտված են համալսարանի նպատակների իրականացմանը և դրա համար համալսարանն ունի բավարար մարդկային և նյութական ռեսուրսներ: Մակայն բավարար մարդկային և նյութական ռեսուրսների կողքին համալսարանը չունի անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսներ փոքր բյուջեի պատճառով, չունի կառավարման էլեկտրոնային համակարգ, և փաստաթղթաշրջանառությունը կատարվում է ուշացումներով: Ֆինանսական միջոցների սղության պատճառով

ստորաբաժանումներում բացակայում են որոշ հաստիքներ, կամ աշխատանքները կատարվում են հասարակական հիմունքներով, ինչը հանգեցնում է կառավարման արդյունավետության նվազմանը:

Չափորոշիչ Բ.ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը հնարավորություն է տալիս դասախոսներին և ուսանողներին մասնակցել իրենց առնչվող որոշումների կայացմանը:

Հիմքեր

Դասախոսների և ուսանողների մասնակցությունն ապահովող կարգերը.

ԳՊՀ Խորհրդի կանոնակարգ [/հավելված 2ա1.1/](#),

[ԳՊՀ Գլխական Խորհրդի կանոնակարգ](#),

ԳՊՀ Ուսանողական Խորհրդի կանոնակարգ [/հավելված 2ա1.3/](#),

ԳՊՀ ֆակուլտետի գործունեության կանոնակարգ [/հավելված 2ա3.3/](#),

ԳՊՀ ամբիոնի գործունեության կանոնակարգ [/հավելված 2ա5/](#),

Որոշում կայացնելու գործընթացներում ուսումնառողների և դասավանդողների մասնակցությունը երաշխավորող քաղաքականությունը և ընթացակարգերը /ատկայության դեպքում/:

Ներկայացնել որոշում կայացնելու գործընթացում դասավանդողների և ուսումնառողների ներգրավվածության արդյունավետության վերլուծությունը:

ԳՊՀ կառավարման մարմիններում ստորաբաժանումների ղեկավարների, դասախոսների և ուսանողների ներգրավվածությունը վճռական ձայնի իրավունքով հնարավորություն է տալիս նրանց մասնակցելու իրենց առնչվող բոլոր հարցերի քննարկմանը, ներկայացնելու առաջարկներ և մասնակցելու քվեարկություններին: Այդ պայմաններում ընդունված որոշումները ներկայացնում են բոլոր ներքին շահակիցների կարիքները, լինում են անաչառ և իրագործելի: Կառավարման համակարգին ուսումնառողների և դասավանդողների մասնակցությունը զարգացնում է նրանց ինքնուրույնությունը, նախաձեռնողական ու կառավարման հմտությունները, բարելավում է կառավարման համակարգը, օպտիմալացնում է վարչարարությունը, ապահովում է թափանցիկությունն ու հրապարակայնությունը:

Սակայն անհրաժեշտ է նշել, որ դասախոսների և ուսանողների ակտիվությունն ու նախաձեռնողականությունը նիստերում քննարկվող հարցերի շուրջ դեռևս բարձր չէ: Դասախոսները ակտիվ են միայն ամբիոնի և ֆակուլտետի խորհրդի նիստերում: Քննարկվում են մեխանիզմներ՝ նրանց ակտիվությունն ու նախաձեռնողականությունը բարձրացնելու համար:

ՉԱՓՈՐՈՇԻՉ Գ.ՄՈՒՀ-ը մշակում և իրականացնում է կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ պլանավորում՝ առաքելությանն ու նպատակներին համապատասխան և ունի դրանց իրականացման ու մշտադիտարկման հստակ մեխանիզմներ:

Հիմքեր.

1. Գործողությունների կարճաժամկետ ծրագիրը և իրականացման հիմքերը / [հավելված 2գ.1](#), ըստ ամիսների պլաններ/,

2. Գործողությունների միջնաժամկետ ծրագիրը և իրականացման հիմքերը / [հավելված 2գ.2](#), տարեկան պլաններ/,

3. Գործողությունների երկարաժամկետ ծրագիրը և իրականացման հիմքերը/ [ԳՊՀ հայեցակարգ 2011-2016թթ.](#):/

Վերլուծել պլանավորման և վերջիններիս իրականացման արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/: Ինչքանով է այն նպաստում հաստատության առաքելության արդյունավետ իրականացմանը:

Գործիսի պետական համալսարանն իր առաքելությունն ու նպատակները իրականացնելու համար կատարում է աշխատանքների պլանավորում՝ երեք մակարդակներով:

Երկարաժամկետ պլանի իրականացման և մշտադիտարկման համար հիմք են հանդիսանում հայեցակարգում ամրագրված առաջընթացի գնահատման կողմնորոշիչ ցուցանիշները հնգամյա ժամկետում՝ յուրաքանչյուր նպատակի և խնդրի համար / [ԳՊՀ հայեցակարգ 2011-2016թթ.](#) էջ 13-27/: Ռազմավարական պլանի կատարողականը գնահատվում և իրականացման արդյունավետությունը ներկայացվում է նախ ստորաբաժանումների, հետո համալսարանի գործունեության վերաբերյալ [տարեկան հաշվետվություններում](#) :

Այդ հաշվետվությունների հիման վրա կատարվում են ինքնավերլուծություններ՝ թերությունների նշումով, որոնք հաշվի են առնվում հաջորդ երկարաժամկետ պլանավորման ժամանակ: Ինքնավերլուծությունները կազմելիս հաշվի են առնվում նաև ներքին և արտաքին շահակիցների շրջանում կատարված գրավոր հարցումները և պետական քննական հանձնաժողովների նախագահների հաշվետվությունները /[հավելվածներ 1բ1, 2գ3](#)/: Պլանավորման, իրականացման և մշտադիտարկման գործընթացի շարունակականությունն ապահովում է գործող մեխանիզմի արդյունավետությունը:

Ամեն կիսամյակի համար ռեկտորի հրամանով հաստատվում են ուսումնական գործընթացի կազմակերպման և ֆակուլտետների կողմից ուսումնական վարչություն համապատասխան փաստաթղթերի ներկայացման ժամանակացույցները: Ժամանակացույցում նշված ժամկետները չպահպանելը դիտվում է որպես կատարողական կարգապահության խախտում և քննարկվում է ռեկտորատի նիստում:

ԶԱՓՈՐՈՇԻՉ ղ.ՄՈՒՀ-ը կատարում է իր գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրություն և որոշումներ կայացնելիս հիմնվում է հավաստի տվյալների վրա:

Հիմքեր.

ՄՈՒՀ-ի գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրության համար կիրառվող մեխանիզմները և գործիքները,

Պլանների գնահատման և վերանայման՝ պաշտոնապես ընդունված քաղաքականությունը (առկայության դեպքում),

Այլ հիմքեր և վերլուծություններ:

Նշել վերջին երեք տարիներին հաստատության գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրությունների արդյունքները և դրանց արտացոլումը ռազմավարական ծրագրում:

ԳՊՀ կառավարման համակարգում որոշումների կայացումը կատարվում է կանխատեսման, պլանավորման, կազմակերպման, ընդհանուր ղեկավարության, վերահսկողության ու հաշվետվողականության կառավարչական գործառնությունների իրականացմամբ, ինչը հնարավորություն է տալիս հավաքելու հավաստի տվյալներ և հաշվի առնելու ազդող գործոնները, որոնք հիմնավորում են կայացված որոշումները և ապահովում են դրանց կատարման արդյունավետությունը: Արտաքին և ներքին միջավայրային փոփոխությունները մեծապես ազդում են համալսարանի տարբեր ոլորտների գործունեության վրա: Համալսարանի

գործունեության վրա ազդող գործոնների մշտադիտարկումը, ուսումնասիրությունն ու վերլուծությունը համալսարանում պարբերաբար իրականացվող շարունակական գործընթացներ են:

Ուսուցման որակի վրա ազդող գործոնների բացահայտման նպատակով համալսարանի նախկին շրջանավարտների և գործատուների շրջանում անցկացվում են հարցումներ [/հավելված 2գ4/](#)՝ պարզելու համար նրանց բավարարվածությունը համալսարանում ուսանողների ստացած գիտելիքներից ու կարողություններից: Իսկ ներքին գործոնների ուսումնասիրման համար անցկացվում են հարցումներ ուսանողության շրջանում՝ [/հավելված 2գ4/](#) պարզելու նրանց բավարարվածությունը ուսումնական ծրագրերից, դասախոսների մասնագիտական պատրաստականությունից, գրադարանային սպասարկումից, լաբորատորիաների և լսարանների վիճակից: Հարցումներից ստացած տվյալների վերլուծության արդյունքների հիման վրա կատարվում են ճշգրտումներ տարեկան և 5-ամյա ծրագրերում: Պարբերաբար հարցումներ կատարվում են հարցումներ «Դասախոսը ուսանողի աչքերով» թեմայով, որը նպատակ ունի գնահատելու դասախոսի աշխատանքի որակը: Համալսարանի գործունեության վրա ազդող արտաքին (ընդունելություն, ֆինանսավորման համակարգ, անկանխատեսելի իրավիճակներ, աշխատաշուկայի և հասարակական պահանջներ, օրենսդրական փոփոխություններ և այլն) և ներքին (պրոֆեսորադասախոսական կազմի հոսունություն, ծերացում, լաբորատոր գործիքակազմի ապահովվածություն, օժանդակ ենթակառուցվածքների աշխատանքի կազմակերպման արդյունավետություն և այլն) միջավայրի գործոնները ուսումնասիրվում և վերլուծվում են համալսարանի միջազգային համագործակցության և կրթական որակի ապահովման բաժնի կողմից: Ներկայումս մշակվում են առաջավոր մեխանիզմներ ու գործիքներ՝ ուսումնասիրելու եվրոպական ՄՈՒՀ-երի փորձը:

Քանի որ այս ուղղությամբ աշխատանքները սկսվել են 2013թ.-ին, ներկայումս կատարվում են վերլուծություններ, մշակվում են նոր մեխանիզմներ, և ուսումնասիրությունների արդյունքները կարտացոլվեն համալսարանի 2016-2021 թթ. ռազմավարական ծրագրում:

ՉԱՓՈՐՈՇԻՉ Է. Քաղաքականության և ընթացակարգերի վարչարարությունն իրականացվում է որակի կառավարման սկզբունքով (պլանավորում, իրականացում, գնահատում, բարելավում): Հիմքեր.

- 1.ՄՈՒՀ-ի կառավարման և վարչարարության որակի ապահովման քաղաքականությունը և ընթացակարգերը,
 - 2.Քաղաքականության և ընթացակարգերի իրականացման սկզբունքները,
 - 3.Քաղաքականության և ընթացակարգերի իրականացման մեխանիզմները,
- Այլ հիմքեր և վերլուծություններ:

Վերլուծել որակի ապահովմանը նպաստող մեխանիզմների արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից /: Նշել, թե ինչքանով են որակի ապահովման մեխանիզմները նպաստում շարունակական բարելավմանը:

ԳՊՀ վերջին տարիների վարչարարության քաղաքականության հիմքում ընկած է որակի կառավարման «պլանավորում, իրականացում, գնահատում, բարելավում» սկզբունքը:

Համալսարանական կառավարումը հիմնված է ինքնավարության վրա՝ միանձնյա և կոլեգիալ կառավարման սկզբունքների գուգակցմամբ, հիմնադրի, լիազոր մարմնի, ԳՊՀ խորհրդի և գիտական խորհրդի, ռեկտորի գործառույթների իրականացմամբ: Այդ մարմիններից

յուրաքանչյուրն ունի կանոնադրությամբ և իրենց աշխատակարգերով ու կանոնակարգերով սահմանված իրավասություններ համալսարանի կառավարման գործում:

Բոլոր պլանները իրականացվում են՝ ըստ մշակված և կառավարման մարմինների կողմից հաստատված միջոցառումների ժամանակացույցի: Կատարված աշխատանքների որակը գնահատվում են տարեկան վերլուծությունների ու հաշվետվությունների միջոցով՝ ըստ նախանշված ցուցանիշների: Գնահատվում են Համալսարանի գործունեության արդյունավետությունը, արձանագրված առաջընթացն ու հաջողությունները, ինչպես նաև բացահայտվում են թերություններն ու բացթողումները:

Թերությունների վերացման ու գործունեության բարելավման համար կատարվում են համապատասխան փոփոխություններ հաջորդ տարվա աշխատանքային պլանում՝ դրանով իսկ ապահովելով Համալսարանի գործունեության շարունակական բարելավման գործընթացը:

Օրինակ՝ Համալսարանի ֆակուլտետի կազմում գործող յուրաքանչյուր ամբիոն, հիմք ընդունելով ֆակուլտետի հնգամյա ռազմավարական ծրագիրը, յուրաքանչյուր ուսումնական տարվա համար մշակում և ֆակուլտետի խորհրդի հաստատմանն է ներկայացնում իր գործունեության աշխատանքային պլանը և դրա իրականացման միջոցառումների ծրագիրը:

Ուսումնական տարվա ավարտին ամբիոնը կատարած ուսումնական, գիտական և այլ աշխատանքների կատարողականի վերաբերյալ ֆակուլտետի խորհրդին է ներկայացնում վերլուծական հաշվետվություն: Ֆակուլտետի ղեկանը ամբիոնների հաշվետվությունների հիման վրա կազմում է ֆակուլտետի ուսումնական տարվա գործունեության վերաբերյալ հաշվետվություն, որը քննարկվում է ֆակուլտետի խորհրդի նիստում: Քննարկման արդյունքում գնահատվում է ինչպես առանձին ամբիոնների, այնպես էլ ֆակուլտետի գործունեությունը, արձանագրվում են ձեռք բերված հաջողությունները՝ միաժամանակ վերհանելով ամբիոնների կամ ֆակուլտետի աշխատանքներում առկա թերացումներն ու բացթողումները, որոնց հիման վրա մշակվում են հանձնարարականներ ու երաշխավորություններ /որոշման նախագծեր/՝ ուղղված ամբիոնների կամ ֆակուլտետի գործունեության բարելավմանը, որոնք հաշվի են առնվում հաջորդ ուսումնական տարվա աշխատանքային պլանները մշակելիս:

Ֆակուլտետի խորհրդի նիստում կարող են ներկայացվել նաև առաջարկություններ՝ ուղղված համալսարանի ընդհանուր գործունեության բարելավմանը, և որոնք կարող են հաշվի առնվել համալսարանի ռազմավարական ծրագրում:

Բոլոր ֆակուլտետների տարեկան գործունեության հաշվետվությունները լսվում, քննարկվում և գնահատվում են Գիտական Խորհրդում: Գիտական խորհուրդը արձանագրված բացթողումների ու թերությունների վերացման և կրթության որակի բարելավման համար կազմում է որոշման նախագիծ, այսինքն՝ հանձնարարականներ հաջորդ ուսումնական տարվա աշխատանքային պլանների արդյունավետ կատարման համար:

Ստորաբաժանումների հաշվետվությունների հիման վրա ռեկտորը կազմում և Խորհրդի քննարկմանն է ներկայացնում համալսարանի գործունեության տարեկան հաշվետվությունը:

Խորհուրդն իր հերթին գնահատում է կատարած աշխատանքները և կազմում որոշման նախագիծ՝ ուղղված ուսումնակրթական գորընթացի հետագա բարելավումներին ու զարգացումներին:

Որակի ապահովմանը նպաստող վերոնշյալ մեխանիզմները իրագործման որոշ ուղղություններում արդյունավետ են, մի շարք ուղղություններում՝ ոչ:

ՉԱՓՈՐՈՇԻՉ զ. ՄՈՒՀ- ում գործում են մասնագիտությունների կրթական ծրագրերի և այլ գործընթացների արդյունավետության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումը, վերլուծումը և կիրառումը գնահատող մեխանիզմներ:

Հիմքեր.

Մասնագիտությունների կրթական ծրագրերի գնահատման մեխանիզմները / [հավելված 2գ3](#), [հավելված 2գ4](#)/:

Այլ գործընթացների արդյունավետության գնահատման մեխանիզմները / [հավելված 2գ4](#)/:

Տեղեկատվության հավաքագրման համակարգը / [հավելված 2գ3.1](#), [հավելված 2գ3.2](#), [հավելված 2գ3.3](#), [հավելված 2գ3.4](#) /:

Համապատասխան վերլուծություններ:

Վերլուծել ՄՈՒՀ-ում գործող մասնագիտությունների կրթական ծրագրերի և այլ գործընթացների գնահատման մեխանիզմների արդյունավետությունը / կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Մասնագիտությունների կրթական ծրագրերի և այլ գործընթացների արդյունավետության գնահատման համար անհրաժեշտ տեղեկատվության հավաքագրման ավելի արդյունավետ ու ճկուն մեխանիզմները մշակման փուլում են:

2011 թվականին առաջին անգամ ԳՊՀ-ի բոլոր ստորաբաժանումները կատարել են ինքնավերլուծություններ՝ ուժեղ և թույլ կողմերի, արտաքին վտանգների և հնարավորությունների /ՈՒԹՎՀ SWOT/ ձևաչափով: Այն հնարավորություն է տվել իրատեսորեն գնահատելու ընթացիկ աշխատանքները, վերհանելու թերություններն ու բացթողումները, նշելու արտաքին վտանգները, որոնք ազդում են համալսարանի գործունեության վրա և արտաքին հնարավորությունները, որոնք կարող են նպաստել համալսարանի գործունեության բարելավմանը և կրթության որակի բարձրացմանը:

Նախատեսվում է կանոնավոր կերպով, տարին մեկ անգամ՝ ուսումնական տարվա վերջում, կատարել նման ինքնավերլուծություններ:

Մասնագիտությունների կրթական ծրագրերի և այլ գործընթացների գնահատման գործող մեխանիզմները /բանավոր և գրավոր հարցումներ, պրակտիկայի օրագրեր, ատեստավորման հանձնաժողովների նախագահների հաշվետվություններ, ինքնավերլուծություններ/ չեն ապահովում բարձր արդյունավետություն, և ներկայումս մշակվում են առավել ճկուն մեխանիզմներ, որոնք հնարավորություն կտան պարբերաբար արդիականացնելու վարչարարության մեթոդները, գործող կրթական ծրագրերի բովանդակությունը, բարելավելու դրանց որակը՝ համապատասխանեցնելով տարածաշրջանում աշխատաշուկայի և տնտեսական զարգացման պահանջներին և անհրաժեշտության դեպքում մշակելու ու ներդնելու նոր մասնագիտություններ (կրթական ծրագրեր): Գործատուների շրջանում անցկացրած գրավոր հարցումներից պարզվել է, որ շրջանավարտների տեսական գիտելիքները բարձր են, իսկ պրակտիկ գիտելիքները՝ ցածր: Այդ հանգամանքը հաշվի կառնվի հաջորդ հինգ տարիների ռազմավարական ծրագրում:

ԶԱՓՈՐՈՇԻՉ Է. ՄՈՒՀ-ում գործում են կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների որակի մասին թարմացված, օբյեկտիվ և անկողմնակալ, քանակական և որակական տեղեկատվության հրապարակումները գնահատող մեխանիզմներ:

Հիմքեր.

Հրապարակային տեղեկատվության տարածման քաղաքականությունը և ընթացակարգերը, Հրապարակումների մատչելիությունը և օբյեկտիվությունը գնահատող մեխանիզմները:

Վերլուծել ՄՈՒՀ- ի կողմից սրամատրված որակական և քանակական տեղեկատվության հրապարակումների գնահատման մեխանիզմների արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Գործիսի պետական համալսարանը վերջին տարիներին պատշաճ ուշադրություն է դարձրել կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների հրապարակման ու լուսաբանման միջոցներին: Ստեղծվել է միջազգային համագործակցության և կրթության որակի ապահովման բաժին, որի նախաձեռնությամբ 2011 թվականին առաջին անգամ ԳՊՀ-ի բոլոր ստորաբաժանումները կատարել են ինքնավերլուծություններ՝ ուժեղ և թույլ կողմերի, արտաքին վտանգների և հնարավորությունների /ՈՒԹՎՀ SWOT/ ձևաչափով:

Ներկայումս համալսարանում առկա են կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների որակի մասին տեղեկատվության հրապարակման հետևյալ միջոցները.

1. Մասնագիտական կողմնորոշումները, որոնք ԳՊՀ-ի կողմից պարբերաբար անցկացվում են տարածաշրջանի դպրոցներում ու քոլեջներում,
2. [ԳՊՀ-ի հնգամյա ռազմավարական պլան](#) / էջ 12,13/,
3. Համալսարանի ֆակուլտետների գործունեության վերաբերյալ [տարեկան հաշվետվություններ](#), որոնցում տեղ է հատկացվում նաև ֆակուլտետներում կրթական ծրագրերի իրականացման գործընթացների և դրանց որակի գնահատման ու հսկման նպատակով անցկացվող ինքնավերլուծության հարցերին,
4. Համալսարանի գործունեության վերաբերյալ [տարեկան հաշվետվություններ](#), որոնցում նույն գործընթացներն արտացոլվում են համալսարանի մակարդակով,
5. Ներքին և արտաքին շահակիցների շրջանում անցկացված սոցիոլոգիական հարցումների հրապարակում/[հավելված 2գ4](#) /,
6. ԳՊՀ-ի ինտերնետային կայքէջ (www.gorsu.am), որը համալսարանի գործունեության լուսաբանման, թափանցիկության ապահովման ամենամատչելի և ամենակարևոր միջոցն է,
7. «Գործիսի պետական համալսարան» պաշտոնաթերթ, որում հրապարակվում են համալսարանի գործունեության վերաբերյալ նյութեր, այդ թվում՝ կրթության որակի բարձրացման միջոցառումները:

Ուսումնառության արդյունքների և ուսուցման արդյունավետության գնահատման հավաստիության ու որակի բարձրացման նպատակով ԳՊՀ Գիտական խորհրդի և Ռեկտորատի նիստերում պարբերաբար տեղի են ունենում քննարկումներ և ընդունվում են որոշումներ, որոնք ուղղված են ուսանողների ընթացիկ և ամփոփիչ գնահատման ու ատեստավորման մեխանիզմների, գործընթացների արդիականացմանն ու կատարելագործմանը:

Համալսարանում շնորհվող որակավորումների որակի գնահատման համար տեղեկատվական կարևոր սկզբնաղբյուր է ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահների հաշվետվությունները / [հավելված 2գ3](#) /:

Չափանիշ 2-ի վերաբերյալ ներկայացնել SWOT վերլուծություն վերջին 3 տարիների համար:

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
--------------	--------------

<p>1. Կառավարման մարմինների հստակ ձևակերպված ու հաստատված կանոնադրությունները և աշխատակարգերը, 2. Կառավարման մարմինների ընտրության հստակ ձևակերպված ու հաստատված կարգերը, 3. Համալսարանի առաքելությանը և նպատակներին համահունչ կազմված երարաժամկետ, միջնաժամկետ և կարճաժամկետ պլանները և ուսումնական ծրագրերը, 4. Փորձառու և որակյալ վարչական անձնակազմի առկայություն, 5. Կառավարման մարմիններում ներքին շահակիցների կանոնակարգված մասնակցություն, 6. Որակի կառավարման և վերահսկման կառույցի առկայություն, 7. Ուսանողական զարգացող ինքնավարություն և մասնակցություն համալսարանի կառավարման գործընթացին:</p>	<p>1. Կառավարման էլեկտրոնային համակարգի բացակայություն, 2. Կառավարման համակարգի համար ոչ բավարար ֆինանսական միջոցներ, 3. Որոշում կայացնելու գործընթացներում դասախոսի և ուսանողի մասնակցությունը երաշխավորող քաղաքականության և ընթացակարգերի բացակայություն, 4. Մասնագիտությունների կրթական ծրագրերի և այլ գործընթացների արդյունավետության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման, վերլուծման ու գնահատման մեխանիզմների առավել արդյունավետ աշխատակարգերի բացակայություն, 5. Վարչական կառույցների գործունեության արդյունավետության գնահատման հստակ մեխանիզմների բացակայություն, 6. Հետադարձ կապի ապահովման մեխանիզմների անկատարություն:</p>
Հնարավորություններ	Վտանգներ
<p>1. Կառավարման գործընթացների միջազգային փորձի ուսումնասիրություն և կիրառում, 2. ՀՀ կառավարության և կրթության ու գիտության նախարարության ներկայացուցիչների մասնակցությունը համալսարանի Խորհրդին, 3. Որակի ապահովման ազգային կենտրոնի հետ համագործակցություն:</p>	<p>1. Համալսարանի կառավարման համակարգի գործունեության արդյունավետության կախվածություն ընդունելության ցուցանիշներից՝ ֆինանսական ներհոսքի առումով, 2. Ազգային կրթական օրենսդրության անհամապատասխանություն եվրոպական չափանիշներին, 3. ՀՀ կառավարության, կրթության ու գիտության նախարարության, մարզային իշխանությունների ոչ բավարար աջակցություն համալսարանի խնդիրների լուծմանը:</p>

III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄԿԾ-երը համապատասխանում են հաստատության առաքելությանը, կազմում են հաստատության պլանավորման բաղկացուցիչ մաս և նպաստում են շարժունությանը և միջազգայնացմանը:

ՉԱՓՈՂՈՇԻՉ ա. ՄՈՒՀ-ի մասնագիտությունների կրթական ծրագրերը համահունչ են առաքելությանը, համապատասխանում են պետական կրթական չափորոշիչներին, մանրամասն նկարագրված են՝ ըստ շնորհվող որակավորումների ակնկալվող ուսումնառության արդյունքների:

Հիմքեր

Մասնագիտության կրթական ծրագրի նկարագիրը [/Հավելված 3ա1/](#)

Մասնագիտության կրթական ծրագրի համար առաջավոր փորձի համեմատական վերլուծության (բենչմարքինգի) իրականացման քաղաքականությունը, ընթացակարգերը և կատարված աշխատանքի հիմքերը:

Վերլուծել ՄԿԾ-ում նշված ուսումնառության ակնկալվող արդյունքների համահունչությունը հաստատության առաքելության հետ և համադրելիությունը պետական կրթական չափորոշիչներին և Որակավորումների ազգային շրջանակի հետ:

ԳՊՀ-ի մասնագիտական կրթական ծրագրերը համահունչ են համալսարանի առաքելությամբ սահմանված գործունեության հիմնական ուղղություններին: Համալսարանի գործունեության գերակա նպատակներից են հայագիտության, հումանիտար, բնագիտական, ճարտարագիտական, մանկավարժական և տնտեսագիտական գիտությունների զարգացումը տարածաշրջանում, ինչպես նաև բարձրորակ կրթության ապահովումը համալսարանում:

Գործիսի պետական համալսարանը կրթություն է իրականացնում բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով:

Բակալավրի կրթական ծրագրով կրթությունն իրականացվում է 11 առկա և 9 հեռակա, իսկ մագիստրոսի կրթական ծրագրով՝ 8 մասնագիտությունների գծով:

Կրթության իրականացման համար հիմք են հանդիսանում Հայաստանի Հանրապետության Կրթության և գիտության նախարարության կողմից տրված [սրտոնագրերը](#):

Մինչև 2007-2008 ուսումնական տարին ԳՊՀ-ում դասընթացները կազմակերպվում էին այն ուսումնական պլաններով, որոնք մշակվել էին ԳՊՀ-ի՝ ՀՊՃՀ-ի կազմում (ՀՊՃՀ-ի Գործիսի կրթահամալիր) գործելու տարիներին: 2007թ.-ի փետրվարին ԳՊՀ-ի Գիտական խորհուրդը հաստատեց համալսարանում կրեդիտային համակարգի ներդրման ժամանակացույցը (տես [գիտխորհրդի համապատասխան որոշումը](#), ըստ որի՝ բակալավրիատության և մագիստրատության կրեդիտային հենքով ուսումնառության կազմակերպումը պետք է սկսվի 2008թ.-ի սեպտեմբերից: Այդ նպատակով ԳՊՀ-ի Գիտական խորհրդին [կից ստեղծվեց հանձնաժողով](#), որը մշակեց [«Գործիսի պետական համալսարանի կրեդիտային հենքով](#)

[ուսումնասրության ուղեցույց](#)»-ը (2007թ.-ի դեկտեմբեր): Հանձնաժողովը, համագործակցելով համալսարանի ֆակուլտետների և այլ ստորաբաժանումների հետ, ուսումնասիրելով գործող կրթական համակարգը և միջազգային փորձը, բակալավրիատության և մագիստրատության առկա կրթաձևի բոլոր մասնագիտությունների համար մշակեց կրեդիտա-մոդուլային հենքով ուսումնական պլաններ՝ ուղենիշ ունենալով դրանց մոդուլացումը ուսանողի լրիվ ուսումնական բեռնվածությունն արտահայտող ECTS կրեդիտներով: Այսպիսով, կրեդիտային համակարգը Գորիսի պետական համալսարանի առկա կրթաձևում ներդրվեց 2008-2009 ուսումնական տարվանից:

Հեռակա ուսուցման կրթաձևում կրեդիտային համակարգը ներդրվեց ավելի ուշ՝ 2012-2013 ուսումնական տարվանից: Այդ նպատակով նախապես մշակվեցին բակալավրիատության հեռակա ուսուցման բոլոր մասնագիտությունների ուսումնական պլանները:

Բոլոր կրթական ծրագրերում և ուսուցման ձևերում կրեդիտային համակարգի ներդրմանը գույքընթաց աշխատանքներ էին իրականացվում նաև նոր մասնագիտությունների կրթական ծրագրերի մշակման ուղղությամբ: Արդյունքում ԳՊՀ-ում վերջին տարիներին ներդրվեցին մի շարք մասնագիտություններ, որոնք համապատասխանում են տարածաշրջանի աշխատաշուկայի ժամանակակից պահանջներին՝ «Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում», «Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա», «Դեղագործական քիմիա», «Ֆիզիկա», «Կրթության կառավարում»:

ԳՊՀ-ում գործող մասնագիտությունների ուսումնական պլանները պարբերաբար վերանայվում են՝ պայմանավորված տարածաշրջանի աշխատաշուկայի պահանջարկի փոփոխմամբ և արտաքին ու ներքին շահակիցների կարիքների վերհանմամբ:

Ծրագրային բարեփոխումների հաջորդ փուլը (2013թ.-ից) պայմանավորված էր կրթական վերջնարդյունքների հիմքով ծրագրերի վերափոխմամբ՝ հիմք ունենալով ՀՀ պետական չափորոշիչները և Որակավորումների ազգային շրջանակը: Համալսարանում մշակվեց և 2013թ.-ի հուլիսին ընդունվեց «ԳՊՀ մասնագիտական կրթական ծրագրերի մշակման մեթոդական ուղենիշ»-ը, որը հիմք հանդիսացավ կրթական վերջնարդյունքներով ծրագրերի վերափոխման համար: Ուղենիշը պարունակում է Գորիսի պետական համալսարանի կրթական ծրագրերի մշակման ձևը, կառուցվածքը և ներկայացվող հիմնական պահանջները: Փաստաթուղթը ԳՊՀ-ի բոլոր կրթական ծրագրերի համար սահմանում է նաև համապատասխան մասնագրի (սպեցիֆիկացիայի) պարտադիր առկայություն:

Ներկայացնել այն կազմակերպությունների ցանկը (նշելով երկիրը), որոնց օրինակով ՄՈՒՀ-ը կատարել է մասնագիտությունների կրթական ծրագրերի առաջավոր փորձի համեմատական վերլուծություն (բենչմարքինգ):

Գորիսի պետական համալսարանը անդամակցում է ՀՀ մանկավարժական ուսուցում իրականացնող ԲՈՒՀ-երի կոնսորցիումին: Ըստ մասնագիտությունների՝ ստեղծվել են հանձնաժողովներ, որոնց աշխատանքներին մասնակցում են Գորիսի պետական համալսարանի մասնագետները: Կոնսորցիումի շրջանակներում ուսումնասիրվել են մի շարք կազմակերպությունների փորձը (Սանկտ Պետերբուրգի Գերցենի անվան մանկավարժական համալսարան (www.herzen.spb.ru), Ֆինլանդիայի Օուլուի համալսարան (www.oulu.fi): Ճարտարագիտական մասնագիտությունների գծով համագործակցում ենք Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի հետ: Ճարտարագիտական մասնագիտությունների ՄԿԾ-ները կազմելիս ուսումնասիրել ենք նաև ԱՄՆ-ի պոլիտեխնիկական համալսարանի (www.csupomona.edu), Մոսկվայի Բաուսնի անվան տեխնիկական համալսարանի(www.bmstu.ru) փորձը:

Գործիսի պետական համալսարանի տնտեսագիտության և ճարտարագիտության ֆակուլտետը համագործակցում է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի, Արցախի պետական համալսարանի, Մանկո-Պետերբուրգի տնտեսագիտական-ճարտարագիտական համալսարանի հետ: Նշված բուհերի հետ կնքված [պայմանագրերը](#) հնարավորություն են տվել հաստատելու գործընկերային հարաբերություններ, որոնք նպաստում են ուսումնական, գիտամեթոդական աշխատանքների արդյունավետ կազմակերպմանը, մասնագիտական կրթական ծրագրերի մշակմանը:

«Դեղագործական քիմիա» մասնագիտության ՄԿԾ-ը համահունչ է ԵՊՀ-ի նույն մասնագիտության կրթական ծրագրին: 2008-2009 ուսումնական տարում այն կազմվել և ներդրվել է ԵՊՀ-ում, իսկ 2009-2010 ուսումնական տարում՝ Գործիսի պետական համալսարանում:

ՉԱՓՈՂՈՇԻՉ ք.ՍՈՒՀ-ն ունի մասնագիտությունների կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության քաղաքականություն, որը նպաստում է ուսանողակենտրոն ուսուցմանը:

Հիմքեր.

Ուսումնառության արդյունքները և նրանց համապատասխան դասավանդման և ուսումնառության մոտեցումները և մեթոդները (պատահականության սկզբունքով ՈԱԱԿ-ի կողմից ընտրված 3 ՄԿԾ-ների համար) / [հավելվածներ 3բ2, 3բ3](#)/,

Դասավանդման և ուսումնառության մոտեցումների և մեթոդների շարունակական արդիականացման քաղաքականությունը և ընթացակարգերը /[Հավելված 3բ4,3բ5](#)/,

Դասավանդման նյութերի և ռեսուրսների արդիականացման քաղաքականությունը և ընթացակարգերը /[հավելված 2գ4](#) /,

Համապատասխան հիմքեր:

Վերլուծել ՄԿԾ-ում նշված դասավանդման և ուսումնառության մեթոդների արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Կրթական ծրագրերի՝ ակնկալվող արդյունքներին հասնելու համար ընտրված դասավանդման և ուսումնառության մոտեցումների և մեթոդների շարունակական բարեփոխումները նպատակ ունեն բարձրացնելու ուսման որակը և այն մոտեցնելու եվրոպական չափանիշներին, ինչի համար էլ ԳՊՀ-ի 2011-2016 թթ. հայեցակարգում ամրագրված են այդ դրույթները /«[Կրթական համակարգի զարգացումը](#)» բաժինը/։ Մինչև 2012-2013 ուսումնական տարին ուսումնական գործընթացի կազմակերպման համար հիմք են հանդիսացել ամբիոնների, ֆակուլտետների և ուսումնական վարչության համատեղ ջանքերով մշակված մասնագիտությունների ուսումնական պլանները, որոնցում հաշվի են առնվել [ՀՀ ԿԳՆ կողմից հաստատված պետական կրթական չափորոշիչները](#) և [որակավորումների ազգային շրջանակի մակարդակների բնութագրիչները](#): Պետական կրթական չափորոշիչներում ներկայացված են նաև դասընթացների նպատակը, առարկայական ծրագրերը, մատուցվող թեմաները, դասավանդման և ուսումնառության մեթոդները, ակնկալվող վերջնարդյունքները, նախապայմանները և կրեդիտները: Քանի որ ուսումնառության ակնկալվող արդյունքները ձևավորվում են ծրագրում ընդգրկված դասընթացների միջոցով, ապա ընտրվում են դրանց դասավանդման և ուսումնառության այնպիսի մեթոդներ, որոնք հանգեցնում են սպասվող արդյունքներին: Կախված դասընթացի նպատակից ու առանձնահատկություններից՝ օգտագործվում են այս կամ այն մեթոդները: Տեսական գիտելիքների ձեռքբերման համար

օգտագործվում են դասախոսություններ, սեմինարներ, լրացուցիչ գրականության մշակումներ: Գործնական գիտելիքների ձեռքբերման համար օգտագործվում են գործնական և լաբորատոր պարապմունքներ, պրակտիկաներ, կուրսային նախագծեր /աշխատանքներ/, ավարտական աշխատանքներ, ռեֆերատներ, քննարկումներ, թիմային և ինքնուրույն աշխատանքներ:

Դասավանդման և ուսումնառության արդյունավետությունը գնահատվում է՝ ըստ առանձին մոդուլների և կրթական ծրագրից ուսանողների ձեռքբերած գիտելիքների, կարողությունների և հմտությունների: Դրա չափման համար քննաշրջաններից հետո ամբիոններում, ֆակուլտետներում և գիտխորհրդում կատարվում են ուսման առաջադիմության վերլուծություններ, իրականացվում են [հարցումներ ուսանողների շրջանում](#): Կրթական ծրագրի արդյունավետության չափման համար հիմք են հանդիսանում ամփոփիչ ատեստավորման արդյունքները, [քննական հանձնաժողովների նախագահների հաշվետվությունները](#) և [գործատուների շրջանում անցկացված հարցումները](#) :

[Հավելված 3բ4](#)-ում ներկայացված են մի քանի մասնագիտությունների ուսումնառության արդյունքների, դասավանդման և ուսումնառության մեթոդների աղյուսակը: [Հավելված 3բ5](#)-ում ներկայացված են ՄԿԾ-ով նախատեսված որոշ դասընթացների և ուսումնառության ակնկալվող արդյունքների համապատասխանության աղյուսակը:

ՉԱՓՈՐՈՇԻՉ գ. ՄՈՒՀ-ն ունի ուսանողների գնահատման քաղաքականություն՝ ըստ ուսումնառության արդյունքների, և ապահովում է ակադեմիական ազնվությունը:

Հիմքեր

Ուսանողների գնահատման քաղաքականությունն ու ընթացակարգերը [/հավելված 3գ1/](#),

Ուսումնառության արդյունքներին համապատասխան սահմանված գնահատման մեթոդներն ու չափանիշները [/հավելված 3գ1/](#),

[Ակադեմիական ազնվության քաղաքականությունը](#), ընթացակարգերը, ինչպես նաև հիմքեր ապահովող փաստաթղթեր/[հավելված 3գ2 /](#),

Գնահատման մոտեցումների առաջավոր փորձի համեմատական վերլուծությունը (առկայության դեպքում),

Ուսումնառողների գնահատման քաղաքականության վերանայման հիմքերը և արդյունավետությունն ապահովող մեխանիզմները,

Վերլուծել ՄԿԾ-ում նշված դասավանդման և ուսումնառության մեթոդների արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Ուսուցման կրեդիտային համակարգի ներդրման ընթացքում անհրաժեշտություն առաջացավ վերանայելու ուսանողների գիտելիքների ստուգման ու գնահատման ձևերը: Համալսարանում մշակվեց «[Կրեդիտային համակարգով ուսումնառության ուղեցույց](#)», որի նպատակն էր երկու հիմնական շահակիցներին՝ ուսանողներին և դասախոսներին ծանոթացնել ուսումնառության նոր համակարգին: Միննույն ժամանակ մշակվել է «Ուսանողների գիտելիքների հսկման և գնահատման ռեյտինգային համակարգ», որի նպատակն է ԳՊՀ դասախոսական կազմին և ուսանողությանը ծանոթացնել գնահատման մեթոդաբանությանը:

- Համաձայն կանոնակարգի՝ գնահատումը կատարվում է՝ ըստ հետևյալ բաղադրիչների՝
 - ա/ ուսանողի մասնակցությունը դասահաճախումներին,
 - բ/դասընթացի ծրագրով նախատեսված առաջադրանքների կատարման և ակտիվության աստիճանը ընթացիկ ստուգմամբ (գրավոր կամ բանավոր),
 - գ/կիսամյակում երկու անգամ դասընթացի ծրագրով նախատեսված գրավոր անցկացվող միջանկյալ ստուգումներ,
 - դ/ հանրագումարային ամփոփումներ,

ե/ արդյունաբար(վերջնական) գնահատականի ձևավորում (100 միավորանոց սանդղակով)՝ կիսամյակի ընթացքում դրսևորած գիտելիքների կուտակային միավորների հիման վրա:

Նշված բաղադրիչների համար սահմանված են հետևյալ չափորոշիչ ռեյտինգները [/հավելված 3գ1/](#): Գործող գնահատման համակարգի արդյունավետությունը յուրաքանչյուր կիսամյակի վերջում քննարկվել է ամբիոններում, ֆակուլտետներում և ուսանողների շրջանում: Ներդրված համակարգը որոշակիորեն նպաստել է ուսումնական գործընթացում մրցակցության և անաչառության տարրերի ներմուծմանը: Չնայած դրան՝ գործող գնահատման համակարգը լիովին չի ապահովում կրթական վերջնարդյունքների վրա հիմնված գնահատումը. օրինակ՝ միջանկյալ ընթացիկ ստուգումների անցկացման պարագայում հնարավորություն չի ընձեռնվում ստուգելու ուսանողների մնացորդային գիտելիքները և լիարժեքորեն չափելու ուսանողների կողմից դրանց ձեռքբերման մակարդակը: Կան կարծիքներ և առաջարկություններ գնահատման ընթացակարգում բանավոր ստուգման բաղադրիչի ներդրման առնչությամբ՝ պայմանավորված որոշ մասնագիտությունների առանձնահատկություններով

Ուսանողակենտրոն ուսուցմանն անցնելուն զուգահեռ մեծ ուշադրություն է դարձվում ակադեմիական ազնվությանը: [Ակադեմիական ազնվության քաղաքականությունը](#) կիրառվում է ուսումնական գործընթացի բոլոր օղակներում (ուսանողներին տրամադրվում են քննական հարցաշարերը, ուսանողներն անմիջականորեն մասնակցում են թեստերի կազմման գործընթացին, միջանկյալ ստուգումները, ստուգարքներն ու քննություններն անցկացվում են համակարգչի միջոցով, թեստերն ընտրվում են համակարգչային ծրագրի կողմից՝ պատահականության սկզբունքով, արդյունքները գնահատում է համակարգիչը, թեստը լրացնելուց հետո ուսանողն անմիջապես իմանում է հավաքած միավորը, ավարտական քննությունները ձայնագրվում են): Համալսարանում գործում է նաև [ակադեմիական ազնվության հանձնաժողով](#)՝ 3 դասախոս և 2 ուսանող կազմով, որն իր գործունեությամբ նպաստում է ակադեմիական ազնվության պահպանմանը:

ՉԱՓՈՐՈՇԻՉ դ. ՄՈՒՀ-ի մասնագիտությունների կրթական ծրագրերը բովանդակային առումով համահունչ են նմանատիպ այլ ճանաչված մասնագիտությունների կրթական ծրագրերին և նպաստում են ուսանողների ու դասավանդողների շարժունությանը, միջազգայնացմանը:

Հիմքեր.

Մասնագիտության կրթական ծրագրի տարանջատումը տեսական, գործնական բաղադրիչների, Ուսումնառողի և շրջանավարտի կրթությունը շարունակելու և կարիերայի զարգացման հնարավորությունները արտացոլող համապատասխան փաստաթուղթը (առկայության դեպքում),

Հաստատության ներսում կամ տեղական ու միջազգային այլ հաստատությունների տվյալ կամ այլ մասնագիտության կրթական ծրագրերի հետ համահունչություն ստեղծելու քաղաքականություն,

Ուսանողների և դասավանդող անձնակազմի շարժունության հնարավորությունները պարզաբանող հիմքեր:

Վերլուծել և հիմնավորել մասնագիտության կրթական ծրագրերի բովանդակային հուսալիությունը, ՄՈՒՀ-ի և այլ հաստատությունների համապատասխան մասնագիտական ծրագրերի հետ համադրելիությունը, ինչպես նաև այդ մտեցումների արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/: Բնչքանով է այն նպաստում ուսումնառողների ու դասավանդողների շարժունությանը:

ԳՊՀ-ում 2008թ.-ից առկա կրթաձևում (բակալավրի ու մագիստրոսի կրթական ծրագրերով), իսկ 2012թ.-ից հեռակա կրթաձևում ուսուցումն իրականացվում է կրեդիտային համակարգով: 2010թ.-ից շրջանավարտներին տրվում են համաեվրոպական ձևաչափի դիպլոմի հավելվածներ:

Այդ ամենը նպաստում է բուհից բուհ ուսանողների անարգել տեղափոխմանը, այլ բուհերում (մագիստրոսի կամ հետագոտողի կրթական ծրագրով) ուսումնառությունը շարունակելուն:

Ուսանողների ներհամալսարանական և միջբուհական շարժունությունը կարգավորվում է «Բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորողների ակադեմիական շարժունության կարգով» /հաստատված ՀՀ Կառավարության 2011թ.-ի օգոստոսի 25-ի N1240-Ն որոշմամբ/: Համաձայն այդ կարգի՝ ուսանողը կարող է փոխել մասնագիտությունը, եթե առարկաների տարբերությամբ պայմանավորված կրեդիտների թույլատրելի քանակը չի գերազանցում 20 կրեդիտը:

ԳՊՀ-ում մասնագիտական կրթական ծրագրերը պարբերաբար վերանայվում, վերամշակվում են՝ հիմք ունենալով ՀՀ բարձրագույն կրթության պետական կրթական չափորոշիչները և հիմնական քաղաքականություն ընդունելով ՀՀ և միջազգային առաջավոր բուհերի նույն մասնագիտությունների կրթական ծրագրերի հետ համահունչ լինելը: Իհարկե, հաշվի են առնվում ինչպես մեր համալսարանի, այնպես էլ տարածաշրջանի աշխատաշուկայի որոշակի առանձնահատկությունները:

Քանի որ ԳՊՀ-ն մանկավարժական մասնագիտությունների գծով միջբուհական կոնսորցիումի շրջանակներում համագործակցում է ՀՊՄՀ-ի և ՀՀ մանկավարժական կրթություն իրականացնող մյուս բուհերի հետ, ուսուցումը կազմակերպում ենք միասնական կրթական ծրագրերով: ՄԿԾ-ների վերջին վերանայումը 2012-2013թթ. կատարվել է ՀՊՄՀ-ի և Ֆինլանդիայի Օուլուի համալսարանի հետ համատեղ:

Արդյունքում մշակվել են նոր ՄԿԾ-եր («Տարրական կրթության մանկավարժություն և մեթոդիկա», «Հայոց լեզու և գրականություն», «Իրավագիտություն», «Պատմություն», «Կենսաբանություն», «Քիմիա», «Ֆիզիկա» մասնագիտությունների համար), որոնցում նախկին ուսումնական պլանների համեմատ ավելի մեծ տեղ է տրվել գործնական բաղադրիչին: Մասնավորապես ավելի է կարևորվել մանկավարժական պրակտիկաների դերը: Կատարվել են ինչպես բովանդակային որոշակի փոփոխություններ, այնպես էլ ավելացվել են պրակտիկաներին հատկացվող կրեդիտների քանակը և այն կիսամյակների թիվը, որոնց ընթացքում պետք է անցկացվեն պրակտիկաները:

ԳՊՀ-ի մյուս մասնագիտությունների գծով բակալավրի կրթական ծրագրերի կառուցվածքի բովանդակային համեմատական վերլուծությունն ըստ դասընթացների ցույց է տվել, որ կրեդիտների կրթաբլոկային բաշխվածությունը համապատասխանում է ՀՀ և արտերկրի առաջավոր բուհերի համանուն կրթական ծրագրերի կրեդիտների բաշխվածությանը, ինչը նույնպես կնպաստի ուսանողների շարժունությանը:

Օրինակ՝ ԳՊՀ-ում իրականացվող «Էլեկտրոնային տեխնիկա» բակալավրի կրթական ծրագիրը բովանդակային համեմատման է ենթարկվել ՀՀ և արտերկրի այլ համանման ծրագրերի հետ:

ՀՀ-ից վերլուծվել է ՀՊՃՀ-ի «Էլեկտրոնիկա» (www.seua.am) մասնագիտական կրթական ծրագիրը, Ռուսաստանի Դաշնությունից՝ Մոսկվայի Բաուսանի անվան տեխնիկական համալսարանի (www.bmstu.ru) «Էլեկտրոնիկա և նանոէլեկտրոնիկա», ԱՄՆ-ից՝ Կալիֆոռնիայի պետական պոլիտեխնիկական համալսարանի «Էլեկտրական ճարտարագիտություն» (Electrical Engineering, www.csupomona.edu), եվրոպական համալսարաններից՝ Մեծ Բրիտանիայի Էկսետերի համալսարանի «Էլեկտրոնային ճարտարագիտություն» մասնագիտության (www.exeter.ac.uk) և Կարդիֆի համալսարանի «Էլեկտրական և էլեկտրոնային ճարտարագիտություն» (www.cardiff.ac.uk) մասնագիտության կրթական ծրագրերը: Այս

վերլուծությունների արդյունքները վկայում են, որ ԳՊՀ կրթական ծրագրերը համադրելի են առաջավոր բուհերի համապատասխան կրթական ծրագրերի հետ գրեթե բոլոր տեսանկյուններից (ԱՄՆ և եվրոպական ՄԿԾ-ների հետ որոշակի վերապահումով), որը կապահովի մեր ուսանողների և դասախոսների շարժունությունը:

Վերջին տարիներին ԳՊՀ-ն մի շարք միջազգային ծրագրերով [/հավելված 9ա1/](#) համագործակցում է եվրոպական և ԱՊՀ-ի առաջավոր բուհերի հետ: Արդյունքում ուսումնասիրվել և որոշ կետերով փոխառվել են կրթական ծրագրերի մշակման փորձը, ԳՊՀ-ի համապատասխան մասնագետները վերապատրաստվել են ճանաչված բուհերում:

Ծրագրերի միջազգայնացմանը և աշխատաշուկայի պահանջներին դրանց համապատասխանեցմանը նպաստում են նաև գործատուների հետ համատեղ իրականացված միջոցառումները: Օրինակ՝ «Էլեկտրաէներգետիկա» մասնագիտության բակալավրի կրթական ծրագիրը մշակելիս և առարկայական ծրագրերը կազմելիս հաշվի են առնվել «Որոտանի Հէկ-երի համակարգ ՓԲԸ»-ի առաջատար ճարտարագետների առաջարկները, մասնավորապես փոփոխություններ են կատարվել մասնագիտական կրթաբովանդակի առարկայացանկում:

«Էլեկտրոնային տեխնիկա» մասնագիտության կրթական ծրագրի կազմմանը մասնակցել են «Գորիսի Գամմա ՓԲԸ» և «Ինստիգեյթ» ընկերության առաջատար մասնագետները և այլն:

ՄԿԾ-երի բոլոր կրթաբովանդակներում առկա են նաև ուսանողների ընտրովի դասընթացներ, բայց դրանց քանակը դեռևս քիչ է, ուսումնական պլաններում գերակշռում են հիմնական դասընթացները, այսինքն՝ դեռևս ունենք այսպես կոչված «կոշտ» ուսումնական պլաններ, քանի որ «ձկուն» անհատական պլաններով ուսուցման կազմակերպումը ներկայումս անհնար է իրագործել: Մասնագիտական կրթական ծրագրերի տարանջատումը տեսական ու գործնական բաղադրիչների, բացի տարբեր բնույթի պրակտիկաներից, հիմնականում իրականացվում է առարկայական ծրագրերի պլանավորմանը համապատասխան՝ հստակ նախատեսված ժամաքանակով [/Ուսանողների գիտելիքների հսկման և գնահատման ռեյթինգային համակարգի կանոնակարգ/](#):

Ներկայացնել այն ուսումնական հաստատությունների ցանկը (նշելով երկիրը և ուսանողների թվաքանակն ըստ տարիների), որոնց հետ հաստատությունն ունի ուսանողների փոխանակման ու շարժունության գործող համաձայնագրեր:

Ուսանողների արտահոսք

N	Երկիր, հաստատություն	2012	2013	2014	2015	2016
1.	Լիտվայի հանրապետություն, Վիլնյուսի համալսարան	-	-	2	-	-
2.	Ֆրանսիա, Մոնպելյե համալսարան	-	-	1	-	-
3.	Չեխիայի հանրապետություն, Մասարիկի համալսարան	-	-	-	2	-
4.	Մեծ Բրիտանիայի Միացյալ Թագավորություն, Միդլսեքսի համալսարան	-	-	2	-	-
	Ընդամենը	-	-	5	2	-

Ներկայացնել այն ուսումնական հաստատությունների ցանկը (նշելով երկիրը և դասավանդողների թվաքանակն ըստ տարիների), որոնց հետ հաստատությունն ունի դասավանդող անձնակազմի փոխանակման ու շարժունության գործող համաձայնագրեր:

Դասավանդողների ներհոսք

N	Երկիր, հաստատություն	2012	2013	2014	2015	2016
1.	ՀՀ, ԵՊՀ	4	2	1	2	2
2.	ՀՀ, ՀՊՄՀ	3	2	1	1	2
3.	ՀՀ, ՀՊՃՀ-ի Կապանի մասնաճյուղ	1				
4.	ՀՀ, ՀՊՃՀ	3			1	1
5.	ՀՀ, ՀՀ ԳԱԱ	3	2	2	2	2
6.	ՀՀ, Գորիսի «Սյունիք» ինստիտուտ	2	2		1	
7.	ԼՂՀ, ԱրՊՀ	1	1		1	1
8.	ՀՀ, ՀՊՏՀ	1				
	Ընդամենը	18	9	4	8	8

ՉԱՓՈՂՈՇԻՉ Է. ՄՈՆ-ում առկա է մասնագիտության կրթական ծրագրերի մշտադիտարկման, արդյունավետության գնահատման, բարելավման քաղաքականություն:

Հիմքեր

Շահակիցների կարիքները հաշվի առնող ուսումնառության ակնկալվող արդյունքների վերանայման հաստատված քաղաքականությունը (առկայության դեպքում),

Արտաքին և ներքին շահակիցների կարիքների ուսումնասիրության մեթոդները /[հավելված 3ե2/](#),

Մասնագիտությունների կրթական ծրագրերի պարբերաբար գնահատման քաղաքականությունը, ընթացակարգերը և մեխանիզմները (կցել կամ հղում կատարել համապատասխան կանոնակարգին) /[հավելված 3ե2/](#),

Մասնագիտությունների կրթական ծրագրերի մշտադիտարկման և վերանայման ընթացակարգը (կցել կամ հղում կատարել համապատասխան փաստաթղթին) / [հավելված 3ե4/](#),

Գործընթացների անաչառությունը երաշխավորող մեխանիզմները (հղում կատարել կամ կցել կանոնակարգը),

Վերլուծել ՄԿԾ-ի մշտադիտարկման, գնահատման և վերանայման մեխանիզմները և դրանց արդյունավետությունը:

ԳՊՀ-ն, ելնելով իր ռազմավարական ծրագրից, առաքելությունից և կրթության որակի բարձրացման արդի պահանջներից, աշխատաշուկայի պահանջների փոփոխությունից, առաջատար բուհերի առարկայական ծրագրերում կատարվող փոփոխություններից, պարբերաբար իրականացնում է ՄԿԾ-ի վերանայման, գնահատման ու բարելավման քաղաքականություն: Այդ ամբողջ գործընթացը վերահսկվում է բուհում գործող

ստորաբաժանումների կողմից՝ ըստ համապատասխան կանոնակարգերի: Մասնավորապես Միջազգային համագործակցության և կրթության որակի ապահովման բաժինը մասնակցում է համալսարանում կրթական ծրագրերի մշակման ու հաստատման գործընթացներին /[հավելված 2ա3.2/](#), բուհի ուսումնամեթոդական հանձնաժողովը վերանայում է առարկայական ծրագրերի բովանդակությունը և էլքային արդյունքները, ինչպես նաև դրանց համապատասխանությունը ուսումնառության վերջնարդյունքներին /[հավելված 3ե2, 3.2.3 կետ/](#), Ուսումնական վարչության կողմից մեթոդական աջակցություն է ցուցաբերվում ՄԿԾ-ների բարելավման, արդյունավետության գնահատման գործընթացին /[հավելված 2ա3.1, 3.3 կետ/](#), ինչպես նաև Ուսումնական վարչության կողմից մշակվում են կրթական ծրագրերի և առարկայական ծրագրերի համար ընդհանուր ձևաչափեր:

Առարկայական ծրագրերը մշակվում և վերանայվում են համապատասխան մասնագիտական ամբիոններում, որից հետո քննարկվում և հաստատվում են ֆակուլտետի խորհրդում: Ուսումնական վարչությունը համակարգում է նշված գործընթացը:

ՄԿԾ-ի մշտադիտարկման, պարբերաբար վերանայման և արդյունավետության գնահատման գործընթացը կազմակերպելիս հաշվի են առնվում ՀՀ կրթության համակարգի փոփոխությունները, պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողների (ներքին շահակիցներ), շրջանավարտների և գործատուների (արտաքին շահակիցներ) պահանջները, ինչպես նաև ուշադրություն է դարձվում ավարտական քննական հանձնաժողովների հաշվետվություններին ու կարծիքներին: Միջամբիոնային, միջֆակուլտետային քննարկումների և խորհրդակցությունների ընթացքում պարզաբանվում են ՄԿԾ-երում առկա խնդիրներն ու դրանց լուծման ճանապարհները:

Ներքին և արտաքին շահակիցների բանավոր և գրավոր հարցումները անհրաժեշտություն են առաջացնում փոփոխություններ կատարելու կրթական ծրագրերում: Այս գործընթացը կանոնակարգվում է ԳՊՀ-ի գիտխորհրդի կողմից հաստատված համապատասխան ընթացակարգով /[հավելված 3ե2/](#): Հարցման արդյունքները վերլուծվում, ներկայացվում են գիտխորհրդի նիստերում: Այդ արդյունքների վերլուծությունը բացահայտում է տարածաշրջանում բուհի վարկանիշը, բուհի պատրաստած մասնագետների մասնագիտական կարողությունների և գիտելիքների պրակտիկ կիրառության ունակությունների մակարդակը: Հարցումները կազմակերպվում են նաև պրակտիկայի շրջանակներում: Գրեթե բոլոր դեպքերում գործատուները փաստում են, որ ուսանողները սովորաբար ունենում են տեսական գիտելիքների բարձր մակարդակ, սակայն դրանց գործնական կիրառման ցածր հմտություններ:

Վերջին տարիների ընթացքում կրթական ծրագրերում կատարվող փոփոխությունները թույլ են տալիս կրթական ծրագրերը հնարավորինս համապատասխանեցնելու միջազգային փորձաքննություն անցած այլ բուհերի կրթական ծրագրերին: Ըստ այդմ, փոփոխված ծրագրերի արդյունավետության, որակի գնահատման համար պետք է մշակվեն նոր ընթացակարգեր ու մեխանիզմներ:

Չափանիշ 3-ի վերաբերյալ ներկայացնել SWOT վերլուծություն վերջին երեք տարիների համար

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
1. Կրթական ծրագրերի համապատասխանությունը հաստատության առաքելությանը, 2. ՄԿԾ-երի մշակումը պետական կրթական	1. Ուսանողների շարժունության ոչ բավարար տեմպը, 2. Դասախոսների շարժունության հստակ մեխանիզմների (պայմանագրերի)

<p>չափորոշիչներին համապատասխան, 3.ՄԿԾ-երը կազմելիս միջազգային փորձաքննություն անցած այլ բուհերի կրթական ծրագրերի (բենչմարկինգ) հաշվի առնելը, 4. ՄԿԾ-երի պահանջներին համապատասխան պրոֆեսորադասախոսական կազմի առկայություն, 5.ՄԿԾ-երի վերանայման ու վերամշակման գործընթացներում ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների և տարածաշրջանի գործատուների առաջարկների հաշվի առնելը, 6.Կրեդիտային համակարգով ուսումնառության գնահատման երկարատև փորձ (դեռևս այն ժամանակից, երբ համալսարանը գտնվում էր ՀՊՃՀ-ի կազմում), 7.Ուսանողների գիտելիքների գնահատման կատարելագործված համակարգի հասնելու նպատակով գնահատման մեթոդների վերանայման, վերամշակման գործընթացին ուսանողների, պրոֆեսորադասախոսական կազմի և աշխատաշուկայի ներկայացուցիչների ակտիվ մասնակցությունը, 8.ՄԿԾ-երի արդյունավետության բարձրացման նպատակով ներքին ու արտաքին շահակիցների շրջանում փորձագիտական հարցումների կազմակերպման փորձերը:</p>	<p>բացակայություն (հիմնականում դրանք կատարվում են կամ դասախոսների անհատական նախաձեռնությամբ, կամ համապատասխան ամբիոնների հրավերով՝ ռեկտորի հետ բանավոր համաձայնությամբ), 3. Ոչ բոլոր ՄԿԾ-երի համապատասխանությունը տարածաշրջանի այսօրվա աշխատաշուկայի պահանջներին, 4.Կրթական վերջնարդյունքների հստակ սահմանման ու գնահատման փորձի բացակայություն, 5. Ոչ բոլոր անհրաժեշտ ընթացակարգերի առկայություն, 6. ՄԿԾ-երի ճկուն չլինելը, ընտրովի դասընթացների կրեդիտների փոքր քանակը, ինչն ուսանողներին լայն ընտրության և անհատական ուսումնական պլաններ կազմելու հնարավորություն չի տալիս, 7. Լաբորատոր սարքավորումների և նյութատեխնիկական բազայի ոչ լիարժեք համապատասխանությունը ժամանակակից պահանջներին, 8. Համալսարանում ուսանողների գնահատման գործող համակարգի և գրագողության դեմ պայքարի մեխանիզմների, ակադեմիական ազնվության պահանջների դեռևս ոչ լիարժեք կիրառում, 9.ՄԿԾ-երի մշակման, գնահատման ու բարեփոխման գործընթացներում ներքին ու արտաքին շահակիցների մասնակցության աստիճանի ցածր լինելը:</p>
Վտանգներ	Հնարավորություններ

<p>1. Դիմորդների թվի նվազումը, 2. Տարածաշրջանում չձևավորված և չկայունացած աշխատաշուկան, 3. Գործատուների ոչ բավարար շահագրգռվածությունը ՄԿԾ-երի վերամշակման և իրականացման գործընթացին (մասնավոր դեպքերում գործատուները մասնակցում են գործընթացին համալսարանի առաջարկությամբ ու նախաձեռնությամբ), 4. ՄԿԾ-երի մշակման և իրականացման գործընթացին առաջատար մասնագետներ ներգարվելու սահմանափակ հնարավորությունները:</p>	<p>1. Հայաստանյան և միջազգային առաջատար համալսարանների հետ կապերի ընդլայնում, 2. Ներքին և արտաքին շահակիցների ներգրավում կրթական գործընթացների պլանավորման աշխատանքներին, 3. Մասնագիտությունների կրթական ծրագրերի հրապարակայնություն:</p>
--	---

IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ուսանողներին տրամադրում է համապատասխան աջակցություն՝ կրթական միջավայրի արդյունավետությունն ապահովելու նպատակով:

ՉԱՓՈՂՈՇԻՉա.ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության իրականացման հստակ մեխանիզմներ:

Հիմքեր

Ուսանողների հավաքագրման (մասնագիտական կողմնորոշման) քաղաքականությունը և ընթացակարգերը / [2011-2016թթ. ԳՊՀ հայեցակարգի 3-րդ ենթակետը](#)/,

Ուսանողների ընդունելության անցկացման քաղաքականությունը և ընթացակարգերը (<http://edu.am/index.php/am/documents/index/104>),

Ընդունելության արդարությունը և թափանցիկությունն ապահովող ընթացակարգերը և հիմքերը /«Հայաստանի Հանրապետության պետական և ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունելության (ըստ բակալավրի կրթական ծրագրի) կարգ» (<http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=75964>), «Հայաստանի Հանրապետության պետական բուհերի հեռակա ուսուցման ընդունելության կարգ» /<http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=107753>, «Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում մագիստրատուրայի ընդունելության և ուսուցման կարգի» /<http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=41863/>, «ԳՊՀ մագիստրատուրայի ընդունելության և ուսուցման կազմակերպման կարգ»/:

Յուրաքանչյուր մասնագիտության կրթական ծրագրում ընդգրկված ուսանողների թիվը՝ ըստ *Հավելված 1-ի*,

Ընդունելության արդյունավետությունն արտահայտող այլ հիմքեր ու վերլուծություններ վերջին երեք տարիների համար/[հավելված 4ա6/](#),/[հավելված 4ա8/](#)

Բարելավմանն ուղղված ծրագրեր/[2011-2016թթ. ԳՊՀ հայեցակարգի 3-րդ ենթակետը](#), [հավելված 4ա11/](#):

Վերլուծել հաստատությունում գործող ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության իրականացման մեխանիզմների արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Ուսումնական հաստատությունում ուսանողների թիվը՝ ըստ կրթական ծրագրերի և ուսուցման ձևերի						
Ուսանողների թիվը		2011	2012	2013	2014	2015
Բակալավր	առկա	415	391	337	313	405
	հեռակա	971	948	882	822	782
Մագիստրոս	առկա	159	170	159	161	156
	հեռակա	-	-	-	-	-
Հետազոտող	առկա	-	-	-	-	-
	հեռակա	-	-	-	-	-
Ուսումնառողների շարժունությունը						
Ուսումնառողների շարժը վերջին 5 տարվա կտրվածքով						
Ուսանողների արտահոսք						
Հաստատություն/երկիր		2011	2012	2013	2014	2015
1	Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան	-	1	-	-	-
2	Արցախի պետական համալսարան	-	1	-	-	-
3	ՀՊՃՀ-ի (Պոլիտեխնիկ) Կապանի մասնաճյուղ	-	-	-	-	-
4	Երևանի պետական համալսարան	-	-	1	-	-
5	Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան	-	-	1	-	-
Ուսանողների ներհոսք						
Հաստատություն/երկիր		2011	2012	2013	2014	2015
1.	Արցախի պետական համալսարան	3	1	-	1	2
2.	Հայաստանի ազգային ագրարային համալսարան	1	2	-	-	2
3.	Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան	5	-	3	1	-
4.	Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան	-	2	2	3	-
5.	Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան	-	2	-	-	1
6.	Հայաստանի ազգային ագրարային համալսարանի Սիսիանի մասնաճյուղ	-	-	1	-	-
7.	Երևանի պետական համալսարան	1	2	1	2	2
8.	Գորիսի «Մյունիք» ինստիտուտ	1	1	3	7	10
9.	Երևանի «Հրաչյա Աճառյան» համալսարան	1	-	-	-	1
10.	Հրազդանի հումանիտար ինստիտուտ	1	-	-	-	-
11.	Երևանի «Գալիք» համալսարան	-	1	-	-	-
12.	Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան համալսարան	-	-	1	-	-
13.	Երևանի կրթագիտական ինստիտուտ	-	-	-	1	-
14.	Երևանի պետական բժշկական համալսարան	-	-	-	1	-

15.	ՀՊՃՀ Վանաձորի մասնաճյուղ	-	-	-	-	1
-----	--------------------------	---	---	---	---	---

Հեռացումներ և վերականգնումներ

	Տարեթիվը	2011	2012	2013	2014	2015
1.	Ազատված ուսանողների տոկոսը/թիվը	3,6%/56	4,2%/64	5,2%/72	7,5%/97	3,9%/90
2.	Վերականգնված ուսանողների տոկոսը /թիվը	0.9%/20	1.9%/26	0,5%/12	1,6%/21	1.8%/24

Ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության իրականացման նպատակով Գորիսի պետական համալսարանում գործում են բուհի 2011-2016թթ. զարգացման ռազմավարական հայեցակարգի դրույթներից բխող հստակ մեխանիզմներ / [2011-2016թթ. ԳՊՀ հայեցակարգի 3-րդ ենթակետը](#)/: Կարևորելով դիմորդների կայուն հոսքի ապահովումը և ընդունելության գործընթացի բարելավումը՝ իրականացվում են ամենամյա միջոցառումներ, որոնց նախագծերը և ժամանակացույցը նախապես հաստատվում են ԳՊՀ-ի Գիտական խորհրդի կողմից: Համաձայն ԳՊՀ-ի Գիտական խորհրդի հանձնարարականների կատարման միջոցառումների պլանի՝ սեպտեմբեր-մայիս ժամանակահատվածում իրականացվում է համալսարանի գովազդարշավը, մասնագիտական կողմնորոշման նպատակով կազմակերպվում են ԳՊՀ-ի աշխատակիցների այցելություններ տարածաշրջանի քաղաքային և գյուղական համայնքների դպրոցներ, նախապես ձևավորվում և տարվա ընթացքում հանրակրթական հաստատություններում տարածվում են տեղեկատվական նյութեր, ծախսերի կներ, համալսարանի մասին պատմող գովազդային տեսահոլովակներ, պարբերաբար իրականացվում են աշակերտների ճանաչողական այցեր համալսարան, ապագա դիմորդների համար կազմակերպվում են անվճար նախապատրաստական դասընթացներ և խորհրդատվական ծառայություններ: Բացի այդ, ԳՊՀ-ի պաշտոնական կայքում գործում է «Դիմորդ» ենթաբաժինը: Հանդիպումներ են կազմակերպվում Գորիսի տարածաշրջանում տեղակայված գործատուների զինծառայողների հետ: ԳՊՀ-ն կնքել է համագործակցության պայմանագրեր 14 քոլեջների հետ՝ ուսումը շարունակելու նպատակով:

Դիմորդների ընդունելությունը ԳՊՀ-ի բակալավրի կրթական ծրագրի առկա ուսուցման համակարգում իրականացվում է՝ համաձայն ՀՀ Կառավարության 26.04.2012թ.-ի թիվ 597-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական և ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունելության (ըստ բակալավրի կրթական ծրագրի) կարգի» / (<http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=75964>): Համաձայն նշված կարգի՝ ընդունելությունն իրականացվում է հանրապետական միասնական քննությունների արդյունքում, որոնք կազմակերպվում և անցկացվում են «Գնահատման և թեստավորման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից:

Վերջին 5 տարիների ընդունելության ցուցանիշներից երևում է [/հավելված 4ա6/](#), որ ԳՊՀ-ի բակալավրիատի առկա ուսուցման համակարգ դիմորդների թիվը մեծ հաշվով չի փոփոխվում:

Դիմորդների ընդունելությունը ԳՊՀ-ի բակալավրի կրթական ծրագրի հեռակա ուսուցման համակարգ իրականացվում է ՀՀ կրթության և գիտության նախարարի 27.07.2012թ. թիվ 753-Ն հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական բուհերի հեռակա ուսուցման ընդունելության կարգով» /<http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=107753>/: Հեռակա ուսուցման ընդունելության վերաբերյալ հայտարարությունները սահմանված ժամկետներում տեղադրվում են ԳՊՀ-ի կայքէջում և հրապարակվում ԶԼՄ-ներով: Քննությունների կազմակերպումը և անցկացումը վերահսկում է ՀՀ Կրթության և գիտության նախարարությունը: Ընդունելության քննությունները բովանդակային և կազմակերպչական

առումով համապատասխանում են բակալավրիատի առկա համակարգի պետական միասնական քննությունների պահանջներին:

ԳՊՀ-ի 2012-2017թթ. բակալավրիատի հեռակա ուսուցման ընդունելության ցուցանիշները փաստում են [/հավելված 4ա8/](#), որ դիմորդների թիվը վերջին 5 տարիների ընթացքում որոշակիորեն նվազել է, ինչը, հավանաբար, պայմանավորված է հետևյալ գործոններով՝ գործազրկության բարձր մակարդակ, սոցիալական անապահովություն, արտագաղթ, բուհական կրթության նկատմամբ հետաքրքրության նվազում և այլն:

Ինչպես բակալավրիատի առկա, այնպես էլ հեռակա կրթաձևերում դիմորդների հոսքը կայուն է հիմնականում «Հայոց լեզու և գրականություն», «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությունների գծով, ինչը պայմանավորված է աշխատաշուկայում նշված մասնագիտությունների համեմատաբար մեծ պահանջարկով: Հակառակ հանգամանքով պայմանավորված՝ դիմորդների հոսքը նվազում է հատկապես բնագիտական մասնագիտությունների գծով:

ԳՊՀ-ի մագիստրատուրայի ընդունելությունն իրականացվում է համաձայն ՀՀ կրթության և գիտության նախարարի 06.12.2007թ. թիվ 1193-Ն հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում մագիստրատուրայի ընդունելության և ուսուցման կարգի» [/http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=41863/](http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=41863/), ինչպես նաև ԳՊՀ-ի Գիտական խորհրդի կողմից հաստատված «ԳՊՀ մագիստրատուրայի ընդունելության և ուսուցման կազմակերպման կանոնակարգի» [/հավելված 4ա10/](#):

Յուրաքանչյուր տարվա ընդունելության գործընթացի ավարտից հետո (ըստ կրթական ծրագրերի և ուսուցման ձևերի) Ռեկտորատում և Գիտխորհրդում ամփոփ արդյունքներով քննարկվում և վերլուծվում են տվյալ տարվա ընդունելության կազմակերպման, անցկացման ու իրականացման աշխատանքները: Վերլուծության արդյունքները և գործընթացի բարելավմանն ուղղված ծրագրերն ընդգրկվում են տվյալ տարվա համալսարանի ընդհանուր հաշվետվության մեջ:

Վերհանել հեռացումների և վերականգնումների պատճառները և տրամադրել տվյալ խնդիրների լուծման տարրերակները /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Ուսանողների տեղափոխումն իրականացվում է՝ համաձայն ՀՀ կառավարության 2011թ. օգոստոսի 25-ի որոշմամբ հաստատված «Բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորողների ակադեմիական շարժունության կարգի» [/https://www.e-gov.am/gov-decrees/item/20141/](https://www.e-gov.am/gov-decrees/item/20141/): 2012-2017թթ. ուսանողների ներհոսքի և արտահոսքի վերաբերյալ ցուցանիշներից երևում է, որ ԳՊՀ-ից ուսանողների արտահոսք գրեթե չկա:

Ուսանողների հեռացումն ու վերականգնումն իրականացվում է համաձայն ՀՀ Կրթության և գիտության նախարարի 2011թ. նոյեմբերի 17-ի հրամանով հաստատված «ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում [«Ուսանողների հեռացման \(ազատման\) և վերականգնման կարգի»](#) <http://www.arlis.am/DocumentView.aspx?docID=73332/>:

ԳՊՀ-ից ուսանողների հեռացումների հիմնական պատճառներն են՝

- Ակադեմիական անբավարար առաջադիմությունը,
- Սահմանված ժամկետում ուսման վարձի չվճարումը,
- Բուհիի կանոնադրությամբ և ներքին կարգապահական կանոններով նախատեսված պարտականությունների խախտումը:

ԳՊՀ-ից ուսանողների ազատման հիմնական պատճառներն են՝

- Սոցիալական խնդիրները և այլ բուհ տեղափոխվելը,
- Ժամկետային զինծառայության գորակոչվելը,

- Առողջական վիճակը,
- Ակադեմիական արձակուրդում գտնվելը,
- Հղիության և ծննդաբերության, ինչպես նաև մինչև 3 տարեկան երեխայի խնամքի դեպքերը:

Կրթական միջավայրի արդյունավետության ապահովման, համալսարանի ուսանողական համակազմի պահպանման և կայուն զարգացման համար ԳՊՀ-ի 2011-2016թթ. զարգացման ռազմավարական հայեցակարգով նախատեսված են հստակ ծրագրեր ու միջոցառումներ / [2011-2016թթ. ԳՊՀ հայեցակարգի 3-րդ ենթակետը](#) /:

Համալսարանը համապատասխան տարակարգերի ուսանողների համար կիրառում է ուսման վարձավճարի մասնակի զեղչեր, բարեգործների ու գործատուների օժանդակությամբ և համալսարանի նախաձեռնությամբ իրականացվում է անապահով ուսանողների ուսման վարձավճարի փոխհատուցում:

ՉԱՓՈՐՈՇԻՉ Բ. ՄՈՒՀ-ն ունի ուսանողների կրթական կարիքների վերհանման քաղաքականություն և ընթացակարգեր:

Հիմքեր

Ուսանողների կարիքների վերհանման քաղաքականությունը և ընթացակարգերը [/հավելված 4բ6/](#),
 Վերհանված կարիքները փաստող հիմքերը և վերջին 3 տարիների վերլուծությունները [/հավելված 4բ4/](#),

Վերհանված խնդիրների լուծումները և նրանց արտահայտումը ՄՈՒՀ-ի քաղաքականության մեջ [/ԳՊՀ պաշտոնաթերթ, 4-րդ էջ/](#):

Վերլուծել ուսանողների կարիքների վերհանման ՄՈՒՀ-ի քաղաքականության և ընթացակարգերի իրականացման մեխանիզմների արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

ԳՊՀ-ի առաքելության կարևոր նպատակներից մեկը ուսանողակենտրոն միջավայրի ստեղծումն է, որի ապահովման համար համալսարանն իրականացնում է ուսանողների կարիքների վերհանման քաղաքականություն՝ մշակելով և իրականացնելով տարբեր մեխանիզմներ:

[ԳՊՀ-ի 2011-16թթ. զարգացման ռազմավարական ծրագրի, կետ 3.2/](#) մի շարք դրույթներով ԳՊՀ-ի սովորողների շրջանում նախատեսվում էր ստեղծել և իրականացնել կրթական-հետազոտական ծրագրեր ու ծառայություններ՝ ազգային տնտեսության և հասարակության կրթական ու տեխնոլոգիական կարիքներին համահունչ, ինչը թույլ կտա մասնագետներ պատրաստելու կրթության և սոցիալական ոլորտների համար:

Ուսանողների կրթական կարիքների վերհանման գործընթացում ներգրավված են համալսարանի մի շարք օղակներ ու ստորաբաժանումներ: Մասնավորապես ստեղծված է Կուրսղեկների խորհուրդ, որի խնդիրներից է բացահայտել ուսանողների կրթական կարիքները, հետևել նրանց ուսումնական առաջընթացին:

Ուսանողների կրթական կարիքների վերհանմանը անմիջականորեն նպաստում է նաև ՀՀ օրենսդրությամբ և համալսարանի ներքին կանոնակարգերով սահմանված ուսանողների ներագրվածությունը կառավարման մարմնում և տարբեր խորհուրդներում:

Ամբիոններում կա խորհրդատվությունների ժամանակացույց, բայց այն լիարժեք չի գործում ուսանողների ցածր հաճախելիության պատճառով:

Ուսանողների կրթական կարիքների վերհանումը Ուսանողական խորհրդի գործունեության հիմնական խնդիրներից է: Ուսանողները Ուսանողական խորհրդին դիմում են հիմնականում բանավոր, վերհանված խնդիրները հնարավորության սահմաններում լուծվում են անմիջապես կամ քննարկվում են ՈւԽ-ի նիստերում: Անհրաժեշտության դեպքերում դրանք ներկայացվում

են Ֆակուլտետների խորհուրդների, Գիտական խորհրդի նիստերում: ՈւՆ-ն պարբերաբար կազմակերպում է նաև համալսարանի կուրսերի ավագների հանդիպում ռեկտորի հետ:

Ուսանողների շրջանում անցկացվում են հարցումներ, որոնք նույնպես նպաստում են կրթական կարիքների վերհանմանը: Ուսանողների կրթական կարիքների վերհանումը իրականացվում է նաև ամբիոնների կողմից:

ԳՊՀ-ում ուսանողների կրթական կարիքների վերհանման գործընթացը ավելի արդյունավետ դարձնելու համար «Գորիսի պետական համալսարան» թերթի խմբագրակազմը ֆակուլտետներում տեղադրել է հարցարկղեր, որոնք ուսանողներին հնարավորություն են տալիս դիմում-առաջարկներով բարձրացնել իրենց հուզող հարցերն ու խնդիրները:

ԳՊՀ-ում գործող կարիքների վերհանման մեխանիզմների բազմազանությունն ապահովում է կարիքների վերհանման գործընթացի արդյունավետությունը: Համալսարանն աշխատում է հնարավորինս արագ արձագանքել վերհանված խնդիրներին, ինչը ևս կնպաստի կարիքների վերհանման գործընթացի արդյունավետության բարձրացմանը:

ԶՍՓՈՂՈՇԻՉ գ. ՄՈՒՀ-ը ստեղծում է լրացուցիչ պարապմունքների կազմակերպման և խորհրդատվություն տրամադրելու հնարավորություններ՝ ուսանողների արդյունավետ ուսումնառությանը նպաստելու համար:

Հիմքեր.

Լրացուցիչ խորհրդատվական պարապմունքների նկարագրությունը, նպատակները և ժամանակացույցը/[հավելված 4բ1](#), [հավելված 4գ2](#)/,

Լրացուցիչ խորհրդատվական պարապմունքների բարելավման մեխանիզմները և ծրագրերը, Խորհրդատուների աշխատանքի ժամանակացույցը /[հավելված 4գ2](#)/:

<i>Պատասխանել հետևյալ հարցերին.</i>	%
Ուսանողների քանի՞ տոկոսն է տեղեկացված խորհրդատվական ծառայությունների մասին	89
Ուսանողների քանի՞ տոկոսն է ընդգրկված լրացուցիչ խորհրդատվական պարապմունքներում	47
Ուսանողների քանի՞ տոկոսն է բավարարված խորհրդատվական ծառայություններից	38

Հետևյալ հարցերին պատասխանել այո կամ ոչ	այո/ոչ
Արդյո՞ք ուսումնառողներին հատկացվում են խորհրդատուներ	Ոչ
Եթե ոչ, արդյո՞ք նախատեսվում է հատկացնել	Այո

Վերլուծել լրացուցիչ խորհրդատվական պարապմունքների և ակադեմիական օժանդակություն և ուղղորդում տրամադրելու համար գործընթացի կազմակերպման արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

ԳՊՀ-ի մի շարք ստորաբաժանումներ ուսանողներին առաջարկում են լրացուցիչ պարապմունքների կազմակերպման և խորհրդատվություն տրամադրելու հնարավորություններ: ԳՊՀ-ում առկա է «[Ուսումնական խորհրդատուների գործունեության կարգը](#)»: Այն առայժմ փորձարկման փուլում է: Ֆակուլտետային մակարդակում ուսանողներին պարբերաբար խորհրդատվություն է տրամադրվում կուրսղեկների կողմից:

Ուսումնական տարվա սկզբին ուսանողները դասախոսներից ստանում են դասընթացի ամբողջական փաթեթը: Ուսանողին տրամադրվում են նաև տեղեկություններ ֆակուլտետի

դեկանատի կողմից կիսամյակի ընթացքում միջանկյալ ստուգման ձևերի, դրանց ժամկետների մասին: Կրեդիտային համակարգի ներդրումից հետո խորհրդատվությունների կազմակերպումը դարձել է պարտադիր պայման: Բոլոր կուրսերին կցված են կուրսղեկներ, որոնք մշտական կապի մեջ են ուսանողների հետ:

ԳՊՀ-ի տարբեր ֆակուլտետների ուսանողների շրջանում իրականացված հարցումները լրացուցիչ խորհրդատվական պարապմունքների անհրաժեշտության մասին վկայում են, որ ուսանողներն ավելի շատ դիմում են համացանցի օգնությանը, փորձում են հարցերի պատասխանները փնտրել այնտեղ, կամ դիմում են լրացուցիչ գրականության օգնությանը:

ԳՊՀ-ն, կարևորելով խնդրի լրջությունը և անհրաժեշտությունը, նախատեսում է փորձաշրջանի ավարտից հետո լրամշակել [«Ուսումնական խորհրդատուների գործունեության կարգը»](#) խորհրդատվական պարապմունքների արդյունավետության բարձրացմանը նպաստելու ակնկալիքով:

ՉԱՓՈՐՈՇԻՉ ղ. ՄՈՒՀ-ում սահմանված է ուսանողներին օժանդակություն և ուղղորդում տրամադրելու նպատակով վարչական աշխատակազմին դիմելու հստակ կանոնակարգ և ժամանակացույց:

Հիմքեր

Ուսումնառողներին վարչական կազմի կողմից հավելյալ օժանդակման և ուղղորդման կանոնակարգը / [ԳՊՀ Ներքին աշխատանքային Կանոններ](#), [Ուսանողների գիտելիքների հսկման և գնահատման ռեյթինգային համակարգ](#),

Համապատասխան ժամանակացույցեր / [ԳՊՀ Ներքին աշխատանքային կանոններ](#), կետ 10/:

<i>Պատասխանել հետևյալ հարցին</i>	%
Ուսանողների քանի՞ տոկոսն է տեղեկացված իրեն վերաբերող վարչական ծառայությունների մասին	90
Ուսանողների քանի՞ տոկոսն է օգտվում այդ ծառայություններից	66
Ուսանողների քանի՞ տոկոսն է բավարարված այդ ծառայություններից	59

Վերլուծել լրացուցիչ վարչական օժանդակություն ու ուղղորդում տրամադրելու համար գործընթացի կազմակերպման արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Գործիսի պետական համալսարանում ուսանողների վարչական աշխատակազմի կողմից օժանդակության և ուղղորդման վերաբերյալ ամբողջական փաստաթուղթ չկա: Այն մշակման փուլում է: Գործընթացը կարգավորվում է ըստ [«ԳՊՀ ներքին աշխատանքային կանոնների»](#) :

Ուսանողները ամենատարբեր հարցերով և խնդիրներով անկաշկանդ կարող են դիմել ֆակուլտետների ղեկաններին, ինչպես նաև կուրսղեկներին, անհրաժեշտության դեպքում՝ պրոռեկտորին և ռեկտորին: Ռեկտորը, պրոռեկտորը և բոլոր ուսումնական ստորաբաժանումների ղեկավարները ունեն ուսանողների ընդունելության հստակ ժամանակացույցեր /[ԳՊՀ Ներքին աշխատանքային Կանոններ](#), կետ 10/:

Այդ հարցում շատ կարևոր է ֆակուլտետների ղեկանների և ամբիոնի վարիչների գործունեությունը:

Մի շարք խնդիրների լուծման համար գոյություն ունեն ընթացակարգեր, որոնք ավելի են հեշտացնում այս կամ այն հարցի լուծումը՝ [«Ուսանողների գիտելիքների հսկման և գնահատման ռեյթինգային համակարգի կանոնակարգ»](#), [«Ուսանողների տեղավորման և փոխադրման կարգ»](#), [«Ակադեմիական ազնվության հայեցակարգ»](#):

Ուսանողները վարչական աշխատակազմին կարող են դիմել նաև միջնորդավորված՝ կուրսղեկների, Ուսանողական խորհրդի կամ էլ ակադեմիական խմբի ավագի միջոցով:

Համալսարանն ունի էլեկտրոնային կայք/www.gorsu.am/, որը նույնպես ուսանողների համար միջոց է վարչական աշխատակազմին դիմելու անհրաժեշտության դեպքում:

ՉԱՓՈՐՈՇԻՉ Է.ՍՈՒՀ-ում գործում են ուսանողների կարիերային նպաստող ծառայություններ:

Հիմքեր.

Ուսումնառողների կարիերային նպաստող ծառայությունների կանոնակարգերը [/հավելված 4ե1/](#), Այդ գործընթացներն իրականացնող ենթակառուցվածքը և դրա գործառույթները [/հավելված 4ե2, հավելված 4ե3, հավելված 4ե4, հավելված 4ե5/](#):

<i>Պատասխանել հետևյալ հարցին</i>	<i>%</i>
Ուսանողների քանի՞ տոկոսն է տեղեկացված կարիերային նպաստող ծառայությունների մասին,	45
Ուսանողների քանի՞ տոկոսն է օգտվում այդ ծառայություններից,	35
Ուսանողների քանի՞ տոկոսն է բավարարված վերոնշյալ ծառայություններից:	36

Վերլուծել ուսանողների կարիերային նպաստող ծառայությունների արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

ՀՀ-ի աշխատաշուկայի ոչ գրավիչ պայմաններում բուհն ավարտելուց հետո ուսանողները կանգնում են աշխատանք գտնելու և մասնագիտական հետագա գործունեության ծավալման խնդրի առջև, որի լուծումը բազմաթիվ օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառների հետևանքով բավականին բարդ է շրջանավարտների համար: Նման պայմաններում երիտասարդ մասնագետների կողմնորոշման, շրջանավարտների մրցունակության բարձրացման աջակցման խնդիրը համալսարանի համար դառնում է առաջնային: Այդ խնդրի լուծման, ինչպես նաև շրջանավարտների ու համալսարանի միջև կապի ամրապնդման համար 2011թ. սեպտեմբերի 1-ին ստեղծվել է Գորիսի պետական համալսարանի Ուսանողների կարիերայի աջակցման կենտրոնը: Այն գործում է համաձայն հաստատված կանոնադրության [/հավելված 4ե1/](#):

Համալսարանում ուսանողների կարիերային նպաստող ծառայությունների մատուցման արդյունավետությանը խոչընդոտում են ՀՀ-ի աշխատաշուկայում գործազրկության բարձր տոկոսը, մասնագիտական աշխատուժի շուկայի՝ դեռևս թերի ձևավորված լինելու հանգամանքը: Թույլ է նաև շրջանավարտների հետ հետադարձ կապը, որի պատճառով կարիերայի կենտրոնը շրջանավարտների անձնական թերթիկների միջոցով հավաքագրում է նրանց կոնտակտային տվյալները [/հավելված 4ե2/](#): Կարիերայի կենտրոնը խորհրդատվություն է տալիս ուսանողներին՝ աշխատանքի տեղավորման, մասնագիտական ռեզյումե (CV) կազմելու, հարցազրույցներին նախապատրաստվելու համար [/հավելված 4ե3/](#): Ճարտարագիտական մասնագիտությունների շրջանավարտների մրցունակությունը աշխատաշուկայում բարձրացնելու նպատակով համապատասխան մասնագիտական ամբիոնի հետ կազմակերպվել է հանդիպում քաղաքի ձեռնարկությունների («Որոտանի ՀԷԿ-երի համակարգ» (այժմ՝ «Քոնթուր Գլոբալ»), «Գորիսի գամմա» գործարան) ճարտարագետների հետ, նրանց առաջարկությամբ մասնագիտական ծրագրերում կատարվել են համապատասխան փոփոխություններ, որպեսզի շրջանավարտներն առավել պատրաստ լինեն աշխատանքի ընդունվելու համար:

Կարիերայի կենտրոնը առանձին էջով ներկայացված է ԳՊՀ-ի կայքում [/www.gorsu.am/](http://www.gorsu.am/), որտեղ ներկայացված են նաև ՀՀ-ի տարածքում աշխատանք առաջարկող վեբ-կայքերը:

Համալսարանի պաշտոնական կայքում շուտով կստեղծվեն նոր ծառայություններ, որոնք ուսանողներին կօգնեն աշխատանք գտնելու, իսկ ձեռնարկություններին՝ որակյալ կադրեր ձեռք բերելու հարցերում:

Ձեռնարկություններին տրամադրվել են հարցաթերթիկներ, որոնք թույլ են տալիս բացահայտել նրանց կարիքները որոշակի մասնագետների պահանջարկի առումով [/հավելված 4ե5/](#) :

Կարիերայի կենտրոնը համագործակցում է նաև համալսարանի սոցիալական գործընկերների հետ (ՎիվաՄեյլ ՄՏՄ, Օրանժ- Արմենիա, Բիլայն, տարբեր բանկային մասնաճյուղեր, Զբաղվածության տարածքային կենտրոն)՝ թափուր աշխատատեղերի առկայության դեպքում արագ արձագանքելու համար:

ՉԱՓՈՐՈՇԻՉ զ. ՄՈՒՀ-ը աջակցում է ուսանողներին՝ ներգրավվելու հաստատության գիտահետազոտական աշխատանքներում:

Հիմքեր

ՄՈՒՀ-ի համար գերակա գիտահետազոտական աշխատանքներում ուսումնառողների մասնակցության ապահովման քաղաքականությունը և ընթացակարգը/[ԳՊՀ ուսանողական գիտական ընկերության կանոնադրություն/](#):

ՄՈՒՀ-ի համար գերակա գիտահետազոտական աշխատանքներում ներգրավված ուսանողների թիվը՝ ըստ կրթական ծրագրերի

Ուսումնառողներ	2012	2013	2014	2015	2016
Բակալավր	4	3	8	4	7
Մագիստրոս	10	2	3	3	4
Հետազոտող					

Ուսումնառողների մասնակցությամբ իրականացվող ծրագրերի ցանկը և դրանցում ներգրավված ուսանողների թիվն ըստ տարիների

	Գիտահետազոտական ծրագիր	2012	2013	2014	2015	2016
1.	Մյունիքը հայ ազատագրական շարժման տարիներին, XX դարի առաջին քառորդ	1				
2.	«ՀԱՅՔ» գիտահետազոտական ծրագիր	2				

Ուսումնառողների հեղինակությանը և /կամ համահեղինակությամբ տպագրված աշխատանքների թիվը

	Տպագրված աշխատանք	2012	2013	2014	2015	2016
1.	Գիտական հոդված	29		1	4	7
2.	Մենագրություն					
3.	Գիտական ակնարկ	1				

Վերլուծել հաստատության գիտահետազոտական աշխատանքներում ուսանողների ներգրավվածության արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Գործիսի պետական համալսարանում ուսանողների ներգրավվածությունը գիտահետազոտական աշխատանքներում հիմնականում կատարվում է մասնագիտական ամբիոնների միջոցով: Աշխատանքներն իրականացվում են դեկավարների հետ համատեղ: Այդ

աշխատանքներում ավելի շատ ներգրավված են մագիստրատուրայի ուսանողները, քանի որ գիտահետազոտական աշխատանքների կատարումը մագիստրոսի կրթական ծրագրի պարտադիր բաղադրիչներից է:

ԳՊՀ-ում ուսանողներին գիտահետազոտական աշխատանքներում ներգրավվելուն նպաստում է նաև [Ուսանողական գիտական քննությունը](#): Վերջինս գործում է նաև համալսարանի բոլոր ֆակուլտետներում:

Համալսարանին կից գործում է նաև Սյունիք հայագիտական հետազոտությունների կենտրոնը: Կենտրոնի աշխատանքներում իրենց ակտիվ մասնակցությունն ունեն համալսարանի ուսանողները:

ՉԱՓՈՂՈՇԻՉ է: ՄՈՒՀ-ում գործում է ուսանողների իրավունքների պաշտպանության համար պատասխանատու մարմին:

Հիմքեր.

Ուսումնառողների իրավունքները արտացոլող փաստաթուղթը [/ԳՊՀ կանոնադրություն](#), հոդված 86, [ԳՊՀ ներքին աշխատանքային կանոններ](#), կետ 7, 8/

Ուսանողական խորհրդի կանոնադրությունը

Ուսումնառողների իրավունքներով, բողոքներով և բողոքարկումներով զբաղվող ենթակառուցվածքի գործունեությունը կանոնակարգող փաստաթղթերը/ [ԳՊՀ Ուսանողական խորհրդի կանոնակարգ](#) /,

Վերջին 5 տարիների ընթացքում ուսանողների բողոքների և այդ խնդիրների լուծման վիճակագրական տվյալները և համապատասխան հիմքերը:

<i>Պատասխանել հետևյալ հարցերին</i>	<i>%</i>
Ուսանողների քանի՞ տոկոսն է տեղեկացված համապատասխան ծառայությունների մասին,	66
Ուսանողների քանի՞ տոկոսն է օգտվում համապատասխան ծառայությունից,	37
Ուսումնառողների քանի՞ տոկոսն է բավարարված վերոնշյալ գործընթացից:	36

Վերլուծել ՄՈՒՀ-ում գործող ուսումնառողների իրավունքների պաշտպանության համար պատասխանատու մարմնի աշխատանքների արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Գործիսի պետական համալսարանի ուսանողների իրավունքները սահմանվում են ՀՀ օրենսդրությամբ («Կրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 49, «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 17, 3, 4 կետեր), [ԳՊՀ-ի կանոնադրությամբ](#) (հոդված 86) , [ԳՊՀ-ի ներքին կարգապահական կանոններով](#) կետ 7, 8 և այլ իրավական ակտերով:

ՄՈՒՀ-ում գործում է ուսանողների իրավունքների պաշտպանության համար պատասխանատու մարմին՝ ի դեմս համալսարանի Ուսանողական խորհրդի, որը համալսարանի ուսանողական ինքնակառավարման, սովորողներին միավորող, նրանց շահերը պաշտպանող ընտրովի ներկայացուցչական մարմին է: Ուսանողական խորհրդի լիազորություններն ու գործունեության կարգը ՀՀ օրենսդրությանը և ենթաօրենսդրական ակտերին համապատասխան սահմանվում են ԳՊՀ-ի կանոնադրությամբ և [ԳՊՀ Ուսանողական խորհրդի կանոնակարգով](#):

Ուսանողական խորհրդի հիմնական նպատակն է բարձրացնել ուսանողի դերն ու ակտիվությունը ուսումնական գործընթացի կազմակերպման ու որակի ապահովման մեջ և հասարակական կյանքում:

Ուսանողների մոտ 12%-ը ընդգրկված է ԳՊՀ-ի Ուսանողական խորհրդի և նրա առանձին հանձնաժողովների (ուսումնագիտական, լրատվության և տեղեկատվության, մշակութային, մարզական և այլն) կազմում:

ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, համալսարանի կանոնադրության համաձայն՝ Ուսանողական խորհուրդն ունի ուսանողության ներկայացուցչություն համալսարանի կառավարման մարմիններում, որով ապահովվում է ուսանողների մասնակցությունը համալսարանի (ֆակուլտետների) գործունեությանը վերաբերող կարևորագույն հարցերի լուծմանը: Ուսանողության ներկայացուցիչների միջոցով համալսարանի կառավարման մարմինների (ԳՊՀ-ի Խորհուրդ, Գիտական խորհուրդ, Ռեկտորատ, Ֆակուլտետների խորհուրդներ) ժողովներում և նիստերում բարձրացվում են ուսանողների խնդիրները, նրանց իրավունքների բացահայտված խախտումները և այլն: Ուսանողական խորհուրդը ներկայումս մշակում է ուսանողների հետ աշխատանքի նոր առցանց գործիքներ, զարգացման և կատարելագործման փուլում է ԳՊՀ-ի նորաստեղծ կայքի «[Ուսանող](#)» ենթաբաժինը, համացանցում գործում է Ուսանողական խորհրդի ֆեյսբուքյան էջը, որտեղ նույնպես ուսանողները բարձրացնում են իրենց հուզող հարցերն ու հիմնախնդիրները:

Ուսանողների խնդիրների անմիջական լուծումն ապահովվում է ԳՊՀ-ի ռեկտորի, պրոռեկտորի, ֆակուլտետների դեկանների և անհրաժեշտության դեպքում՝ այլ ստորաբաժանումների կողմից:

Ուսումնառողների իրավունքների և շահերի պաշտպանության նպատակով նախատեսվում է համալսարանում ստեղծել նաև ուսումնառողների իրավունքների պաշտպանության հանձնաժողով, որը կզբաղվի ուսանողների դիմում-բողոքների ընդունմամբ՝ տալով համապատասխան ընթացք և աջակցելով ուսանողների իրավունքների պաշտպանության արդյունավետ իրականացմանը:

ՉԱՓՈՐՈՇԻՉ ը.ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների կրթական, խորհրդատվական և այլ մատուցվող ծառայությունների գնահատման և որակի ապահովման մեխանիզմներ:

Հիմքեր

ՄՈՒՀ-ում գործող ուսանողների կրթական, խորհրդատվական և այլ օժանդակող ծառայությունների մատուցման գնահատման և որակի ապահովման քաղաքականությունը, ընթացակարգերը և մեխանիզմները/[ԳՊՀ հաշվետվություն/](#)

Հաստատության գործունեության որակի ապահովման գործընթացներում ուսումնառողների դերը սահմանող կանոնակարգերը

Ուսումնական գործընթացների վերաբերյալ ուսումնառողների արձագանքի օրինակները:/[ԳՊՀ պաշտոնաթերթ, էջ 4/](#)

Վերլուծել ՄՈՒՀ-ում գործող ուսանողների կրթական, խորհրդատվական և այլ օժանդակող ծառայությունների գնահատման և դրանց որակի ապահովման մեխանիզմների արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Ուսանողների կրթական, խորհրդատվական և մատուցվող այլ ծառայությունների գնահատումը և որակի ապահովումը ամրագրված է Գործիքի պետական համալսարանի [2011-2016 թթ. հայեցակարգում](#), [կետ 2.2.3, 2.2.4](#): Այն ենթադրում է ԳՊՀ-ի կրթության ներքին որակը հնարավորինս համապատասխանեցնել եվրոպական ENQA չափանիշներով պահանջվող

մակարդակին: Դրան հասնելու երաշխիքներից են կրթական ծրագրերի պարբերաբար վերանայումը, համապատասխանեցումը աշխատաշուկայի պահանջներին և այլն:

Ուսանողների կրթական, խորհրդատվական և մատուցվող այլ ծառայությունների գնահատման, որակի ապահովման և մեխանիզմների կատարելագործման համար համալսարանում պարբերաբար անցկացվում են հարցումներ **/հավելված 4բ4/**:

Ուսանողների կրթական, խորհրդատվական և մատուցվող այլ ծառայությունների գնահատմանը և որակի ապահովմանը նպաստում են նաև համալսարանի **ռեկտորի**, ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահների, ֆակուլտետների ղեկանների և այլ ստորաբաժանումների ղեկավարների հաշվետվությունները: Միաժամանակ համալսարանում գործող ընթացակարգերը հնարավորություն են տալիս ուսանողներին անմիջականորեն մասնակցելու ուսանողների կրթական, խորհրդատվական և մատուցվող այլ ծառայությունների գնահատման և որակի ապահովման գործընթացներին:

Շրջանավարտների զբաղվածության մակարդակը վերջին հինգ տարվա համար (թվով)						
	Զբաղվածություն/ուսման շարունակություն	2012	2013	2014	2015	2016
1.	Ավարտելուց անմիջապես հետո	211	213	186		
2.	Նախքան ավարտելը	103	102	98		
3.	Մասնագիտությամբ	60	66	57		
4.	Ոչ մասնագիտությամբ	108	137	124		
5.	Ավարտելուց հետո ուսումը շարունակող ուսանողների թիվը	10	10	5		
6.	Ավարտելուց 2-5 տարի հետո զբաղվածության մակարդակը	70	72	68		
7.	Գործազուրկ ուսանողների տոկոսը	46	45	44		
8.	Ավարտելուց 5 տարի հետո զբաղվածության մակարդակը	60	62	63		

Չափանիշ 4-ի վերաբերյալ SWOT վերլուծություն վերջին 5 տարիների համար.

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
1. Ուսանողների հավաքագրման և ընդունելության իրականացման քաղաքականություն և մեխանիզմների առկայություն, 2. Քոլեջների հետ պայմանագրերի առկայություն, 3. Համալսարանի վարձավճարների ցածր լինելը, 4. Ուսանողների իրավունքների պաշտպանության մարմինների և մեխանիզմների առկայություն, 5. Կարիերայի կենտրոնի առկայություն, 6. Ուսանողների ներգրավվածությունը համալսարանի կառավարման, կրթական, խորհրդատվական և մատուցվող այլ	1. Գիտահետազոտական աշխատանքներում ուսանողների սակավ ներգրավվածություն, 2. Գիտահետազոտական աշխատանքների կատարման համար ոչ բավարար ռեսուրսներ, 3. Շրջանավարտների և համալսարանի միջև թույլ կապ, 4. Համալսարանում օտարերկրացի ուսանողների բացակայություն, 5. Կատարյալ չեն ուսանողների կարիքների վերհանման մեխանիզմները, 6. Ուսանողների վարչական աշխատակազմին դիմելու ընթացակարգերը միավորված չեն մեկ

<p>ծառայությունների գնահատման և որակի ապահովման գործընթացներին,</p> <p>7. Կրեդիտային հենքով ուսուցման ուղեցույցների առկայություն,</p> <p>8. Անվանական կրթաթոշակների առկայություն,</p> <p>9. Համալսարանի պաշտոնաթերթի, պաշտոնական կայքի առկայություն,</p> <p>10. Վարձավճարների հավաքագրման այլընտրանքային աղբյուրներ:</p>	<p>ամբողջական փաստաթղթի մեջ,</p> <p>7. Ոչ բոլոր անհրաժեշտ ընթացակարգերի առկայություն:</p>
Հնարավորություններ	Վտանգներ
<p>1. Համալսարանի համագործակցությունը մարզի հանրակրթական դպրոցների, քոլեջների և այլ տեղական ու օտարերկրյա բուհերի հետ,</p> <p>2. Միջազգային կապերի ընդլայնում,</p> <p>3. Ուսանողների և պրոֆեսորադասախոսական կազմի շարժունության խթանում,</p> <p>4. Դասավանդման նյութերի և լաբորատորիաների արդիականացում,</p> <p>5. Ուսանողական խորհրդի և Ուսանողական գիտական ընկերության համագործակցությունը այլ բուհերի ուսանողական խորհուրդների և ուսանողական գիտական ընկերությունների հետ,</p> <p>6. Համալսարան-գործատու կապի ընդլայնում:</p>	<p>1. Համալսարանում շրջանավարտների կապի բացակայություն,</p> <p>2. Դիմորդների թվի նվազում,</p> <p>3. Աշխատաշուկայում կատարվող կտրուկ և անկախատեսելի փոփոխություններ,</p> <p>4. Գործազրկության բարձր մակարդակ,</p> <p>5. Օտար լեզուների իմացության ոչ բավարար մակարդակ:</p>

V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ

ԶԱՓԱՆԻՇ: *ՄՈՒՀ-ի առաքելությանը հասնելու և ՄԿԾ-ների նպատակներն իրականացնելու համար հաստատությունը ապահովված է անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնասովանողական կազմով:*

անհրաժեշտ որակավորումներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի ընտրության քաղաքականություն և ընթացակարգեր:

Հիմքեր

Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի աշխատանքի ընդունման և հեռացման քաղաքականությունը և ընթացակարգերը [/ԳՊՀ կանոնադրություն, ԳՊՀ ներքին աշխատանքային կանոններ/](#),

Հիմնական և համատեղությամբ դասավանդողների կազմը՝ ըստ որակավորումների՝ գիտական աստիճանների և կոչումները նշումով [/Հավելված 5ե1/](#),

Դասավանդողների խրախուսման քաղաքականությունը և ընթացակարգերը:

Գործիսի պետական համալսարանն իր առջև դրված ռազմավարական խնդիրները լուծելու հարցում կարևորում է ՄԿԾ-երի նպատակների իրականացման համար անհրաժեշտ որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի անհրաժեշտությունը և պահպանումը, որը, որպես ռազմավարական նպատակ, ամրագրված է [ԳՊՀ ՌԾ-ում / էջ 20/:](#)

ՊԴ և ՈԻՕ կազմը ձևավորվում է «Կրթության մասին» ՀՀ օրենքի, «Բուհական և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի, ՀՀ աշխատանքային օրենսգրքի դրույթներին համապատասխան և ամրագրված է « »-ում, [«ԳՊՀ ներքին աշխատանքային կանոններ»](#)-ում [/էջ 10/](#), «Պրոֆեսորադասախոսական կազմի ձևավորման կանոնակարգ»-ում [/հավելված 5ա1/:](#)

ԳՊՀ «ՊԴ կազմի ձևավորման կանոնակարգ»-ը հաստատվել է ԳՊՀ գիտական խորհրդի 07.02.2007թ-ի նիստի թիվ 4 որոշմամբ: Այդ փաստաթղթով սահմանվում են պրոֆեսորադասախոսական կազմի պաշտոնների ստեղծման կարգն ու պայմանները, տարբեր տարակարգերի (պրոֆեսոր, դոցենտ, ասիստենտ, դասախոս) որակական ու քանակական բնութագրերը, պաշտոնների նշանակման և պայմանագրերի վերակնքման սկզբունքները:

ՊԴ անձնակազմի աշխատանքի ընդունումը կատարվում է մրցութային կարգով նախապես հրապարակված չափանիշներով, որի գերակա նպատակը համալսարանի հիմնական դասախոսական կազմի ընտրությունն է: Չափանիշներ են՝ մասնագիտական կրթությունը, որակավորումը, մասնագիտացումը և դրանց համապատասխանությունը դասավանդվող առարկաների ոլորտին, աշխատանքային փորձը, մանկավարժական ձիրքի առկայությունը, գիտական աստիճանը և կոչումը: ԳՊՀ գիտխորհրդին կից ստեղծված մրցութային հանձնաժողովը ապահովում է կադրերի ընտրության օրինականությունը: Գործընթացն ավարտում է աշխատանքային պայմանագրի կնքմամբ, որով սահմանվում են բուհի և դասախոսի պարտականություններն ու իրավունքները:

ԳՊՀ-ում գործում են աշխատանքային պայմանագրի հետևյալ ձևերը՝ հիմնական, համատեղության կարգով և ժամավճարային հիմունքներով:

Արտաքին համատեղությամբ աշխատակիցների կարգավիճակով այլ կազմակերպություններից հրավիրվում են համապատասխան որակավորում, գիտական աստիճան և կոչում ունեցող մասնագետներ: Այդ դեպքում մրցութային ընտրություն չի անցկացվում. հրամանագրումը կատարվում է ռեկտորի կողմից: Ժամավճարային հիմունքներով դասախոսի ներգրավման համակարգը թույլ է տալիս երաշխավորելու կրթական ծրագրի ապահովվածությունը նեղ մասնագիտացում և գործնական հմտություններ ունեցող մասնագետներով:

Ստորև առանձին գրաֆիկներով ներկայացնում է ԳՊՀ-ի ՊԴ կազմը՝ ըստ գիտական աստիճանների, կոչումների՝ վերջին երեք տարիների կտրվածքով:

- ՊԴ հիմնական կազմ

Աղյուսակ 5.1

Ուստարի	Դոկտոր	Գիտ. թեկնածու	Առանց գիտ. աստիճանի	Ընդամենը
2013-2014	5	25	64	94
2014-2015	5	29	55	89
2015-2016	5	31	56	92

Ինչպես երևում է 5.1 աղյուսակից, ՊԴ հիմնական կազմում վերջին երեք տարվա ընթացքում դիտարկվել է գիտական աստիճան ունեցողների աճ՝ 7 %, որը կազմում է 6 մարդ:

Աղյուսակ 5.2

Ուստարի	Պրոֆեսոր	Դոցենտ	Առանց գիտ. կոչման	Ընդամենը
2013-2014	4	23	67	94
2014-2015	4	23	62	89
2015/16	5	24	63	92

Ինչպես երևում է 5.2 աղյուսակից, ՊԴ հիմնական կազմում վերջին երեք տարվա ընթացքում դիտարկվել է գիտական կոչումներ ունեցողների աճ՝ 2,5 %, որը կազմում է 2 մարդ:

Աղյուսակ 5.3

Ուստարի	Գիտ. թեկնածու	Գիտ. դոկտոր	Դոցենտ	Պրոֆեսոր
2013-2014	25	5	23	4
2014-2015	29	5	23	4
2015-2016	31	5	24	5

5.3 աղյուսակում պատկերված է վերջին երեք տարվա ընթացքում գիտական աստիճան և գիտական կոչում ունեցողների քանակը: 2015-2016 ուսումնական տարում գիտական աստիճան ունեցողների թիվը կազմել է 36, գիտական կոչումներ ունեցողների թիվը՝ 29:

Վերջին երեք տարվա ընթացքում գիտությունների թեկնածուի գիտական աստիճան են ստացել 10 դասախոս, դոցենտի գիտական կոչում՝ 5 դասախոս:

2016-2017 ուսումնական տարում (հաշվետու ժամանակաշրջանից հետո) դոկտորի գիտական աստիճան են ստացել 2 դասախոս, դոցենտի գիտական կոչում՝ 2 դասախոս:

ՊԴ հիմնական և համատեղող դասավանդողների կազմ.

Աղյուսակ 5.4

Ուստարի	Դոկտոր	Գիտ. թեկնածու	Առանց գիտ. աստիճանի	Ընդամենը
---------	--------	---------------	---------------------	----------

2013-2014	12	28	77	117
2014-2015	8	31	66	105
2015-2016	11	34	67	112

Աղյուսակ 5.5

Ուստարի	Պրոֆեսոր	Դոցենտ	Առանց գիտ. կոչման	Ընդամենը
2013-2014	10	24	83	117
2014-2015	7	23	75	105
2015-2016	10	24	78	112

Աղյուսակ 5.6

Ուստարի	Գիտ. թեկնածու	Գիտ. դոկտոր	Դոցենտ	Պրոֆեսոր
2013-2014	28	12	24	10
2014-2015	31	8	23	7
2015-2016	34	11	24	10

Թեև ԳՊՀ-ի ՊԴ կազմի ձևավորումը հաջող է ընթանում, այնուամենայնիվ առկա է մասնագետներին պահպանելու, նրանց ժամաքանակով ապահովելու խնդիրը՝ կապված վերջին երեք տարում դիմորդների քանակի կտրուկ նվազման հետ: Համապատասխան մասնագիտական կուրսերի թերկոմպլեկտավորման պատճառով նվազել է ՄԿԾ-ի իրականացման համար անհրաժեշտ մասնագետների տարեկան ծանրաբեռնվածությունը, և այդ ուղղությամբ դեռևս անելիքներ կան:

ԳՊՀ-ի ՈԻՕ կազմի ընտրությունն իրականացվում է ըստ բազային կրթության, ամբիոնի ղեկավարության համաձայնությամբ՝ ըստ այդ ամբիոնում իրականացվող կրթական ծրագրերի առանձնահատկությունների:

Որպես կանոն՝ ՈԻՕ հաստիքների ձևավորումը կատարվում է համապատասխան ստորաբաժանման ղեկավարի ներկայացմամբ, առավելություն ստանում են այն հավակնորդները, որոնք ունեն մասնագիտական որակի բարձրացման հեռանկարներ:

Երիտասարդ մասնագետներին տրվում է հնարավորություն ներքին համատեղությամբ իրականացնելու դասախոսական աշխատանք՝ հիմնականում լաբորատոր և գործնական պարապմունքների ձևով:

ՈԻՕ կազմը իրավունք ունի մասնագիտական առաջխաղացման նպատակով սովորելու հաջորդ կրթական աստիճանում՝ անհատական ժամանակացույցով, պատշաճ իրականացնելով նաև աշխատանքային պարտականությունները:

ԳՊՀ-ի ՊԴ և ՈԻՕ կազմերի խրախուսման քաղաքականությունը ամրագրված է [§ԳՊՀ ներքին աշխատանքային կանոններ](#)¹ -ում /Էջ 20/:

Աշխատանքային պարտականությունների օրինակելի կատարման, աշխատանքի արդյունավետության բարձրացման, աշխատանքում նորամուծությունների, գիտահետազոտական և հասարակական աշխատանքների ակտիվ մասնակցության համար սահմանվում են խրախուսանքներ.

1. Շնորհակալության հայտնում
2. Միանվագ դրամական պարգևատրում
3. Պարգևատրում հուշանվերներով, պատվոգրերով, մեդալներով:

Օրենքով նախատեսված դեպքերում և կարգով աշխատողները կարող են ներկայացվել պետական պարգևների:

Մշակվում է աշխատանքի վարձատրության տարբերակման նոր մեխանիզմ, ինչը կնպաստի դասավանդողների մասնագիտական որակների և նրանց աշխատանքի արդյունավետության բարձրացմանը:

ԳՊՀ-ում մշտապես աշխատանքներ են տարվում ՊԴ և ՈԻՕ անձնակազմի մասնագիտական որակները համալսարանի առաքելությանը և կրթական ծրագրերին առավելագույնս համապատասխանեցնելու ուղղությամբ:

ՊԴ կազմի պաշտոնների տեղակալման և մասնագիտական առաջնային չափանիշներն են՝ որակավորման մակարդակը, գիտական աստիճանը, կոչումը, ուսումնական, հետազոտական, մեթոդական-կազմակերպչական ձևերը, տպագրված գիտական աշխատանքները, ուսանողների կողմից դասախոսի աշխատանքի որակի գնահատումը, դասալսումները:

Այդ չափանիշները հնարավորություն են ստեղծում իրագործելու բուհի առաքելությունը և իրականացնելու ՄԿԾ-ի նպատակները: Սակայն քաղաքականությունը և ընթացակարգերն ունեն արդիականացման և կատարելագործման անհրաժեշտություն:

ԳՊՀ-ում հստակեցվում են աշխատակիցների իրավունքներն ու պարտականությունները: Հաշվի են առնվում մասնագիտական և աշխատանքային փորձը, պատասխանատվությունը, նորարարական մոտեցումները դասավանդման գործընթացում: Դրական արդյունքներ է տալիս հաստատությունը երիտասարդ մասնագետներով համալրելու քաղաքականությունը: Բուհի ՊԴ, վարչական և ՈԻՕ կազմի համալրումը զգալի չափով իրականացվում է համալսարանի տարբեր տարիների շրջանավարտների հաշվին, որը ներկայումս ունի հետևյալ պատկերը.

ՊԴ աշխատակազմ –	29 մարդ` 37 %
Վարչական աշխատակազմ -	10 մարդ` 47 %
ՈԻՕ աշխատակազմ -	21 մարդ` 65 %

ՉԱՓՈՐՈՇԻՉ ք. ՄՈԻՀ-ի յուրաքանչյուր կրթական ծրագրի համար սահմանված են պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող հստակ պահանջներ:

Հիմքեր

Մասնագիտության կրթական ծրագրի պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող պահանջները,

Մասնագիտական որակներին ներկայացվող պահանջների վերանայման քաղաքականությունը, Վերանայման վերլուծությունները և արդյունքների արտացոլումը նոր քաղաքականության մեջ:

ԳՊՀ-ի պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող պահանջները սահմանված են «ԳՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի ձևավորման կանոնակարգ»-ում / [հավելված 5ա1](#)/ և դասախոսի ուսումնական բեռնվածքների հաշվարկման ձևավորման ժամային նորմերում, որը յուրաքանչյուր ուսումնական տարի մշակվում է ուսումնական վարչությունում և հաստատվում ռեկտորի կողմից /[հավելված 5բ1](#)/: Առաջինի մեջ, ըստ պաշտոնների, սահմանվում են ուսումնական, հետազոտական և մեթոդական-կազմակերպական գործունեության բնագավառները, որում տարանջատված է պրոֆեսորի, դոցենտի, ասիստենտի, դասախոսի իրավասությունների շրջանակը: Երկրորդ փաստաթղթում մանրամասն նկարագրված է դասավանդողի ծանրաբեռնվածության բաղադրիչների քանակական և ժամային նորմերը: Դրանք այն փաստաթղթերն են, որոնցով կարգավորվում է ոլորտը:

Մշակված են նշված պաշտոններին ներկայացվող հստակ պահանջներ.

Պրոֆեսոր: Դասախոսությունների վարում, մագիստրանտների, ասպիրանտների և հայցորդների ատենախոսությունների ղեկավարում, հետազոտական խմբի կամ ծրագրի ղեկավարում, հետազոտական աշխատանքների կազմակերպում, մասնակցություն ծրագրային, մեթոդական և մշտական հանձնախմբերի աշխատանքներին:

Դոցենտ: Դասախոսությունների վարում, գործնական և լաբորատոր պարապմունքների անցկացում, մագիստրանտների, ասպիրանտների և հայցորդների ատենախոսությունների ղեկավարում, մագիստրոսական կրթական ծրագրի ղեկավարում, հետազոտական խմբի կամ ծրագրի ղեկավարում, հետազոտական աշխատանքների կազմակերպում և իրականացում, մասնակցություն ծրագրային, մեթոդական և մշտական հանձնախմբերի աշխատանքներին:


Ասիստենտ: Դասախոսությունների, գործնական և լաբորատոր պարապմունքների և խորհրդատվությունների անցկացում, մագիստրոսական թեզերի ղեկավարում, մասնակցություն ուսումնամեթոդական և հետազոտական աշխատանքներին:

Դասախոս: Գործնական, լաբորատոր և սեմինար պարապմունքների անցկացում և սեմինարների ղեկավարում:

Կրթական ծրագրերը համապատասխան մասնագետներով ապահովելը իրականացվում է մասնագիտական ամբիոնի կողմից: Յուրաքանչյուր մասնագիտության համար դասախոսներ ընտրելիս հիմնվում են վերջինիս բազային կրթության, աշխատանքային փորձի (դասավանդման), արտադրական փորձի (տվյալ ոլորտի), մրցույթի և որակավորման արդյունքների վրա:

Պրոֆեսորադասախոսական կազմի կոմպետենցիաների՝ կրթական ծրագրերին համապատասխանելու մասին են վկայում նաև գիտական աստիճան և կոչում ունեցող դասախոսների թիվը՝ 47:

Ներկայացնում ենք ԳՊՀ-ի հիմնական հաստիքային դասավանդող անձնակազմի թվաքանակի բաշխվածությունն ըստ գիտության բնագավառների 2015-2016 ուստարում. գծ. 5.7:



գծ. 5.7

ԳՊՀ ՊԴ կազմի մասնագիտական կարողությունները հիմնականում համապատասխանում են կրթական ծրագրերով շնորհվող որակավորումներին:

ՉՍՓՈՐՈՇԻՉ գ. ՄՈՒՀ-ը սահմանել է հստակ քաղաքականություն և ընթացակարգեր դասախոսական կազմի պարբերաբար գնահատման համար:

Հիմքեր

Դասավանդողների մասնագիտական որակների և նրանց աշխատանքի գնահատման քաղաքականությունը և ընթացակարգերը,

Դասավանդողների մասնագիտական որակների և նրանց աշխատանքի գնահատման մեխանիզմներն ու գործիքները /[Հավելված 5գ2](#)/,

Դասավանդողների մասնագիտական որակների և նրանց աշխատանքի գնահատման գործընթացի արդյունավետությունն արտահայտող այլ հիմքեր և վերլուծություններ/[Հավելված 5գ3](#)/:

Գործիսի պետական համալսարանում պրոֆեսորադասախոսական կազմի գնահատումը հիմնականում կատարվում է դասալսումների, գիտահետազոտական գործունեության (գիտական հոդվածներ, դասագրքեր, մենագրություններ, ուսումնական ձեռնարկներ) և ուսանողների շրջանում կատարվող հարցումների միջոցով:

Ուսումնական տարվա սկզբում դասախոսը ամբիոն է ներկայացնում տարեկան աշխատանքային ծրագիրը /[Հավելված 5գ1](#)/, որի քննարկումը և արդյունքների գնահատումը կատարվում է ուսումնական տարվա վերջում: Արդյունքը հանդիսանում է դասախոսի մասնագիտական որակների գնահատման հիմնական բաղադրիչներից մեկը: Կատարողականի վերջնական հաշվետվությունը ներկայացվում է ուսումնական վարչություն:

Դասալսումներն իրականացվում են ժամանակացույցին համապատասխան, արդյունքում կազմվում է համապատասխան արձանագրություն /[Հավելված 5գ2](#) /:

Բուհում դեռևս մշակված չեն դասալուսմների արդյունավետությունը գնահատելու համար հստակ պահանջներ և ընթացակարգեր: Այժմ փորձ է արվում նաև ներդնել ինքնագնահատման մեխանիզմներ:

Ուսանողների կողմից դասախոսական կազմի պարբերաբար գնահատումն իրավանացվում է դասախոսների գնահատման հաստատված հարցաշարով՝ յուրաքանչյուր քննաշրջանի ավարտից հետո՝ ռեկտորի հրամանով հաստատված հանձնաժողովների կողմից /[Հավելված 5գ3](#) /: Նպատակն է բացահայտելու ուսումնառողների կարծիքները դասախոսների ուսումնամեթոդական, հոգեբանամանկավարժական մոտեցումների վերաբերյալ: Անցկացված հարցումների վերլուծության արդյունքները քննարկվում են համապատասխան ամբիոններում՝ բարելավման նպատակով որոշակի քայլեր ձեռնարկելու համար և հաշվի են առնվում ՊԴ կազմի մրցույթի անկացման ժամանակ:

ՊԴ կազմի որակավորումների գնահատականը ուսանողների կողմից 2013-2016թթ. ժամանակահատվածում /ըստ ամբիոնների/

h/h	Ամբիոններ	Գնահատականը		
		2012-13 ուստարի	2013-14 ուստարի	2015-16 ուստարի
1.	Հայոց լեզվի և գրականության	4,6	4,7	4,52
2.	Մանկավարժության և հոգեբանության	4,3	4,69	4,72
3.	Պատմության	4,4	4,7	4,6
4.	Իրավագիտության	4,6	4,79	4,67
5.	Ֆիզիկական դաստիարակության և սպորտի	3,9	4,2	3,67
6.	Էլեկտրոնիկայի և Էլեկտրաէներգետիկայի	4,3	4,95	4,48
7.	Տնտեսագիտության	4,0	4,73	4,54
8.	Օտար լեզուների	4,62	4,57	4,59
9.	Մաթեմատիկայի և ինֆորմատիկայի	3,8	4,29	4,48
10.	Կենսաբանության և քիմիայի	4,5	4,69	4,58
11.	Ֆիզիկայի սեկտոր	4,2	4,33	4,27

Ուսանողական հարցումների արդյունքների վերլուծությունը ընդհանուր առմամբ նպաստում է դասախոսների աշխատանքների որակի և արդյունավետության բարձրացմանը: Հարցման միջոցով ստացած անհատական տվյալները, սակայն, ոչ միշտ են արդյունավետ արտացոլում դասախոսների մասնագիտական և մանկավարժական հմտությունները, քանի որ դրանք հաճախ կրում են ենթակայական բնույթ:

Բուհում դեռևս բացակայում են գնահատման գործընթացի արդյունավետությունն արտահայտող համապատասխան ընթացակարգերը և մեխանիզմները:

ՀՄՓՈՐՈՇԻՉ դ. Պարբերաբար իրականացվող ներքին և արտաքին գնահատումների արդյունքում բացահայտված կարիքներին համապատասխան՝ ՄՈՒՀ-ն իրականացնում է դասավանդողների կատարելագործմանն ուղղված միջոցառումներ:

Հիմքեր

Պահանջվող որակավորումներին համապատասխան դասավանդողների կոմպետենցիաների շրջանակի ընդլայնումն ապահովող մեթոդները և հիմքերը,

Դասավանդողների կատարելագործման միջոցառումների պլանները՝ ըստ մեթոդական, մասնագիտական և բարեփոխումների ուղղվածությունների,

Դասավանդողների կատարելագործման թեմաները,

Դասավանդողների կատարելագործման միջոցառումների ժամանակացույցը,

Այլ հիմքեր/[Հավելված 9ա1/](#):

ՀՀ և միջազգային կրթական շուկայի մրցակցային պայմանները, գիտական տեղեկատվության ծավալների մշտական աճը պայմանավորում են դասախոսական կազմի վերապատրաստման անհրաժեշտությունը: Դրա նպատակն է դասախոսական ներուժի այնպիսի մակարդակի ապահովումը, որը կհամապատասխանի ՀՀ և միջազգային կրթական շուկայի մեծացող պահանջներին: Այդ նպատակի իրագործմանը նպաստում է ԳՊՀ-ի միջազգային համագործակցության և կրթության որակի ապահովման բաժինը:

Դասախոսների վերապատրաստման և կատարելագործման անհրաժեշտություն առաջացավ՝ կապված նաև կրեդիտամոդուլային համակարգով ուսումնական գործընթացին ինտեգրվելու հետ: «ՊԴ և ՈՒՕ անձնակազմի որակավորման բարձրացման և վերապատրաստման կանոնակարգ»-ի [/հավելված 5դ1/](#) համաձայն ԳՊՀ-ում կազմակերպվում են վերապատրաստման դասընթացներ (օտար լեզուների ուսուցում, համակարգչային հմտություններ, տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումն ուսումնական գործընթացում), կնքվում են միջազգային համագործակցության պայմանագրեր, համաձայնագրեր, ՀՀ և միջազգային հեղինակավոր բուհերի հետ [/հավելված 9ա1/](#):

Վերջին շրջանում դասախոսների որակավորման բարձրացման ծրագրերը առավելապես ուղղորդվեցին դեպի Բոլոնիայի գործընթացի համատեքստում տեղի ունեցող բարձրագույն կրթության բարեփոխումները, վերամշակվեցին դասախոսությունների կատարելագործման ծրագրերը:

ԳՊՀ ՊԴ և վարչական կազմի որակավորման բարձրացմանը նպաստում են նաև TEMPUS, ERASMUS+ ծրագրերի շրջանակներում իրականացվող վերապատրաստման դասընթացները: Բուհի դասախոսները մասնակցություն են ունեցել նաև ՀՀ ԿԳ նախարարության որակի ապահովման ազգային կենտրոնի կողմից կազմակերպված դասընթացներին:

Ներկայացնում ենք վերապատրաստում անցած աշխատակիցների թիվն՝ ըստ ծրագրերի.

N	Կրթական ծրագրերի կամ դասընթացի անվանումը	ԳՊՀ	Այլ	Ընդամենը
1.	Համակարգչային հմտություններ	25	-	25
2.	Մասնագիտական	-	6	6
3.	Մասնագիտական կրթության որակի ապահովման համակարգում և	-	4	4

	բարելավում			
4.	Ընթացիկ գնահատում և թեստավորում	-	2	2
5.	Կրթության որակ և համապատասխանություն	-	33	33
6.	Օտար լեզուներ	12	4	16
Ընդամենը		37	49	86

Պայմանավորված ուսանողների և ՊԴ կազմի շարժունության ցածր ցուցանիշով՝ առաջնային խնդիր է համարվում բուհի անձնակազմի լեզվաբանական մակարդակի բարձրացումը: Դեռևս անելիքները շատ են վերապատրաստումների ծրագրերի (մասնավորապես մասնագիտական) և, ընդհանրապես, ոլորտի կանոնակարգային կազմակերպման և իրականացման առումով: Ներկայումս քննարկման փուլում է ԳՊՀ-ի ՊԴ կազմի վերապատրաստման և որակավորման բարձրացման ծրագրի նորացված տարբերակը:

ԶՄՓՈՐՈՇԻՉ և ՄՈՒՀ-ը երաշխավորում է մասնագիտությունների կրթական ծրագրերի համապատասխան պրոֆեսորադասախոսական կազմով ապահովվածության կայունությունը:

Հիմքեր

Հիմնական պրոֆեսորադասախոսական կազմի ցանկը (նշելով որակավորումները, գիտական աստիճանները և/կամ կոչումները)/[Հավելված 5ե1/](#),

Հիմնական պրոֆեսորադասախոսական կազմի կայունությունն ապահովող քաղաքականությունը և ընթացակարգերը,

Համատեղությամբ աշխատող դասավանդողների ցանկը (նշելով որակավորումները, գիտական աստիճանները և/կամ կոչումները):

ԳՊՀ-ն երաշխավորում է մասնագիտությունների կրթական ծրագրերին համապատասխան պրոֆեսորադասախոսական կազմով ապահովվածության կայունությունը: Դասախոսական կազմ ընտրելիս հաշվի են առնվում գործող և նոր ներդրվելիք մասնագիտությունների ցանկը, ինչպես նաև կրթական ծրագրերում կատարվող փոփոխությունները: Ներկայացնում ենք հիմնական և համատեղության հիմունքներով աշխատող պրոֆեսորադասախոսական կազմի ցանկը /[Հավելված 5ե1 /](#):

ԳՊՀ-ի ՊԴ կազմի թվաքանակը 112 է (առ 01.09.2016թ.), որն, ըստ գիտական աստիճանների և կոչումների, ներկայացված է 5.4; 5.5; 5.6 աղյուսակներում:

ՊԴ կազմի թվաքանակը, ըստ գիտական աստիճանի, պաշտոնի, գենդերային կազմի, վերջին երեք տարիներին ունի հետևյալ արտահայտությունը /չափ. և գրաֆիկ 5.8; 5.9; 5.10/:

աղյուսակ. 5.8

2013-2014	Գիտական կոչում և աստիճան	Գենդերային կազմ՝ այդ թվում
-----------	--------------------------	----------------------------

N	Դասավանդողներ	ընդամենը	Դոկտոր պրոֆեսոր	Դոկտոր	գ/թ. դոցենտ	դոցենտ	գ/թ. ասիստենտ	Դասախոս, ասիստենտ	կին	Ինտերնայր
1	Հիմնական	94	4	1	22	1	3	63	55	39
2	Համատեղող	23	6	1	-	-	3	13	5	18
3	Ընդամենը	117	10	2	22	1	6	76	60	57

աղյուսակ. 5.9

2013-2014		Գիտական կոչում և աստիճան							Գենդերային կազմ՝ այդ թվում	
N	Դասավանդողներ	ընդամենը	Դոկտոր պրոֆեսոր	Դոկտոր	գ/թ. դոցենտ	դոցենտ	գ/թ. ասիստենտ	Դասախոս, ասիստենտ	կին	Ինտերնայր
1	Հիմնական	89	4	1	22	1	7	54	53	36
2	Համատեղող	16	3	-	-	-	2	11	3	13
3	Ընդամենը	105	7	1	22	1	9	65	56	49

աղյուսակ. 5.10

2013-2014		Գիտական կոչում և աստիճան							Գենդերային կազմ՝ այդ թվում	
N	Դասավանդողներ	ընդամենը	Դոկտոր պրոֆեսոր	Դոկտոր	գ/թ. դոցենտ	դոցենտ	գ/թ. ասիստենտ	Դասախոս, ասիստենտ	կին	Ինտերնայր
1	Հիմնական	92	5	-	22	2	9	54	57	35
2	Համատեղող	20	5	1	-	-	3	11	5	15
3	Ընդամենը	112	10	1	22	2	12	65	62	50

Ինչպես երևում է աղյուսակներից, բուհը վերջին տարիներին կարողացել է պահպանել հիմնական կազմի կայունությունը: Համատեղության կարգով աշխատողների թիվը մեծ տոկոս չի կազմում:

Ըստ ուսումնական տարիների՝ համատեղության կարգավիճակով մասնագետների թվաքանակը համապատասխանաբար կազմել է.


2013-2014 ուսումնական տարում՝ 20%, 2014-2015 ուսումնական տարում՝ 16%, 2015-2016 ուսումնական տարում՝ 18%:

2016-2017 ուսումնական տարում (հաշվետու ժամանակահատվածից հետո) ՊԴ թվաքանակը 105 է, որից հիմնական կազմ՝ 90 մարդ - 85%, համատեղող կազմ՝ 15 մարդ – 15%:


Ժամավճարային կարգավիճակով ամբիոնի ներկայացմամբ հիմնականում հրամանագրվում են բուհի դասախոսները որոշակի ժամաքանակով (թույլ չտալով անցնել տարեկան ծանրաբեռնվածության սահմանված չափը): Դա նպաստում է հիմնական կազմի կայունությանը՝ ապահովելով զբաղվածությունը բուհում և նվազեցնելով հոսունությունը: Անհրաժեշտության դեպքում նեղ մասնագիտական առարկայական ծրագրերն իրականացնելու նպատակով հրավիրվում են դասախոսներ այլ բուհերից և կազմակերպություններից:

Բուհը կարևորում է նաև երիտասարդ կադրերի ներգրավման քաղաքականությունը, որի իրականացման արդյունքում ՊԴ կազմը պարբերաբար համալրվում է երիտասարդ կադրերով՝ ապահովելով սերնդափոխությունը: Դիտարկենք ԳՊՀ ՊԴ հիմնական կազմի տարիքային առանձնահատկությունները վերջին երեք տարիների դրությամբ:


գծ. 5.11



գծ. 5.12



գծ. 5.13



Ինչպես երևում է գծապատկերից, 2015-2016 ուսումնական տարում ՊԴ կազմից մինչև 36 տարեկան դասախոսների թիվը կազմում է 31 (34 %), 36-ից 60 տարեկանի գոտում գտնվում է 41 դասախոս (44 %-ը), 60 տարեկանից բարձր տարիք ունեցողների թիվը կազմում է 20 դասախոս (22 %):

Նախատեսված է բացել ասպիրանտուրայի բաժին, որը կնպաստի ՊԴ կազմի համալրմանը բարձր որակավորում ունեցող երիտասարդ կադրերով:

Մշակման փուլում են վերապատրաստման և ատեստավորման կարգերը, որոնցում կսահմանվեն հստակ պահանջներ դասախոսների կարողությունների վերաբերյալ, մասնավորապես նոր տեխնոլոգիաների տիրապետում և կիրառում, համակարգչային հմտություններ, օտար լեզուների իմացություն և այլն:

ԶՄՓՈՐՈՇԻՉ զ. ՄՈՒՀ-ում գործում են պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման քաղաքականություն ու ընթացակարգեր:

Հիմքեր

Պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման քաղաքականությունը և ընթացակարգերը,

Սկսնակ դասավանդողների խրախուսման և մասնագիտական առաջընթացի ապահովման քաղաքականությունը և ընթացակարգերը/[ԳՊՀ ներքին աշխատանքային կանոններ](#)/ /էջ 10/,

Սկսնակ դասավանդողների մենթորության քաղաքականությունը և ընթացակարգերը:

ԳՊՀ ղեկավարությունը մեծ ուշադրություն է դարձնում ՊԴ անձնակազմի մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացմանն ու բարձրացմանը:

ԳՊՀ գործում է համալսարանի ՊԴ կազմի ձևավորման ժամանակավոր կանոնակարգը /[հավելված 5ա1](#)/, որը սահմանում է դասախոսական կազմի մրցութային ընտրության, պաշտոնների տեղակալման կարգն ու պայմանները, տարբեր տարակարգերի (պրոֆեսոր, դոցենտ, ասիստենտ, դասախոս) որակական և քանակական բնութագրերն ու չափանիշները: Պաշտոնների տեղակալման այդ չափանիշները հանդիսանում են պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման քաղաքականության հիմքը և խթանում են, որպեսզի դասախոսները բարձրացնեն իրենց մասնագիտական որակներն ու կարողությունները և ունենան համապատասխան առաջխաղացում:

Համալսարանի ղեկավարության կողմից խրախուսվում են դասախոսների գիտական ու մանկավարժական շարժունակությունը և ինքնակրթությունը: Ստեղծված են բոլոր պայմանները, որպեսզի երիտասարդ սկսնակ դասախոսները կարողանան առաջավոր բուհերում ձևակերպվեն հայցորդներ առանց աշխատանքից կտրվելու:

Ներկայումս բուհի 6 դասախոս իրենց կրթությունը շարունակում են հետազոտողի կրթական ծրագրով և ունեն հայցորդի կարգավիճակ: Նրանցից 3-ը գտնվում են թեկնածուական ատենախոսության պաշտպանության նախաշեմին: Տարեցտարի նկատվում է թեկնածուական ատենախոսություն պաշտպանող դասախոսների թվի աճ:

Մենթորությունը մեր համակարգում նոր գաղափար է, նոր մտածելակերպ, որին դեռ պատրաստ չենք, սակայն նախատեսում ենք մշակել ու կիրառել սկսնակ դասախոսների մենթորության քաղաքականություն և ընթացակարգեր:

Դասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման գրավական են համալսարանում կազմակերպվող միջազգային գիտաժողովները:

Համալսարանում պլանավորվում և իրականացվում են հրավիրված գիտնականների ու մասնագետների դասախոսություններ, կարճատև սեմինարներ:

ԶՄՓՈՐՈՇԻՉ է. ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ վարչական և ուսումնառական աշխատակազմ ռազմավարական նպատակների իրականացման համար:

Հիմքեր

Վարչական աշխատակազմի ցանկը՝ ըստ հաստատության կառուցվածքային ստորաբաժանումների/[հավելված 5Է1/](#),

Ուսումնասօժանողական աշխատակազմի գործառնությունները/[հավելված 5Է2/](#),

Վարչական և ուսումնասօժանողական աշխատակազմի կայունության ապահովման քաղաքականությունը և ընթացակարգերը,

Վարչական և ուսումնասօժանողական աշխատակազմի գործունեության որակի ապահովման քաղաքականությունը և ընթացակարգերը,

Աշխատակազմի գործունեության որակն ապահովող մեխանիզմները և գործիքները:

ԳՊՀ-ի ռազմավարական նպատակների իրականացման համար համալսարանն ունի համապատասխան վարչական և ուսումնասօժանողական անձնակազմ: Վարչական և ՈԻՕ աշխատակազմի հաստիքացուցակի ձևավորումը և աշխատանքային պարտականությունների սահմանումը կարգավորվում է ԳՊՀ-ի կանոնադրությամբ, առանձին կառուցվածքային ստորաբաժանումների կանոնակարգերով: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվում վարչական և ՈԻՕ կազմի կատարելագործմանը, որակի բարձրացմանը, և հաստիքակազմի օպտիմալացմանը:

ԳՊՀ-ի ուսումնասօժանողական կազմը վերջին երեք տարիներին.

աղյուսակ 5.6.

2013-2014	2014-2015	2015-2016
40	41	32

2015-2016 ուստարվա վարչական աշխատողների թիվը 21 է, կազմում է աշխատակազմի 11 %-ը, ՈԻՕ անձնակազմի թիվը 32 է, կազմում է աշխատակազմի 16 %-ը /[հավելված 5Է1/](#):

ՈԻՕ կազմի մեջ ներառված են լաբորատորիայի պատասխանատուները, լաբորանտները, համակարգչային լսարան-կաբինետների պատասխանատուները, գործավարները, համակարգչային օպերատորները: Ռեկտորի 2010թ. սեպտեմբերի 01-ի հրամանով սահմանված են ՈԻՕ կազմի գործառնությունները /[հավելված 5Է2/](#), ինչը հնարավորություն է տալիս վերահսկելու սահմանված պարտականությունների կատարումը:

ՈԻՕ աշխատակազմը գործում է ֆակուլտետային կառույցներում և հաշվետու է ֆակուլտետի ղեկավարությանը: Վարչական և ՈԻՕ կազմի աշխատակիցների որակները բարձրացվում են վերապատրաստման դասընթացներով՝ համակարգչագիտության, գործավարության, օտար լեզուների իմացության, կրեդիտային եղանակով ուսումնական գործընթացի կազմակերպման և այլ թեմաներով:

Կրթական գործունեության կազմակերպման արդյունավետության բարձրացման նպատակով 2015-2016 ուստարում հստակեցվել է ԳՊՀ ՈԻՕ նոր հաստիքացուցակը: Ընթացքի մեջ է ՈԻՕ կազմի ատեստավորման կանոնակարգի մշակումը:

Վերջին տարիներին բուհում իրականացվել են կադրային քաղաքականության բարեփոխումներ և կառուցվածքային փոփոխություններ:

Համալսարանի հինգ ֆակուլտետները վերակազմակերպվել են, դրանց հիմքի վրա ստեղծվել է երեք ֆակուլտետ: Մանկավարժական բնագիտական մասնագիտությունների ֆակուլտետը վերակազմակերպվել է բնագիտական մասնագիտությունների ֆակուլտետի, մանկավարժական հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի և պատմաիրավագիտական ֆակուլտետի հիմքի վրա ստեղծվել է հումանիտար և հասարակագիտական մասնագիտությունների ֆակուլտետը, ճարտարագիտական մասնագիտությունների ֆակուլտետի և տնտեսագիտության ֆակուլտետի հիմքի վրա ստեղծվել է ճարտարագիտության և տնտեսագիտության ֆակուլտետը:

Վարչական կազմում ստեղծվել են նոր բաժիններ՝ հասարակայնության հետ կապերի և լրատվության բաժին, աշխատակազմի կառավարման բաժին, որում ներառվել են կադրերի, ընդհանուր, հատուկ բաժինների, ավարտական փաստաթղթերի ստացման, պահպանման, տրման պատասխանատուի և արխիվավարի գործառույթները:

Ուսանողների կարիերայի աջակցման կենտրոնը միավորվել է միջազգային համագործակցության և կրթության որակի ապահովման բաժնին:

Մշակման փուլում են գտնվում վարչական և ՈԻՕ կազմի աշխատակազմի պաշտոնների անձնագրերը: Օրակարգային խնդիր է վարչական և ՈԻՕ աշխատակազմի գնահատման, նրանց գործունեության որակի ապահովման ընթացակարգերի և մեխանիզմների մշակումը, կիրառումը: Բացակայում են նաև հաստիքների ձևավորման կառուցվածքներն ու նորմատիվները:

Չափանիշ 5-ի վերաբերյալ ներկայացնել SWOT վերլուծություն վերջին հինգ տարիների համար

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
<ol style="list-style-type: none"> 1. ԳՊՀ-ի ռազմավարական ծրագրի իրագործմանը համապատասխանող պրոֆեսորադասախոսական և ուսումնասօժանողական աշխատակազմի առկայություն, 2. Երիտասարդ և միջին տարիքի աշխատակիցների գերակշռություն, 3. Վերապատրաստման դասընթացների առկայություն, 4. Դասավանդման արդի միջոցների բավարար քանակություն, 5. Խրախուսման մեխանիզմների առկայություն, 6. Հրավիրված մասնագետների համար նպաստավոր պայմանների առկայություն, 7. Բավարար քանակությամբ գիտական կոչում և աստիճան ունեցող դասախոսներ, 8. Մրցութային կարգով պաշտոնների տեղակալման հնարավորություն, 9. Առողջ բարոյահոգեբանական մթնոլորտ: 	<ol style="list-style-type: none"> 1. Դասալսումների մեխանիզմների անկատարություն, 2. Տարբերակված աշխատավարձերի մեխանիզմի բացակայություն, 3. Ուսանողական հարցումների արդյունքների ոչ լիարժեք կիրառում, 4. Պրոֆեսորադասախոսական և ՈԻՕ կազմի որակի գնահատման մեխանիզմների անկատարություն, 5. ՊԴ կազմի հատուկ մասնագիտական վերապատրաստումների անբավարարություն, 6. Ավագ սերնդի դասախոսների կողմից դասավանդման արդի միջոցների ոչ լիարժեք տիրապետում,
Հնարավորություններ	Վտանգներ
<ol style="list-style-type: none"> 1. Միջազգային համագործակցության ակտիվացման հնարավորություն, 2. Այլ բուհերի հետ առաջավոր փորձի փոխանակում, 3. Նոր կրթական ծրագրերի ներդրում, 4. Միջազգային գիտահետազոտական աշխատանքներում ներգրավվելու հնարավորություն: 	<ol style="list-style-type: none"> 1. Տարածաշրջանում սոցիալական խնդիրների առկայություն, 2. Դասախոսների մոտիվացիայի պակաս, 3. Ֆինանսական միջոցների սղություն, 4. Միջազգային կրթական ծրագրերում դասախոսների քիչ ներգրավվածություն, 5. Օտար լեզուների իմացության ոչ բավարար մակարդակ:

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտական գործունեության իրականացումը և կապն ուսումնառության հետ:

ՉԱՓՈՂՈՇԻՉ ա. *ՄՈՒՀ-ում առկա է հետազոտական ոլորտում իր հետաքրքրությունները և հավակնություններն արտահայտող ռազմավարություն:*

Հիմքեր

Հետազոտությունների ռազմավարությունը և ուղղությունները/ [ԳՊՀ հայեցակարգ 2011-2016/](#), Հաստատության ռազմավարության և հետազոտությունների ուղղությունների միջև կապն արտացոլող փաստաթուղթը (կցել կամ հղում կատարել),
Հետազոտական աշխատանքների արդյունքների վավերացման մեխանիզմները:

Վերլուծել ՄՈՒՀ-ում առկա հետազոտական ոլորտում հետաքրքրությունների և հավակնությունների ռազմավարության արդյունավետությունը վերջին 3 տարիների համար և արդիականությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 05.12.2000թ.-ին ընդունած «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքը, ՀՀ կառավարության 27.05.2010թ. N20 արձանագրային որոշմամբ հաստատված «Գիտության ոլորտի զարգացման ռազմավարությունը» և 17.06.2011թ. N23 արձանագրային որոշմամբ հաստատված «ՀՀ գիտության ոլորտի զարգացման 2011-2015 թվականների ռազմավարական ծրագիրը»՝ Գորիսի պետական համալսարանը հետազոտական ոլորտում իր հետաքրքրությունները և հավակնությունները ամրագրել է [ԳՊՀ-ի 2011-2016թթ. զարգացման ռազմավարական հայեցակարգում \(Էջ 7\):](#)

Գորիսի պետական համալսարանի ռազմավարական նպատակներն են գիտական և նորարարական գործունեության զարգացումը, հետազոտությունների արդյունավետության բարձրացումը, կրթության արդյունավետ համակարգերի ստեղծումը: Հետազոտական ծրագրերի համակողմանի զարգացումը և գիտնականների նոր սերնդի ձևավորումը համալսարանի առաքելության կարևոր ուղղություններից է:

Ռազմավարական ծրագրով նախատեսված նպատակների իրականացման և խնդիրների լուծման համար համալսարանը տրամադրում է որոշակի ռեսուրսներ, իրականացնում տարաբնույթ միջոցառումներ, մշակում մեխանիզմներ:

ԳՊՀ-ում գիտահետազոտական գործունեությունն իրականացվում է հիմնականում մասնագիտական ամբիոններում: Գիտահետազոտական աշխատանքները կատարվում են բնագիտական, ճարտարագիտական, տնտեսագիտական, հումանիտար և հասարակագիտական մասնագիտություններով: Մասնագիտական ամբիոններում իրականացվող հետազոտական աշխատանքների արդյունքները հրապարակվում են տարբեր գիտական ժողովածուներում, պարբերականներում: Գիտական արդյունքները ներկայացվում են նաև ուսումնական ձեռնարկների, մեթոդական ուղեցույցների և տեղեկատվության

տարածման այլ միջոցներով: Գիտահետազոտական աշխատանքների արդյունքների ներկայացման համար օգտագործվում են նաև համացանցի ընձեռած հնարավորությունները:

2013-2016թթ. ընթացքում թեկնածուական ատենախոսություն են պաշտպանել և գիտական աստիճան են ստացել համալսարանի 10 դասախոսներ (4-ը՝ բնական գիտությունների բնագավառում, 6-ը՝ հումանիտար և հասարակագիտական), որոնցից 7-ը համալսարանի շրջանավարտներ են: Դոկտորական ատենախոսություն են պաշտպանել համալսարանի երկու դասախոսներ: Նույն ժամանակահատվածում դոցենտի գիտական կոչում են ստացել համալսարանի 5 դասախոսներ:

Վերջին 5 տարիներին համալսարանում իրականացվել է ՀՀ պետական բյուջեի ֆինանսավորմամբ մեկ բազային և միջպետական ֆինանսավորմամբ մեկ Հայ-բելոռուսական թեմատիկ գիտական ծրագրեր: ՀՀ պետական բյուջեի ֆինանսավորմամբ համալսարանում 2010թ.-ից մինչ այսօր արդյունավետ իրականացվում է «Սյունիքի հայագիտական հետազոտությունների կենտրոն» գիտական ծրագիրը, որի շրջանակներում իրականացվել են բազմաթիվ հետազոտական աշխատանքներ:

ՉԱՓՈՐՈՇԻՉ ք. ՄՈՒՀ-ն ունի երկարաժամկետ ռազմավարություն և միջնաժամկետ ու կարճաժամկետ ծրագրեր, որոնք արտահայտում են հետազոտության ոլորտում ՄՈՒՀ-ի հետաքրքրությունները և հավակնությունները:

Հիմքեր

Միջնաժամկետ ու կարճաժամկետ ծրագրերը, Հետազոտությունների մեթոդաբանությունն ու հրապարակումներին ներկայացվող պահանջները:

Վերլուծել ՄՈՒՀ-ում առկա հետազոտական ոլորտում հետաքրքրությունների և հավակնությունների միջնաժամկետ ու կարճաժամկետ ծրագրերի իրականացման արդյունավետությունը վերջին 3 տարիների համար և արդիականությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Համալսարանի գիտահետազոտական գործունեության կատարելագործման նպատակը համալսարանի մրցունակ գիտական ու նորարարական ներուժի ձևավորումն է: ԳՊՀ-ն մեծապես կարևորում է համալսարանի գիտական դերի մեծացումն ու մասնակցության ընդլայնումը տարածաշրջանի տնտեսական, կրթական, մշակութային զարգացման ծրագրերում: ԳՊՀ-ի հետազոտական գործունեության երկարաժամկետ ռազմավարությունը համալսարանի գործունեության ընթացքում կատարված հետազոտությունների շարունակականության ապահովումն է, հետագա զարգացումն ու միջազգայնացումը, իսկ որպես միջնաժամկետ և կարճաժամկետ ծրագրեր՝ պլանավորվում և իրականացվում են ԳՊՀ-ի 2011-2016թթ. զարգացման ռազմավարական հայեցակարգում ամրագրված խնդիրների լուծմանը նպաստող ընթացիկ աշխատանքներ առաջիկա երեք տարիների համար:

ԳՊՀ-ում յուրաքանչյուր ամբիոն իրականացնում է իր մասնագիտական ուղղվածությանը համապատասխան գիտահետազոտական աշխատանքներ, որոնց արդյունքները ներկայացվում են ԳՊՀ-ի գիտական խորհրդի նիստերում քննարկվող ֆակուլտետների ամենամյա հաշվետվություններում: Յուրաքանչյուր ամբիոն կազմում է ամենամյա աշխատանքային ծրագրեր, ներկայացնում է աշխատանքային պլան՝ նշելով գիտահետազոտական աշխատանքների կազմակերպման ժամանակացույց: Կատարված գիտական աշխատանքները ներկայացվում են ամբիոնների տարեկան

հաշվետվություններում և ամփոփվում ֆակուլտետների տարեկան հաշվետվություններում: Համալսարանի յուրաքանչյուր դասախոս ուսումնական տարվա սկզբին կազմում է անհատական աշխատանքային պլան, ներկայացնում գիտամանկավարժական և գիտամեթոդական հետազոտությունների ուղղությամբ իր կողմից պլանավորած աշխատանքները:

Որպես կարճաժամկետ ծրագրեր՝ համալսարանում կազմակերպվում և անցկացվում են ներբուհական, ինչպես նաև միջազգային գիտաժողովներ, կոնֆերանսներ, սեմինարներ, հրատարակվում են գիտական հոդվածներ, ուսումնամեթոդական աշխատանքներ:

Աղյուսակ 1-ում բերված է դասախոսական կազմի գիտահետազոտական աշխատանքների հրատարակություններն ըստ ուստարիների (տվյալները բերված են ռեկտորի 2013-2016թթ. հաշվետվություններից):

Աղյուսակ 1

ԳՊՀ դասախոսական կազմի գիտահետազոտական աշխատանքների հրատարակություններն ըստ ուստարիների					
N	Հրատարակություն	2013-2014	2014-2015	2015-2016	Ընդամենը
1.	Գիտական հոդված	77	56	50	183
2.	Ուսումնամեթոդական աշխատանք	17	8	11	36
Ընդամենը		94	64	61	219

ԳՊՀ-ում բավականին արդյունավետ հետազոտական գործունեություն են իրականացնում բնագիտական՝ քիմիայի և կենսաբանության երկու լաբորատորիաները, որոնք վերջին ժամանակներս հարստացվել են կենսաբանական և քիմիական նյութերով, սարքավորումներով: Կենսաբանության լաբորատորիայի գիտահետազոտական աշխատանքներն ուղղված են բույսերից ստացած ջրային թուրմերի հակաբիոտիկ հատկությունների ուսումնասիրմանը, իսկ քիմիայի լաբորատորիայում Հայ-Բելոռուսական դրամաշնորհի շրջանակներում հետազոտական աշխատանքներ են իրականացվել Հայաստանում և Բելոռուսում աճող բույսերից ստացած էքստրակտների և էթերայուղերի հակաօքսիդիչ հատկությունների ուսումնասիրման ուղղությամբ: Համալսարանը կարևորում է ՀՀ ԿԳՆ Գիտության պետական կոմիտեի կողմից ֆինանսավորվող «Սյունիքի հայագիտական հետազոտությունների կենտրոն» գիտական միջնաժամկետ ծրագրի իրականացումը՝ սկսած 2010թ.-ից, որի նպատակն է ուսումնասիրել և հանրությանը ներկայացնել Սյունիքի նյութական և հոգևոր ժառանգությունը: Այդ ծրագիրը Սյունիքի նյութական և հոգևոր մշակույթի պատմահնագիտական, ազգագրական, բանահյուսական արժեքների ուսումնասիրման առաքելության իրականացման գործում մեծ դերակատարություն ունի:

Չնայած այն հանգամանքին, որ գիտական հետազոտությունների զարգացման, մասնագիտական լաբորատորիաների վերազինման և հարստացման, մասնագիտական գրականության ձեռքբերման ուղղությամբ համալսարանը զգալի ռեսուրսներ է հատկացնում, համալսարանի ոչ բոլոր դասախոսներն են ակտիվորեն ներգրավված գիտահետազոտական աշխատանքներում, իսկ վերջին երեք տարիներին դասախոսական կազմի գիտահետազոտական աշխատանքների քանակի նվազումը (աղյուսակ 1) խիստ անհանգստացնող է բուհի համար, քանի որ այն անմիջապես կապված է հետազոտական աշխատանքների անկման և պրոֆեսորադասախոսական անձնակազմի գիտական հետաքրքրվածության նվազման հետ: Գիտական գործունեության խթանման և հետազոտությունների ծավալի աճի նպատակով ներկայումս աշխատանքներ են տարվում բուհում ներդնելու պրոֆեսորադասախոսական կազմի գիտահետազոտական և գիտամեթոդական աշխատանքների խթանման ռազմավարություն: Նախատեսվում է ստեղծել նաև գիտահետազոտական աշխատանքները կոորդինացնող համապատասխան կառույց, որի

առանցքային խնդիրները կլինեն այդ ոլորտում տարվող քաղաքականության մշակումը և իրականացումը:

ՉԱՓՈՐՈՇԻՉ Գ. ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտությունների իրականացումը և իր զարգացումը՝ հստակ քաղաքականության և ընթացակարգերի միջոցով:

Հիմքեր

Որակյալ հետազոտությունների իրականացման համար բարենպաստ պայմաններ ստեղծելու մեխանիզմները,

Հետազոտության և զարգացման համար հատկացված բյուջեն՝ արտահայտված տոկոսներով (վերջին 3 տարվա համար),

Բյուջեի բաշխման քաղաքականությունը և ընթացակարգերը,

Երիտասարդ աշխատակազմի հետազոտական գործունեությունը խրախուսելու քաղաքականությունն ու ընթացակարգերը,

Ակադեմիական ազնվությունը (օբյեկտիվություն) երաշխավորող և գրագողությունը կանխարգելող միջոցների քաղաքականությունն ու ընթացակարգերը:

Վերլուծել ՄՈՒՀ-ում հետազոտությունների զարգացմանն ու նորարարություններին նպաստող քաղաքականության ու ընթացակարգերի արդյունավետությունը և արդիականությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Գործիսի պետական համալսարանը կարևորում և հնարավորինս ապահովում է որակյալ հետազոտությունների իրականացումը: Պրոֆեսորադասախոսական կազմի հետազոտությունների արդյունքները ներկայացվում են տարբեր գիտաժողովներում, կոնֆերանսներում, ինչպես նաև գրախոսված հոդվածների տեսքով հրատարակվում են գիտական տարբեր ամսագրերում և նյութերի ժողովածուներում: Գիտահետազոտական գործունեության զարգացումը խթանելու, հետազոտական աշխատանքներն ակտիվացնելու և տարեկան կտրվածքով դրանց արդյունքների ծավալներն ու գիտական հրատարակությունների թիվը մեծացնելու նպատակով ներկայումս աշխատանքներ են տարվում ԳՊՀ-ի գիտական տեղեկագիր ստեղծելու և ՀՀ ԲՈՀ-ի կողմից ընդունելի պարբերական գիտական հրատարակությունների ցանկում այն ներառելու ուղղությամբ: Հարկ է նշել, որ ՀՀ ԿԳՆ ԲՈՀ-ի կողմից սահմանված կանոնակարգերը նպաստում են համալսարանի հետազոտական աշխատանքների ակտիվացմանը՝ կարևորելով դասախոսների հետազոտական աշխատանքների արդյունքներն ու ձեռքբերումները գիտական աստիճաններ կամ կոչումներ շնորհելիս:

Գիտական ներուժի արդյունավետությունը բարձրացնելու և հետազոտությունների ոլորտում ծավալի աճ ապահովելու համար ԳՊՀ-ն ձգտում է բարելավել հետազոտական գործընթացի իրականացման համար անհրաժեշտ տարածքային և նյութատեխնիկական պայմանները, զարգացնել և արդիականացնել համալսարանի ուսումնական և գիտական լաբորատոր բազան: Չնայած այն հանգամանքին, որ համալսարանի բյուջեում գիտահետազոտական աշխատանքների ֆինանսավորման համար հատուկ հոդված սահմանված չէ, համալսարանը այդ ուղղությամբ որոշակի ծախսեր է կատարում՝ հատկացնելով ֆինանսական միջոցներ՝ գիտաժողովների, կրթական բարեփոխումների, վերապատրաստումների մասնակցության համար գործադրումների տրամադրման, լաբորատորիաների համար սարքավորումների և նյութերի ձեռքբերման, գրադարանի մասնագիտական գրականության հարստացման և այլնի համար (աղյուսակ 2): Մեթոդական աշխատանքները խրախուսելու համար համալսարանն ապահովում է դրանց անվճար հրատարակումը:

Հետազոտության և զարգացման ծախսերը 2014-2016թթ.							
N	Ծախսեր ըստ հոդվածների	2016թ.		2015թ.		2014թ.	
		Գումար	% ընդամենը հաշվետու տարվա ծախսերի մեջ	Գումար	% ընդամենը հաշվետու տարվա ծախսերի մեջ	Գումար	% ընդամենը հաշվետու տարվա ծախսերի մեջ
1	Աշխատավարձ	12336,0	3,57	12336,0	3,74	9840,0	2,72
2	Գործուղում	144,0	0,04	200,0	0,06	200,0	0,06
3	Գրականություն	955,5	0,28	1380,9	0,42	2163,4	0,60
4	Մարքեր և սարքավորումներ	736,0	0,21	1870,2	0,57	7978,5	2,21
5	Լաբորատոր նյութեր	132,4	0,04	27,9	0,01	215,1	0,06
6	Կոնֆերանսների հետ կապված ծախսեր	44,1	0,01	1049,8	0,32	1650,0	0,46
7	Վերապատրաստման գծով ծախսեր	103,0	0,03	0,0	0,00	100,0	0,03
Ընդամենը		14451,0	4,19	16864,8	5,11	22147,0	6,13

Գործիսի պետական համալսարանը կարևորում է երիտասարդ դասավանդողների գիտական գործունեությունը: Վերջին երեք տարիների ընթացքում թեկնածուական ատենախոսություններ են պաշտպանել համալսարանի 5 երիտասարդ դասախոսներ (մինչև 35 տարեկան), որոնցից 2-ը արժանացել են բանասիրական գիտությունների, 1-ը՝ ֆիզ-մաթ. գիտությունների, 1-ը՝ քիմիական գիտությունների և 1-ը՝ տնտեսագիտական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի:

Հետազոտական աշխատանքներում ակադեմիական ազնվությունը երաշխավորելու և գրագողությունը կանխարգելելու համար հրապարակման նախապատրաստված նյութերը՝ գիտական հոդվածները, գիտաժողովների զեկուցումները քննարկվում են համապատասխան ամբիոններում, իսկ մենագրությունները, ուսումնական ձեռնարկներն ու ուսումնամեթոդական աշխատանքները քննարկվում են նաև ֆակուլտետի խորհրդում, այնուհետև գիտական խորհրդի երաշխավորմամբ ներկայացվում հրատարակության՝ հիմք ընդունելով ՀՀ ԲՈՀ-ի համապատասխան կանոնակարգերը: ԳՊՀ-ի գիտական խորհրդի երաշխավորությանը ներկայացվող բոլոր գիտահետազոտական ու մեթոդական աշխատանքները պարտադիր գրախոսվում են ՀՀ-ում գործող այլ բուհերի կամ այլ հետազոտական հաստատությունների հեղինակավոր մասնագետների կողմից: Այդ հանգամանքը նույնպես հնարավորինս բացառում է գրագողությունն ու նպաստում ակադեմիական ազնվությանն ու օբյեկտիվությանը:

Գործիսի պետական համալսարանում ակադեմիական ազնվությանը նպաստելու և գրագողությունը կանխարգելելու նպատակով 2012թ.-ից գործածության մեջ է դրվել [Ակադեմիական ազնվության հայեցակարգը](#), որով սահմանվում են ակադեմիական անազնիվ վարքի դրսևորումները և ակադեմիական անազնվության դեպքերի լուծման ընթացակարգը:

ՉԱՓՈՐՈՇԻՉ դ. ՄՈՒՀ-ը կարևորում է հետազոտական գործունեության միջազգայնացումը:

Հիմքեր

Միջազգային հետազոտական նախաձեռնություններում ուսումնասողների և դասավանդողների ներգրավվածությունը խրախուսող կանոնակարգերը,

ԱՊՀ երկրներում գրախոսվող մասնագիտական ամսագրերում հրապարակումների կարգավորումը,

Օտարերկրյա միջազգային գրախոսվող մասնագիտական ամսագրերում հրապարակումների կարգավորումը,

Միջազգային (ԱՊՀ և օտարերկրյա) գրախոսվող ամսագրերում հրապարակումների ցանկը վերջին 3 տարվա համար:

ԱՊՀ երկրներում գրախոսվող մասնագիտական ամսագրերում հրապարակումների ցանկ							
	Ամսագիրը (երկիրը)	Վարկանիշը	2012	2013	2014	2015	2016
1	Химия растительного сырья (ՌԴ)		1	1	1		1
2	Доклады НАН Беларуси		1	1			
3	Труды Белорусского гос. Университета			1			
4	Бутлеровские сообщения (ՌԴ)						1
Օտարերկրյա միջազգային գրախոսվող մասնագիտական ամսագրերում հրապարակումների ցանկ							
	Ամսագիրը (երկիրը)	Վարկանիշը	2012	2013	2014	2015	2016
1	Oxidation Communications (OXID COMMUN)			1			
2	Biophysical Reviews and Letters					1	
3	Journal of biomolecular Structure & Dynamics					1	
4	The European Physical Journal E					1	
5	Biological Physics and Chemistry						1
ՀՀ-ում գրախոսվող մասնագիտական ամսագրերում հրապարակումների ցանկ							
	Ամսագիրը	Վարկանիշը	2012	2013	2014	2015	2016
1	Доклады НАН Армении		2		3		
2	Информационные технологии и управление		2	2	2		
3	Математика В Высшей Школе				1	1	1
4	Изв. НАН Армении. (Механика, Физика)				5	1	
5	Химический журнал Армении		1	2		2	
6	Proceedings of the YSU, Chemistry and Biology			1	1	2	
7	Научно-медицинский журнал Национального Института Здравоохранения				1	1	2
8	ԱրՊՀ գիտական տեղեկագիր		2	4	1	1	1
9	ՀՊՃՀ (Պոլիտեխնիկ), լրաբեր գիտական հոդվածների		1			2	
10	ՀՀ ԳԱԱ և ՀԱՊՀ Տեղեկագիր, Տեխն. գիտ. Սերիա				1	1	
11	Դատական իշխանություն			1			

12	Շնտանիք և դպրոց				2		
13	Մանկավարժության և հոգեբանության հիմնախնդիրներ		1				
14	Մխիթար Գոշ	5	1			1	3
15	Ճգնաժամային կառավարում և տեխնոլոգիաներ		2			1	1
16	Լրաբեր հասարակական գիտությունների				2		
17	Մանկավարժություն	1					
18	Մանկավարժական միտք	1				1	1
19	Հայագիտական հանդես		3				
20	Լրատու Մեսրոպ Մաշտոց համալսարանի	1			1		
21	Կանթեղ				1	1	
22	Գրական Սփյուռք-2014				1		
23	ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, «Գիտական հոդվածների ժողովածու»						1
24	Ջահուկյանական ընթերցումներ				1		1
25	Հանրային կառավարում	1					
26	Ֆինանսներ և էկոնոմիկա	2	1	1		7	3
27	Տնտեսության զարգացման և կառավարման հիմնախնդիրներ				1	2	

Վերլուծել ՄՈՒՀ-ի հետազոտական գործունեության միջազգայնացման քաղաքականության արդյունավետությունը և վերջին հինգ տարիների նվաճումները /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Գործիսի պետական համալսարանը կարևորում է հետազոտական գործունեության միջազգայնացումը և որոշակի քայլեր է ձեռնարկում համալսարանի հետազոտական արդյունքների միջազգայնացման ուղղությամբ: Այդ ոլորտում ԳՊՀ-ի ռազմավարական խնդիրն է՝ միջազգայնացնել համալսարանի գիտական և տեխնոլոգիական մշակումները, նպաստել ստորաբաժանումների մասնակցությանը միջազգային ծրագրերում և արտասահմանյան ֆոնդերի ներգրավմանը գիտական հետազոտությունների տեղեկատվական ու տեխնոլոգիական բազայի զարգացման գործում, կազմակերպել միջազգային գիտաժողովներ, սեմինարներ և համատեղ նախագծեր՝ նոր տեխնոլոգիաների և դրանց կիրառությունների ուղղությամբ:

Չնայած այն հանգամանքին, որ դեռևս համալսարանում միջազգային հետազոտական նախաձեռնություններում ուսումնառողների և դասավանդողների ներգրավվածությունը խրախուսող կանոնակարգված մեխանիզմներ չեն գործում, այնուամենայնիվ գիտահետազոտական գործունեությամբ առավել ակտիվ զբաղվող դասախոսները պարբերաբար մասնակցում են ԳՊՀ-ում և հանրապետության այլ բուհերում կազմակերպվող միջազգային գիտաժողովներին: Այդ առումով համալսարանում համեմատաբար ակտիվ են մաթեմատիկայի և ինֆորմատիկայի, կենսաբանության և քիմիայի, էլեկտրոնիկայի և էլեկտրաէներգետիկայի, մանկավարժության և հոգեբանության ամբիոնները: ԳՊՀ-ի դասախոսները ակտիվ համագործակցում են այլ բուհերի գիտական խմբերի հետ, մասնավորապես մեխանիկայի և կիրառական մաթեմատիկայի, ֆիզիկական քիմիայի բնագավառներում: Փորձելով պահպանել ԳՊՀ-ում տարիների ընթացքում ձևավորված

հետազոտական դպրոցների ավանդույթները և նպաստելով դրանց զարգացմանը՝ համալսարանը ձգտում է նպաստել բնական, տնտեսագիտական, հումանիտար և հասարակագիտական գիտությունների զարգացմանն ու նորովի մատուցմանը տարածաշրջանում:

Հետազոտական գործունեության միջազգայնացմանը նպաստող կարևոր հանգամանք է ԳՊՀ-ում միջազգային գիտաժողովների պարբերաբար կազմակերպումը, որին ակտիվ մասնակցում են համալսարանի դասախոսները: ԳՊՀ-ն 1-ին միջազգային գիտաժողովը կազմակերպեց 2010թ.-ին, իսկ 2011 թվականին, օգտագործելով նախորդ տարվա փորձն ու հնարավորությունները, համալսարանը կազմակերպեց 2-րդ միջազգային գիտաժողովը: Միջազգային 1-ին և 2-րդ գիտաժողովների ղեկուցումները հրատարակվել են գիտական ժողովածուներում (տե՛ս ԳՊՀ 1-ին և 2-րդ միջազգային գիտաժողովների նյութերի ժողովածուներ):

2014թ. սեպտեմբերի 22-26-ը համալսարանում անցկացվել է «Դեֆորմացվող միջավայրերի փոխազդեցության դինամիկայի պրոբլեմները» թեմայով 8-րդ միջազգային գիտաժողովը, որին ղեկուցումներով հանդես են եկել Հայաստանի, Արցախի և օտարերկրյա տարբեր երկրների (ՌԴ, Բելոռուս, Վրաստան, ԱՄՆ) համալսարաններից ու գիտական կենտրոններից հրավիրված գիտնականներ, ովքեր մեխանիկայի և կիրառական մաթեմատիկայի ոլորտում ունեն մեծ ճանաչում և հեղինակություն: 2015թ. սեպտեմբերի 28-ից հոկտեմբերի 2-ը ԳՊՀ-ում անց է կացվել «Կրթությունը, գիտությունը և տնտեսությունը բուհերում և դպրոցներում. ինտեգրում միջազգային կրթական տարածքում» թեմայով միջազգային գիտական կոնֆերանսը /[հավելված 6ղ1](#)/, որին նույնպես մասնակցել են օտարերկրյա տարբեր երկրների անվանի գիտնականներ (ՌԴ-ից, Լեհաստանից, Սլովակիայից):

Աղյուսակ 3-ում ներկայացված են քանակական տվյալներ ՀՀ-ում և արտերկրում կազմակերպված միջազգային գիտաժողովներին ԳՊՀ-ի դասախոսների մասնակցության վերաբերյալ:

Աղյուսակ 3

Դասավանդողների մասնակցությունը ՀՀ-ում և արտերկրում կազմակերպվող միջազգային գիտաժողովներին					
N	Կազմակերպման վայրը	2014	2015	2016	Ընդամենը
1	ՀՀ-ում կազմակերպված միջազգային գիտաժողովներ	6	9	6	21
2	Արտերկրում կազմակերպված միջազգային գիտաժողովներ	2	4	6	12

Միջազգային (ԱՊՀ և օտարերկրյա) գրախոսվող ամսագրերում և ՀՀ-ում գրախոսվող մասնագիտական ամսագրերում հրապարակումների ցանկի վերլուծությունը ցույց է տալիս, որ *խիստ սահմանափակ է ԱՊՀ և օտարերկրյա գրախոսվող ամսագրերում հրապարակումների թիվը, բավարար չէ նաև ՀՀ-ում գրախոսվող մասնագիտական ամսագրերում հրապարակումների քանակը*, սակայն ներկայացված ցանկն ամբողջությամբ չի արտացոլում իրական պատկերը, քանի որ հոդվածների մի մասը լույս է տեսել գիտաժողովների նյութերի տեսքով: Այդուհանդերձ, անհրաժեշտ է քայլեր ձեռնարկել միջազգային գրախոսվող ամսագրերում և ՀՀ-ում գրախոսվող մասնագիտական ամսագրերում գիտական հրապարակումների թիվը մեծացնելու ուղղությամբ:

Դասախոսական կազմի գիտական գործունեությանը նպաստելու և լեզվական խոչընդոտը հաղթահարելու համար համալսարանը դասախոսական կազմի համար կազմակերպում է օտար լեզվի անվճար ուսուցում և տրամադրում միջազգային համագործակցությունների արդյունքում ձեռքբերած գրականություն: Միջազգային գիտահետազոտական

համագործակցությունը խթանելու նպատակով համալսարանը նաև հյուրընկալում է ԳՊՀ դասավանդողների և ուսումնառողների համար բաց դասախոսություններով հանդես եկող ՀՀ և այլ երկրների բուհերում ու գիտահետազոտական կենտրոններում աշխատող գիտնականների: Թեև միջազգային հետազոտական նախագծերում ԳՊՀ ուսումնառողների և դասավանդողների ներգրավվածությունը խթանելու ուղղությամբ կատարվում են որոշակի աշխատանքներ, այնուամենայնիվ համալսարանի միջազգային գիտահետազոտական գործունեությունը և համագործակցությունը ակտիվացման կարիք ունի:

ՉԱՓՈՐՈՇԻՉ Է. ՄՈՒՀ-ում գործում են հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման մեխանիզմներ:

Հիմքեր

Հետազոտական գործունեությունը ուսումնական գործընթացի հետ փոխկապակցելուն ուղղված քաղաքականությունը, ընթացակարգերը և մեթոդները,
 Հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցվածության արդյունավետությունը արտահայտող այլ հիմքեր և վերլուծություններ,
 Գործընթացի բարելավմանն ուղղված միջոցառումները,
 Հետազոտական գործունեությունը և ուսումնական գործընթացի փոխկապակցումը արտահայտող հիմքեր (գիտական աշխատանքներ ուսանողների մասնակցությամբ, հետազոտությունների շնորհիվ վերանայված ծրագրեր, այլ աշխատանքներ):

Պատասխանել հետևյալ հարցերին.	%
Ուսումնառողների n ը տոկոսն է բավարարված վերոնշյալ գործընթացներից	90
Դասավանդողների n ը տոկոսն է բավարարված վերոնշյալ գործընթացներից	84
Գործատուների n ը տոկոսն է բավարարված վերոնշյալ գործընթացներից	-

Վերլուծել ՄՈՒՀ-ում գործող հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման մեխանիզմների արդյունավետությունը / կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

ԳՊՀ-ն կարևորում է ուսումնական գործընթացների փոխկապակցումը հետազոտական գործունեությանը: Բուհն այդ ուղղությամբ իրականացնում է որոշակի աշխատանքներ, սակայն նշյալ գործընթացների վերանայումն ու բարելավման համակարգված ռազմավարության մշակումը, որպես խնդիր, նախատեսվում է ամրագրել ԳՊՀ-ի 2017-2022թթ. զարգացման ռազմավարական հայեցակարգի դրույթներում:

ԳՊՀ-ում հետազոտական գործունեության և կրթական գործընթացի փոխկապակցվածությունը առավել արտահայտված է մագիստրոսական կրթական ծրագրերում: Սակայն հարկ է նշել, որ բակալավրի կրթական ծրագրով դասավանդվող առարկաների շրջանակներում նախատեսվում են փոքր հետազոտական աշխատանքներ՝ ինքնուրույն որոնողական, կուրսային և ավարտական աշխատանքների ձևով:

Մասնագիտական ամբիոններում իրականացվող գիտահետազոտական և գիտամեթոդական աշխատանքները մեծապես նպաստում են ուսումնական գործընթացի բարելավմանը: Այն դասախոսները, որոնք հիմնականում ներգրավված են ամբիոններում իրականացվող գիտահետազոտական կամ գիտամեթոդական աշխատանքներում, կիրառում են իրենց գիտական աշխատանքների արդյունքներն ու փորձը դասավանդվող առարկաների ծրագրերում: Բուհը կարևորում է այն հանգամանքը, որ պետք է դասավանդվող առարկաների բաշխումը կատարել համաձայն դասավանդողների նեղ մասնագիտացման՝ հաշվի առնելով նրանց հակումները, կարողությունները, գիտական նվաճումները և այլն:

Մագիստրոսական կրթական ծրագրի դասընթացները հիմնականում ունեն հետազոտական ուղղվածություն: Գրեթե բոլոր մասնագիտությունների գծով դասավանդվում է հետազոտությունների մեթոդաբանության վերաբերյալ առարկա: Մագիստրոսի կրթական ծրագրով սովորողները գրում են մագիստրոսական թեզ, որի համար համալսարանը 2012թ.-ին մշակել է համապատասխան կարգ և գնահատման չափանիշներ ([հավելված 6ե1](#)): Որպես կանոն՝ թեզի ղեկավարներ են նշանակվում այն դասախոսները, որոնք ունեն գիտական աստիճան կամ կոչում: Մագիստրոսական թեզերի թեմաներն առաջադրվում են՝ հիմնականում հաշվի առնելով ամբիոնի գիտահետազոտական աշխատանքների ուղղվածությունը և մագիստրանտի ներուժն ու գիտական հետաքրքրությունների շրջանակը: Մագիստրատուրայում հետազոտական գործունեության և կրթական գործընթացի կապն արտահայտվում է ոչ միայն մագիստրոսական թեզերի պատրաստման, այլև գիտամանկավարժական ու հետազոտական պրակտիկաների ընթացքում, որոնց ժամանակ մագիստրոսները կիրառում են ուսուցման գործընթացի հետ կապված հետազոտական ռեսուրսներ:

Ուսումնական գործընթացի հետ հետազոտությունների կապի ապահովմանը և հետազոտական աշխատանքներում ուսանողների ներգրավմանը նպաստում են նաև բուհում գործող ուսանողական կառույցները՝ [ուսանողական խորհուրդը](#) և [ուսանողական գիտական ընկերությունը](#), որոնք, առաջնորդվելով իրենց կանոնադրություններով /[հավելվածներ 2ա1.3](#)/, կազմակերպում են գիտաժողովներ, գիտական նստաշրջաններ, սեմինար-քննարկումներ: ԳՊՀ ուսանողներն իրենց գիտական զեկուցումներով, որոնց պատրաստումը կատարվում է ամբիոնների մասնագիտական խորհրդատվությամբ և աջակցությամբ, ակտիվորեն մասնակցում են ոչ միայն ներհամալսարանական ուսանողական գիտական նստաշրջաններին, այլև տարբեր բուհերի կողմից կազմակերպվող միջազգային և հանրապետական գիտաժողովներին:

ԳՊՀ ուսանողների լավագույն հետազոտական աշխատանքները տպագրված են տարբեր գիտական հանդեսներում և գիտաժողովների նյութերի ժողովածուներում: 2013-2016 թվականների ընթացքում ՀՀ ԿԳ նախարարության կողմից կազմակերպվող «Լավագույն ուսանող» հանրապետական ամենամյա մրցույթում տարբեր անվանակարգերում հաղթող են ճանաչվել (1-ին և 2-րդ տեղեր) ԳՊՀ-ի հինգ ուսանողներ:

Չափանիշ 6-ի վերաբերյալ ներկայացնել SWOT վերլուծություն վերջին 5 տարիների համար

Ուժեղ Կողմեր	Թուօձ Կողմեր
<ol style="list-style-type: none"> 1. Ռազմավարական ծրագրում հետազոտություններին և զարգացմանը վերաբերող նպատակի առկայություն, 2. Գիտական հետազոտությունների ոլորտում բազմամյա փորձ կուտակած պրոֆեսորադասախոսական անձնակազմ, 3. Տարածաշրջանի հայագիտական ուսումնասիրությունների հնարավորություն համապատասխան ծրագրերի շրջանակներում, 4. Մագիստրոսական կրթական ծրագրերի իրականացման ոլորտում տարածաշրջանային առաջատար բուհ, 5. Միջազգային գիտական միջոցառումների կազմակերպման փորձառություն, 6. ՈՒԳԸ-ի ակտիվ գործունեություն, 7. Լավագույն շրջանավարտներին համալսարանում դասախոսական աշխատանքով ապահովելու ավանդույթ: 	<ol style="list-style-type: none"> 1. Արդիական գիտահետազոտական բազային լաբորատորիաների և նյութական տեխնիկայի բացակայություն, 2. Հետազոտությունների զարգացման նպատակով տրամադրվող ֆինանսական սուղ միջոցներ, 3. Հետազոտությունների պատվիրատուների ներգրավվածության բացակայություն, 4. Համալսարանի հետազոտական ներուժի աշխատանքների հրապարակայնացման, ինչպես նաև ձեռքբերված գիտական և նորարարական արդյունքների միջազգայնացման, բարձր վարկանիշով հանդեսներում տպագրման ոչ բավարար ծավալ, 5. Համալսարանի հետազոտական աշխատանքներում ուսումնառողների ոչ բարձր ներգրավվածություն, 6. Պրոֆեսորադասախոսական կազմի՝ օտար լեզվի, մասնավորապես, միջազգային գիտական լեզվի՝ անգլերենի տիրապետման ոչ բավարար մակարդակ, 7. Պրոֆեսորադասախոսական կազմի գիտահետազոտական և գիտամեթոդական աշխատանքների խթանման ռազմավարության բացակայություն, 8. ՀՀ ԲՈՀ-ի կողմից ընդունելի պարբերական գիտական հրատարակությունների ցուցակում ԳՊՀ-ի գիտական տեղեկագրի բացակայություն:
ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ՎՏԱՆԳՆԵՐ

<ol style="list-style-type: none"> 1. Արտադրական ձեռնարկությունների հետ համատեղ (համամասնական սկզբունքով) ուսումնական, հետազոտական և գիտատեխնոլոգիական համատեղ կենտրոնների ստեղծում, 2. Փոխկապակցված գիտահետազոտական նախաձեռնություններ իրականացնելու նպատակով այլ բուհերի հետ գործընկերային հարաբերությունների ստեղծում, 3. Բնական գիտությունների բնագավառում (մաթեմատիկա, քիմիա, ֆիզիկա) ատենախոսությունների թեմաների հաստատման իրավունքի ձեռքբերում, 4. ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի և այլ գիտական կազմակերպությունների ու բուհերի հետ համատեղ գիտական կոնֆերանսների, գիտաժողովների կազմակերպում՝ ԳՊՀ պրոֆեսորադասախոսական և ուսանողական կազմերի ակտիվ ներգրավմամբ, 5. Տարաբնույթ միջազգային կապերի ստեղծում և խթանում, միջազգային գիտատեղեկատվական ցանցերում և բարձր վարկանիշով հանդեսներում գիտական աշխատանքների պատշաճ ներկայացում, 6. ԳՊՀ-ի գիտական տեղեկագրի ստեղծում: 	<ol style="list-style-type: none"> 1. Տարածաշրջանում պատերազմական իրավիճակի սրում, 2. Պետության կողմից գիտական թեմաների ոչ բավարար ֆինանսավորում, 3. Հետազոտական աշխատանքների համար հատկացված ԳՊՀ-ի ծախսերի հնարավոր նվազում՝ պայմանավորված արտաքին գործոնների ազդեցությամբ (ուսման վարձավճարների և արտաքին այլ եկամուտների նվազում)։ 4. Գիտական հետազոտությամբ զբաղվող կադրերի ձեռագում:
--	---

VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

ԶՍՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ ռեսուրսներ՝ ուսումնական միջավայրի ստեղծման և ասհմանված առաքելության ու նպատակների արդյունավետ իրականացման համար:

ԶՍՓՈՐՈՇԻՉ ա. ՄՈՒՀ-ում առկա է մասնագիտությունների կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ուսումնական միջավայր:

Հիմքեր

Հաստատության մասնաշենքերը և դրանց օգտագործման նպատակները / [հավելված 7ա1/](#) Լաբորատորիաները, ուսումնական կաբինետները, արվեստանոցները, արհեստանոցները և դրանց օգտագործման նպատակները / [հավելված 7ա1/](#), Գրադարանների, պաշտոնական ինտերնետային կայքերի և գրականության հասանելի այլ աղբյուրների ցանկը,

Ռեսուրսներով ապահովվածության վերլուծությունը / [հավելված 7ա2/](#),

Գործընթացների բարելավմանն ուղղված միջոցառումները և մեխանիզմները:

Վերլուծել ուսումնական ռեսուրսների համապատասխանությունը հաստատության որակավորումների շրջանակի հետ:

Համալսարանի երեք ֆակուլտետներում ուսանում են ավելի քան 1350 ուսանողներ 2 հիմնական կրթական ծրագրերով, բակալավրի և մագիստրոսի որակավորման աստիճանների շնորհումով:

Համալսարանը, համաձայն ռազմավարական պլանի, հետևողականորեն իրականացնում է նպատակային միջոցառումներ՝ ուղղված մասնագիտությունների կրթական ծրագրերի կադրային և նյութատեխնիկական ռեսուրսների ապահովմանն ու բարելավմանը: ԳՊՀ-ի տրամադրության տակ են գտնվում Գորիս քաղաքի Ավանգարդ 2, 4, Կոմերիտմիության 2, Արգունանյան 37 հասցեներում տեղակայված 6 մասնաշենքերը, որոնք զբաղեցնում են 2, 28 հա հողատարածք [/հավելված 7ա1/](#): Շենքերի ընդհանուր մակերեսը կազմում է 7672,5 քառ.մ: Համալսարանը կրթական ծրագրերը կազմակերպում է 3 մասնաշենքերում՝ 48 լսարաններով: Ուսումնական տարածքները երկհերթ ուսուցմամբ լիովին բավարարում են լիցենզավորման համար ՀՀ կառավարության (որոշում N^o 1409Ն) կողմից ներկայացվող՝ մեկ ուսանողին ընկնող մակերեսի չափով պահանջներին: Մյուս մասնաշենքերում տեղակայված են համալսարանի գրադարանը, ուսանողական ճաշարանը և հանրակացարանը:

ԳՊՀ-ի մասնաշենքերում այսօր առկա են բարվոք պայմաններ՝ կահավորման և տեխնիկական հագեցվածության առումներով: Համալսարանի ռազմավարական պլանում նախատեսվում են որոշակի վերանորոգման աշխատանքներ թիվ 2 ուսումնական մասնաշենքում և գրադարանում:

ԳՊՀ-ի ուսումնական մասնաշենքերում գործում են 18 մասնագիտական կաբինետներ և լաբորատորիաներ՝ 950 քառ. մետր ընդհանուր մակերեսով:

ԳՊՀ-ի գրադարանը բուհի առաջատար կառուցվածքային ստորաբաժանումներից է և իր գործունեությունը ծավալում է՝ ղեկավարվելով գրադարանային գործի և տեղեկատվության մասին ՀՀ օրենքներով ու բուհի կանոնադրությամբ: Գրադարանն իր հնարավորությունների սահմանում կարողանում է ապահովել ուսումնական պրոցեսը գրականությամբ և խթանել գիտահետազոտական աշխատանքներին:

ԳՊՀ-ի գրադարանը զբաղեցնում է 5 գրապահոց՝ 68956 միավոր ընդհանուր ֆոնդով:

Գրադարանն իր տրամադրության տակ ունի ընթերցասրահ-լսարան, որը համաֆինանսավորմամբ վերանորոգվել ու կահավորվել է Erasmus+ LNSS ծրագրի շրջանակներում: Ընթերցասրահում առկա են համացանցին միացված համակարգիչներ, որոնցում մուտքագրված է 400 անուն գրականություն:

ԳՊՀ-ի գիտական խորհրդի ընդունած գրադարանի զարգացման հայեցակարգի իրականացման արդյունքում բարձրացվել է ուսանողների, գիտամանկավարժական կազմի մասնակցությունը տեղեկատվական ռեսուրսների պլանավորման ու զարգացման աշխատանքներին: ԳՊՀ-ի գրադարանը տեխնիկական հագեցվածությամբ և տեղեկատվության տրամադրման առումով մոտ չէ միջազգային ու եվրոպական չափանիշներին:

Գրադարանը մասնակցում է Erasmus+ LNSS «Գրադարանային ցանցի աջակցության ծառայություններ. գրադարանների արդիականացում Հայաստանում, Մոլդովայում և Բելառուսում՝ գրադարանների անձնակազմի զարգացման և գրադարանային ծառայությունների բարեփոխումների միջոցով» ծրագրին [/ հավելված 7ա3/](#):

Գրադարանի աշխատակիցը մասնակցել է Իռլանդիայի Լիմերիկ քաղաքում իրականացվող դասընթացների հիմնական փուլին/ [հավելված 7ա4/](#):

Գրադարանը համագործակցում է Հայաստանի մի շարք բուհերի գրադարանների հետ: 2005թ.-ից գրադարանը ազգային գրադարանային ասոցիացիայի անդամ է, մասնակցում է ասոցիացիայի համագումարներին, օգտվում ազգային գրադարանի հարուստ ֆոնդերից:

Գրադարանի զարգացման բնագավառում ԳՊՀ-ի գործունեության թույլ օղակ է գրադարանի և ուսումնական ու գիտական ստորաբաժանումների կապն ու համագործակցությունը: Գրադարանից օգտվողների համար հասանելի չեն մի շարք ռեսուրսային բազաներ, չի իրականացվում համապարփակ գրացուցակների կազմումը: Գրադարանի պահոցները գտնվում են անմխիթար վիճակում՝ ֆինանսական միջոցների սղության պատճառով:

Նշված խնդիրները լուծելու նպատակով 28.06.2016թ. գիտական խորհրդի որոշումով ստեղծվել է ԳՊՀ-ի գրադարանային խորհուրդը, հաստատվել է նաև խորհրդի կանոնակարգը [/հավելված 7ա8/](#):

ԳՊՀ-ի ռազմավարական ծրագրի առաջնահերթ նպատակներից է ուսումնական գործընթացի և նյութատեխնիկական պայմանների բարելավումը: Առանձնակի ուշադրություն է դարձվում կրթական ու գիտական ծրագրերի կարիքներին համապատասխան՝ համալսարանում նոր լաբորատորիաների և մասնագիտացված կաբինետների ստեղծմանը, դրանց առավել արդյունավետ օգտագործմանը:

Աղյուսակ 7.1. ԳՊՀ մասնաշենքերը և դրանցում տեղակայված ստորաբաժանումները.

<i>h/h</i>	<i>Մասնաշենքի անվանումը</i>	<i>Տեղակայված ստորաբաժանումը</i>
1.	Թիվ 1 ուսումնական մասնաշենք	1. ԳՊՀ վարչական կառույցներ 2. Հումանիտար և հասարակագիտական մասնագիտությունների ֆակուլտետ 3. Մարզադահլիճ
2.	Թիվ 2 ուսումնական մասնաշենք	1. Բնագիտական մասնագիտությունների ֆակուլտետ 2. Ճարտարագիտության և տնտեսագիտության ֆակուլտետ
3.	Գրադարանի մասնաշենք	1. ԳՊՀ գրադարան
4.	Օժանդակ մասնաշենք	1. ԳՊՀ ուսանողական ճաշարան 2. Պահեստ 3. Ավտոտնակ
5.	Հանրակացարանի մասնաշենք	1. Ուսանողական հանրակացարան 2. Բնակարանի կարիք ունեցող աշխատակիցների հանրակացարան
6.	Նախկին կաթսայատան մասնաշենք	1. Կապիտալ վերանորոգումից հետո նախատեսվում է վերակառուցել որպես մարզադահլիճ

Վերլուծել ՄՈՒՀ-ում առկա մասնագիտությունների կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ուսումնական միջավայրի արդյունավետությունը նշելով շահակիցների բավարարվածության աստիճանը: Հիմնավորել մոտեցումը և արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

ԳՊՀ-ում պարբերաբար հարցումներ են անցկացվում ուսումնական գործընթացների անհրաժեշտ ռեսուրսների և ծառայությունների բավարարվածության վերաբերյալ: Ստորև ներկայացվում է 2015թ.-ի առաջին կիսամյակում համալսարանի 4-րդ կուրսեցիների և դասավանդողների հարցման արդյունքները/ [հավելված 7ա11,7ա12/](#)

Ուսանողների բավարարվածությունը /5 բալանի սանդղակով/

1. Համակարգչային լսարանների մատչելիություն - 5.0
2. Լաբորատորիաների հագեցվածություն - 3.1
3. Գրադարանի սպասարկում - 4.4
4. Գրադարանի գրականության հագեցվածություն - 3.8
5. Համացանցի մատչելիություն և որակ - 5.0

Դասավանդողների բավարարվածությունը / 5 բալանի սանդղակով/

1. Համակարգչային լսարանների քանակ և հազեցվածություն - 5.0
2. Լաբորատորիաների հազեցվածություն - 3.5
3. Գրադարանի գրականության հազեցվածություն - 3.3
4. Համացանցի մատչելիություն և որակ - 5.0
5. Աշխատանքային ընդհանուր պայմաններ - 4.4

Հարցման արդյունքներից երևում է, որ համեմատաբար ցածր միավոր է ստացել լաբորատորիաների և գրադարանի հազեցվածությունը, ինչը սպասելի էր: Լաբորատոր սարքերի և գրականության առումով ԳՊՀ-ում իրոք կան որոշակի անելիքներ, չնայած վերջին տարիներին զգալի աշխատանքներ են կատարվել ինչպես գրադարանի համար մասնագիտական նոր գրականություն ձեռքբերելու, այնպես էլ նոր լաբորատոր սարքավորումների ձեռքբերման ուղղությամբ:

ԳՊՀ-ի և «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ-ի համագործակցության արդյունքում համալսարանին անհատույց տրամադրվել են տարբեր լաբորատոր սարքավորումներ (49,6 միլիոն ՀՀ դրամի սահմաններում) / [հավելված 7ա13,7ա14](#)/

Պարբերաբար գրադարանային ֆոնդը համալրվում է ԳՊՀ-ի կողմից մասնագիտական գրականություն ձեռքբերելով:

«Քոնյուր Գլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ – ի կողմից վերանորոգվել և անհրաժեշտ գույքով ապահովվել է էլեկտրոնիկայի և էներգետիկայի ամբիսին կից գործող էլեկտրաէներգետիկայի լաբորատորիան:

TEMPUS -ի ASPIRE «Հատուկ կարիքներով մարդկանց հասանելիությունը հասարակությանը» նախագծի շրջանակներում ստեղծվել է ներառական կրթության լսարան:

Տարբեր ծրագրերի շրջանակներում ստեղծվել է նաև չորս համակարգչային լսարան:

Այդ գործընթացները ԳՊՀ-ում, ըստ ռազմավարական զարգացման ծրագրի, շարունակական բնույթ են կրելու:

ՉՍՓՈՂՈՇԻՉ Բ. ՄՈՒՀ-ը, իր առաքելությունը և նպատակներն իրականացնելու համար հատկացնում է համապատասխան ֆինանսական ռեսուրսներ՝ անհրաժեշտ միջոցներով և սարքավորումներով ապահովելու ու գործարկելու համար:

Հիմքեր

Բյուջեի բաշխումը՝ ըստ [մուտքերի և ծախսերի /Հավելված 7գ1/](#),

Բյուջեի բաշխումը՝ ըստ ՄՈՒՀ-ի առաքելության հիմնական ուղղությունների (դասավանդում և ուսումնառություն, հետազոտություն և զարգացում, ծառայություն հասարակությանը) /[հավելված 7բ1/](#),

Բյուջեի բաշխումը՝ ըստ [ռազմավարական ուղղությունների/ էջ 11-12/](#),

Ուսումնական գործունեությունից ստացվող մուտքերի բաշխումը՝ պետական ֆինանսավորում, ուսման վճարներ, վերապատրաստումներ և այլն (արտահայտված տոկոսներով) / [հավելված 7բ1/](#),

Հետազոտական աշխատանքների, դասավանդման և ուսումնառության, մասնագիտական զարգացման, գրադարանների թարմացման և հարստացման, սարքավորումների, գույքի ձեռքբերման համար նախատեսված հատկացումները (արտահայտված տոկոսներով) /[հավելված 7բ1/](#),

Դրամաշնորհային ծրագրերով ստացված ֆինանսների բաշխումը /[հավելված 7բ2/](#),

Այլ աղբյուրներից ստացված ֆինանսների բաշխումը /[հավելված 7բ1/](#):

Վերլուծել բյուջեի բաշխման արդյունավետությունը: Արդյո՞ք ուսումնական գործընթացին վերաբերող ծախսերի բաշխումը համապատասխանում է հաստատության ռազմավարական նպատակներին: Հիմնավորել մտեցումը և արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Գործիսի պետական համալսարանում ֆինանսական հոսքերի կառավարումն ու վերահսկողությունն իրականացնելու նպատակով կազմվում է բյուջետային մուտքերի և ելքերի տարեկան նախահաշիվ, իսկ ֆինանսական տարվա ավարտից հետո փաստացի տվյալների հիման վրա ներկայացվում է տարեկան բյուջեի կատարողականը [/Եկամուտների և ծախսերի նախահաշիվներ, Հավելված 7գ1/](#):

2012-2016թթ. եկամուտների փոփոխման դինամիկան ցույց է տալիս, որ ընթացիկ տարվա մուտքերի մեջ պետական բյուջետային ֆինանսավորման ծավալը հինգ տարիների կտրվածքով միջին հաշվով կազմում է 17.7%: Մնացած 82.3 %-ը բաժին է ընկնում այլ անձանցից ստացվող մուտքերին: Վերջինիս մեջ վճարովի ուսուցումից ստացվող մուտքերի տեսակարար կշիռը ընթացիկ տարվա մուտքերի մեջ կազմում է 73.2%, այլ աղբյուրներից ստացվող մուտքերը՝ 9.1%: Պետական բյուջետային ֆինանսավորման մեջ ուսումնական գործունեությանն ընկնող ֆինանսավորման ծավալը ընթացիկ տարվա մուտքերի մեջ կազմում է 14.1%, մնացած 3.1%-ը բաժին է ընկնում գիտական թեմաների ֆինանսավորմանը: Ընդհանուր առմամբ կարող ենք ասել, որ ուսումնական գործունեությունից ստացվող մուտքերը ընթացիկ տարվա մուտքերի կառուցվածքում կազմում են 87.7%, այդ թվում պետական ֆինանսավորման գծով՝ 14.1%, վճարովի ուսուցման գծով՝ 73.2%, ուսումնական գործունեության այլ մուտքերի գծով՝ 0.4%: Ինչպես երևում է վերլուծությունից, բուհը բացի հիմնական կրթական ծրագրերից, չունի ուսումնական գործունեությունից ստացվող այլ մուտքեր, ինչպիսիք են՝ վերապատրաստումներից, պատվիրատու կազմակերպությունների պահանջով կադրերի պատրաստման գծով ստացվող մուտքերը և այլն: Բուհի այլ աղբյուրներից ստացվող մուտքերը ներառում են նաև դրամաշնորհային ծրագրերով ստացված մուտքերը: 2012-2016թթ.եկամուտների փոփոխման դինամիկան ցույց է տալիս, որ ընդամենը եկամուտները 2012-2015թթ. ընկած ժամանակահատվածում տարեցտարի նվազել են: Միայն 2016թ.ընդամենը եկամուտները 2015թ-ի նկատմամբ աճել են 7.9%-ով: 2011-2016թթ. ԳՊՀ-ի հայեցակարգով նախատեսված արտաբյուջետային մուտքերի աճը 2012 թվականին 2011թ. նկատմամբ կազմել է 14.0%՝ պլանով նախատեսված առնվազն 10% կողմնորոշիչ ցուցանիշի դիմաց: [/ԳՊՀ հայեցակարգ, էջ 11-12/](#):

Թեպետ համալսարանը 2016թ-ին 2011թ-ի համեմատ չի հասել արտաբյուջետային մուտքերի՝ ԳՊՀ-ի հայեցակարգով նախատեսված աճին, այնուամենայնիվ 2016թ-ից սկսած նկատվում է եկամուտների դրական դինամիկա: 2016թ.արտաբյուջետային եկամուտները 2015թ-ի նկատմամբ աճել են 12.6%-ով, այդ թվում՝ վճարովի ուսուցման գծով՝ 5.4%-ով: Մյուս կողմից, եթե 2010-2011թթ.-ին դրամաշնորհային ծրագրերով ստացված մուտքերը ընթացիկ տարվա մուտքերի մեջ կազմել են 0%, ապա 2012-2016թթ. ընկած ժամանակահատվածում միջին հաշվով կազմել են մոտ 5%, որն էլ հնարավորություն է տվել լուծել ԳՊՀ-ի ռազմավարական կարևորագույն խնդիրները:

Անցած հնգամյակի ԳՊՀ-ի ֆինանսատնտեսական գործունեության վերլուծությունը ցույց է տալիս, որ առկա ֆինանսական միջոցների շրջանակում ֆինանսատնտեսական գործունեության հիմնական նպատակը եղել է ֆինանսական պլանավորման ներդաշնակեցումը համալսարանի ռազմավարական նպատակներին ու խնդիրներին, ֆինանսական մուտքերի բազմազանեցումը, ֆինանսական ռեսուրսների կառավարման ու օգտագործման արդյունավետության բարձրացումը, ֆինանսական կայունության ապահովումը:

2012-2016թթ.-ին նախատեսված հատկացումներն ըստ հետազոտական աշխատանքների ու զարգացման, դասավանդման և ուսումնառության, գրադարանների թարմացման ու հարստացման, սարքավորումների, գույքի ձեռքբերման, ինչպես նաև ուսումնական գործունեությունից ստացվող մուտքերի, դրամաշնորհային ծրագրերով ստացված ֆինանսների և

այլ աղբյուրներից ստացված ֆինանսների բաշխումը (արտահայտված տոկոսներով) բերված են աղյուսակում [/հավելված 7բ1/](#):

Ենթակառուցվածքի պահպանմանն ուղղվող միջոցների տեսանկյունից համալսարանը կարողացել է ապահովել պլանային ցուցանիշները ի հաշիվ դրամաշնորհային ծրագրերի: Տեմպուս-ի ASPIERE «Հատուկ կարիքներով մարդկանց հասանելիությունը հասարակությանը» դրամաշնորհային ծրագրի շրջանակում ստեղծվել է ներառական կրթության լսարան՝ հատուկ կարիքներով ուսանողների համար:

MAHATMA դրամաշնորհային ծրագրի շրջանակում 2013թ.-ին համալսարանին է տրամադրվել 7256.0 հազ.դրամի համակարգիչներ, համակարգչային սարքավորումներ, ստեղծվել է լսարան՝ «Կրթության կառավարում» մագիստրոսական կրթական ծրագրի կայացման համար:

Տեմպուսի ARARAT դրամաշնորհային ծրագրի շրջանակում, որի նպատակը համալսարան-գործատու համագործակցության զարգացումն է, 2014թ.-ին համալսարանին է տրամադրվել 4117.2 հազ.դրամի համակարգիչներ և տարբեր սարքավորումներ:

«Կրթական ծրագրերի կենտրոն «ԾԻԳ-ի կողմից ԳՊՀ-ին անհատույց տրամադրվել է 47474.8 հազ.դրամի լաբորատոր սարքավորումներ և նյութեր:

2011-2016թթ. ԳՊՀ-ի հայեցակարգով նախատեսված էր հետազոտությանը և զարգացմանը ուղղել ծախսերի առնվազն 10%-ը՝ սկսած 2012թ-ից: Համալսարանը ցուցանիշը կատարել է 50%-ով: 2016թ-ին, ինչպես նաև նախորդ 5 տարիներին, բուհն ունեցել է պետական բյուջեից ֆինանսավորվող ընդամենը մեկ գիտական թեմա՝ հայագիտության բնագավառում:

Համալսարանի ռազմավարական ուղղություններից է կրթական համակարգի զարգացումը, կրթության բարձր որակի ապահովումը, ինչն էլ ուղղակիորեն կախված է դասախոսների աշխատանքի վարձատրության մակարդակից: Մինչև 2013թ-ը համալսարանի աշխատակիցների աշխատավարձերի պլանաչափ բարձրացումը դարձել էր համալսարանի ֆինանսական գործունեության հիմնական ուղենիշներից մեկը: 2012թ. հունվարի 1-ից համալսարանի աշխատողների միջին ամսական աշխատավարձի աճը 2011թ-ի նկատմամբ կազմել է 10-15%՝ պլանով նախատեսված առնվազն 10%-ի դիմաց: Սակայն վերջին 4 տարիներին ֆինանսական դժվարությունների պատճառով աշխատավարձի բարձրացում չի կատարվել: Համալսարանը, հաշվի առնելով 2011թ. առկա ուսուցման գծով ընդունելության զրոյական մակարդակը, միտված էր կայունացման ֆոնդի պահպանմանը՝ հետագայում բնականոն գործունեություն ծավալելու համար: Ռազմավարական պլանով նախատեսված առնվազն 15% կողմնորոշիչ ցուցանիշի դիմաց 2012 -2016թթ.-ին կայունացման ֆոնդի հաշվեկշիռը բյուջեում միջին հաշվով կազմել է 15.4% [/ԳՊՀ հայեցակարգ, էջ 11-12 /](#):

Համալսարանի աշխատակիցների աշխատավարձերի հետագա բարձրացման ուղղությամբ 2015-2016թթ. բուհում կատարվել են հաստիքների օպտիմալացման աշխատանքներ:

Համալսարանում դրամաշնորհային ծրագրերով ստացված միջոցները բախշվում են դրամաշնորհային պայմանագրերով նախատեսված գումարների բաշխման նախահաշիվներով, որոնք հաշվի են առնվում համալսարանի տարեկան բյուջեի կազմման ժամանակ: Հաշվետու տարվա ավարտից հետո յուրաքանչյուր դրամաշնորհային ծրագրի գծով ներկայացվում է ծախսերի կատարողականը ըստ առանձին ծախսային հոդվածների [/հավելված 7բ2/](#):

Այլ անձանցից ստացվող մուտքերի մեջ, բացի դրամաշնորհային ծրագրերից ստացվող մուտքերի, առանձին բաժին են կազմում այլ աղբյուրներից ստացվող մուտքերը: 2016թ-ին այլ աղբյուրներից ստացվող մուտքերի տոկոսաբաժինը ընթացիկ տարվա մուտքերի մեջ նվազել և 4.5%-ից հասել է 1.8%-ի: Դա պայմանավորված է հիմնականում ուսանողական ճաշարանի գործունեության դադարեցման և ժամկետային ավանդի գծով ստացվող տոկոսների կրճատման հետ: Ընդհանուր առմամբ, բուհը պետք է ընդլայնի վճարովի ծառայությունների ձևերն ու

հաշվեկշիռը բյուջեի եկամտային մասում, խրախուսի և զարգացնի համալսարանի բոլոր ստորաբաժանումների նախաձեռնությունը և ինքնուրույնությունը սեփական միջոցների ձևավորման ու բաշխման գործում:

ԶՍՓՈՂՈՇԻՉ գ. ՍՈՒՀ-ում գործում է մասնագիտությունների կրթական ծրագրերի նպատակների իրականացումն ու շարունակականությունն ապահովող և երաշխավորող ֆինանսական միջոցների բաշխման քաղաքականություն:

Հիմքեր

Հաստատության կրթական նպատակների իրականացման համար ֆինանսական միջոցները կառավարելու և դրանք նպատակներին համապատասխան բաշխելու մեխանիզմները / [ԳՊՀ եկամուտների և ծախսերի նախահաշիվը](#)/,

Ֆինանսական միջոցներին համապատասխան հաստատության գործունեության պլանավորման, կառավարման և մշտադիտարկման քաղաքականությունը/ [հավելված 7գ1](#)/,

Պետական, մասնավոր և միջազգային կազմակերպություններից ստացվող ֆինանսական և նյութական միջոցների օգտագործման ընթացակարգը,

Ֆինանսական միջոցների օգտագործման նպատակայնությունը երաշխավորող մեխանիզմները (աուդիտներ, հաշվետվություններ) /[տարեկան հաշվետվություն, ֆին. բաժին](#)/:

Վերլուծել ՍՈՒՀ-ում գործող մասնագիտությունների կրթական ծրագրերի նպատակների իրականացումը ու շարունակականությունը ապահովող և երաշխավորող ֆինանսական միջոցների բաշխման քաղաքականության արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը և արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Հաշվի առնելով համալսարանի գործունեության բոլոր բնագավառները՝ կազմվում է տվյալ ֆինանսական տարվա բյուջեի նախագիծը: Վերջինս կազմվում է՝ հաշվի առնելով սպասվելիք եկամուտները՝ ինչպես պետական բյուջեից, այնպես էլ վճարովի ուսուցումից, այլ աղբյուրներից կատարվելիք ընդհանուր ծախսերը: Բյուջեի նախագիծը քննարկվում է ԳՊՀ գիտական խորհրդի նիստում և հավանության արժանանալու դեպքում ներկայացվում ԳՊՀ-ի Խորհրդի հաստատմանը /[ԳՊՀ եկամուտների և ծախսերի նախահաշիվը](#)/:

Ծախսերի պլանավորման ժամանակ հաշվի են առնվում ԳՊՀ-ի ստորաբաժանումների կողմից իրենց կարիքների համար ներկայացվող հայտերը: Առկա ֆինանսական ռեսուրսների շրջանակներում հատկացումներ են կատարվում ինչպես համալսարանի զարգացման, այնպես էլ աշխատանքի վարձատրության ու ենթակառուցվածքի պահպանման համար: Յուրաքանչյուր ուսումնական տարվա ավարտին ֆակուլտետները համալսարանի ղեկավարությանն են ներկայացնում հաջորդ տարվա ուսումնական ծանրաբեռնվածությունները, որոնց հիման վրա էլ կատարվում է դասախոսների հաստիքների ձևավորումը և աշխատանքի վարձատրությունը: Դասախոսի աշխատավարձի չափը որոշվում է՝ համաձայն ուսումնական բեռնվածության, գիտական աստիճանի, կոչման ու պաշտոնի:

Ռեսուրսների բաշխման մեխանիզմ է նաև առանձին ստորաբաժանումների հայտերի հիման վրա ապրանքների, աշխատանքների ու ծառայությունների գնումը ԳՊՀ-ի գնումների և մատակարարման բաժնի կողմից:

Ֆինանսների տնօրինման քաղաքականությունը ԳՊՀ-ի գործունեության կառավարման բաղկացուցիչ մասն է: Այն կանոնադրական և ռազմավարական խնդիրների իրականացման համար ֆինանսների կազմակերպման և օգտագործման գծով գործառնությունների ամբողջություն է, որն ուղղված է ֆինանսական միջոցների հավաքագրմանը, բախշման գործընթացների կարգավորմանը, ֆինանսական կայունության ապահովմանը: Համալսարանի տարեկան բյուջեն հաստատում է համալսարանի խորհուրդը:

Համալսարանը անընդհատ կատարում է վերջին հինգ տարիների համար պլանային և փաստացի ցուցանիշների վերլուծություն, բացահայտում է զարգացման միտումները, որն էլ հիմք է հանդիսանում հետագա առավել օպտիմալ պլանի կազմման համար [/հավելված 7գ1/](#):

Քանի որ բուհի եկամուտների ընդհանուր կառուցվածքում գերակշիռ մասը կազմում են արտաբյուջետային եկամուտները, ուստի արտաբյուջետային միջոցների աղբյուրների բազմազանեցումը, համալսարանի եկամուտների ընդհանուր ծավալում կրթական, գիտական ու տեղեկատվական վճարովի ծառայություններից գոյացած միջոցների հաշվեկշռի մեծացումը՝ դրանց ցանկի ընդլայնման ու եկամտաբերության բարձրացման ճանապարհով, դառնում է առաջնահերթ խնդիր:

Համալսարանը առաջիկայում նախատեսում է օգտվել անկախ աուդիտորական ընկերության ծառայությունից և յուրաքանչյուր ֆինանսական տարվա վերջում ունենալ աուդիտի եզրակացություն:

Ֆինանսական միջոցների օգտագործման նպատակայնության և արդյունավետության վերաբերյալ ամեն տարի համալսարանի եկամուտների և ծախսերի նախահաշիվների և դրանց կատարողակների վերաբերյալ տրվում է հաշվետվություն ինչպես Գիտական խորհրդի նիստում, այնպես էլ Խորհրդի նիստում [/տարեկան հաշվետվություն/](#):

ՉՍՓՈՐՈՇԻՉ ղ. ՄՈՒՀ-ի ռեսուրսային բազան հնարավորություն է ընձեռում մասնագիտությունների կրթական ծրագրերի և ռազմավարական պլանի իրականացման համար, ինչը նպաստում է որակի շարունակական բարելավմանը և կայունությանը:

Հիմքեր

Ռեսուրսների՝ ժամանակին բաշխելու մեխանիզմները, գործընթացները և ընթացակարգերը, Ուսուցման գործընթացների որակի ապահովման համար դասավանդողների և ուսումնառողների կարիքների բավարարման մեխանիզմները:

Վերլուծել որակի շարունակական բարելավումն ու կայունությունը ապահովելու նպատակով ՄՈՒՀ-ի ռեսուրսային բազայի արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը և արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Համալսարանի ուսումնական գործընթացին միտված անհրաժեշտ ռեսուրսների ձեռքբերման պլանավորումը իրականացվում է բուհի վարչակազմի առանձին ստորաբաժանումների կողմից: ԳՊՀ-ն պլանավորում է առաջիկա ֆինանսական տարվա համար անհրաժեշտ ռեսուրսները՝ համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջի: Գնումների պլանը կազմվում է համալսարանի բոլոր ստորաբաժանումների կողմից ներկայացվող պահանջների հիման վրա:

Քանակային առումով ռեսուրսների պլանավորումն ու ձեռքբերումը ուղիղ համեմատական է սվյալ տարում համալսարանում սովորող ուսանողների թվին: Որպես կանոն ռեսուրսների ձեռքբերման գործընթացում կտրուկ ավելացումներ կամ նվազումներ տեղի չեն ունենում: Այն իրականացվում է կենտրոնացված ձևով, իսկ դրանց բաշխումը տեղի է ունենում ըստ առանձին բաժինների և ռեսուրսային կարիքների:

ՉՍՓՈՐՈՇԻՉ ե. ՄՈՒՀ-ում առկա է տեղեկատվությունը և փաստաթղթավորման գործընթացները կառավարելու հստակ քաղաքականություն և ընթացակարգ:

Հիմքեր

Տեղեկատվության և փաստաթղթաշրջանառության կառավարման կանոնակարգերը, Տեղեկատվության և փաստաթղթաշրջանառության կառավարման մեխանիզմները և /կամ համակարգը,

Գործընթացի վերանայման արդյունքները վերջին 5 տարիների համար,

Գործընթացների բարելավմանն ուղղված միջոցառումները:

Վերածել ՄՈՒՀ-ում գործող տեղեկատվության և փաստաթղթաշրջանառության գործընթացների կառավարման քաղաքականության և ընթացակարգերի արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը և արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

ՄՈՒՀ-ում առկա է տեղեկատվությունը կառավարելու հստակ քաղաքականություն և ընթացակարգ:

Տեղեկատվության կառավարման բարելավումը համալսարանի ռազմավարական խնդիրներից է: ԳՊՀ-ի ՌԾ-ում նախատեսվում է ստեղծել միասնական կենտրոնական տեղեկատվական համակարգ և ապահովել վերջինիս մատչելիությունը ուսանողների և աշխատակիցների համար: Տեղեկատվական ռեսուրսների՝ ժամանակակից չափանիշներին համապատասխան զարգացումը և դրանց արդյունավետ օգտագործման ու մատչելիության ապահովումը համարվում է Գորիսի պետական համալսարանի գերակա խնդիրներից մեկը, որի ուղղությամբ 2012թ.-ից իրականացվում են մի շարք միջոցառումներ:

Համալսարանի տեղեկատվության կառավարումն իրականացվում է հետևյալ գործիքամիջոցներով. վերահսկողություն էլեկտրոնային տեղեկատվական համակարգով, ԳՊՀ-ի /www.gorsu.am/ կայքէջով, վարչական գործընթացների ավտոմատացման համակարգով:

ԳՊՀ-ի կայքէջում գետեղվում են ԳՊՀ-ի խորհրդի և գիտական խորհրդի որոշումները /տե՛ս www.gorsu.am կայքի գիտական խորհուրդ բաժնում/, ինչպես նաև՝ կանոնադրությունները, կանոնակարգերը, ընթացակարգերը, հայեցակարգերը և այլ նորմատիվ փաստաթղթեր:

ԳՊՀ-ի պաշտոնաթերթում հրապարակվում են՝ ԳՊՀ խորհրդի և գիտական խորհրդի նիստերի արձանագրությունների, կանոնակարգերը, ընթացակարգերը, հայեցակարգերը և այլ նորմատիվ փաստաթղթեր, ԳՊՀ-ի ռեկտորի նորմատիվ հրամանները, ֆակուլտետի դեկանի, ամբիոնի վարիչի, պրոֆեսորադասախոսական կազմի պաշտոնների թափուր տեղերի մրցույթների հայտարարությունները:

Տեղեկատվության տարածման նպատակով ԳՊՀ-ում գործում է Հասարակայնության հետ կապերի և լրատվության բաժինը:

Գորիսի պետական համալսարանում փաստաթղթաշրջանառությունը կանոնակարգվում է «ԳՊՀ գործավարության կարգով»՝ հաստատված ԳՊՀ գիտական խորհրդի կողմից՝ 2012թվականին:

ԳՊՀ – ում հասանելի է 34 Մբվ թողունակությամբ ինտերնետ կապ, որն ապահովվում է երեք տարբեր Ինտերնետ ծառայություններ մատուցող ընկերությունների կողմից (Meganet, Viva-Ceel , Ucom):

ԳՊՀ-ում գործում է նաև համակարգչային ներքին ցանց:

Համալսարանում փաստաթղթաշրջանառության և հանձնարարականների ժամանակին կատարման նկատմամբ վերահսկողությունը, արդյունավետ կազմակերպումը և միասնական կարգի կիրառումն իրականացնում է աշխատակազմի կառավարման բաժինը:

ԳՊՀ-ի տարբեր ստորաբաժանումների գործունեությունն արտացոլող փաստաթղթերի արխիվացումը կատարվում է արխիվավարի կողմից:

ԳՊՀ-ում ներքին փաստաթղթաշրջանառությունը կատարվում է ինչպես էլեկտրոնային եղանակով, այնպես էլ թղթային տարբերակով:

ՀՄՓՈՐՈՇԻՉ զ. ՄՈՒՀ-ը ստեղծում է ապահով և անվտանգ միջավայր առողջապահական և անվտանգության պահպանմանն ուղղված ծառայությունների միջոցով՝ հաշվի առնելով հատուկ կարիքներ ունեցող ուսանողներին:

Հիմքեր

Առողջության և անվտանգության պահպանմանն ուղղված ծառայությունների ենթակառուցվածքները [/հավելված 7q4/](#),

Առողջության և անվտանգության (հաշվի առնելով առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող ուսումնառողներին) պահպանմանն ուղղված ծառայությունների քաղաքականությունն ու ընթացակարգերը [/հավելված 7q1/](#),

Առողջության և անվտանգության պահպանմանն ուղղված ծառայություններին հատկացված ֆինանսական միջոցների բաշխումը վերջին 5 տարվա համար [/ հավելված 7q 2/](#),

Առողջության և անվտանգության պահպանմանն ուղղված ծառայություններն ապահովող անձնակազմը և դրա անդամների աշխատանքային նկարագրերը [/ հավելված 7q5 /](#),

Մատուցվող ծառայությունների արդյունավետությունը արտահայտող այլ հիմքեր և վերլուծություններ [/հավելված 7q6/](#):

Վերլուծել առողջության և անվտանգության պահպանման ծառայությունների արդյունավետությունը՝ հիմնվելով շահակիցների արձագանքների վրա:

ԳՊՀ-ում առողջապահական և անվտանգության պահպանմանն ուղղված ծառայությունների գործունեությունը գտնվում է համալսարանի ռեկտորի անմիջական ուշադրության կենտրոնում և համակարգվում է ԳՊՀ-ի ավագ ճարտարագետի կողմից: Ավագ ճարտարագետի կողմից էլ կոորդինացվում են առողջության և անվտանգության հետ կապված գործընթացները: Առողջության և անվտանգության պահպանման գործընթացը իրականացվում է ըստ ԳՊՀ-ի աշխատակիցների և ուսանողների առողջության և անվտանգության պահպանման ընթացակարգի [/հավելված 7q1/](#):

Խորհրդային ժամանակներում կառուցված մասնաշենքերում հաշվի չեն առնվել դժվարությամբ տեղաշարժվող մարդկանց հատուկ կարիքները: Միայն թիվ 1 մասնաշենքի մուտքում կա թեքահարթակ: Տեղաշարժման, լսողության, տեսողության և այլ խնդիրներ ունեցող մարդկանց համար համապատասխան պայմանների ստեղծումը ֆինանսական մեծ միջոցներ է պահանջում, ինչը դեռևս վեր է համալսարանի ուժերից:

Վերլուծել ՄՈՒՀ-ի միջավայրի ապահովության, առողջության և անվտանգության պահպանմանն ուղղված ծառայությունների արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը և արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

ԳՊՀ-ում առողջապահական ոլորտի կարևոր ծառայություն է բուժկետը, որն իրականացնում է առաջին բուժօգնություն և ապահովված է առաջին օգնության դեղորայքով: Բուժկետի փոքր հնարավորությունների պատճառով համալսարանի ներքին շահակիցները անհրաժեշտության դեպքում օգտվում են համալսարանի տարածքին կից գործող թիվ 2 ընտանեական բժշկական կենտրոնից: Համալսարանը համագործակցում է նաև Գորիս քաղաքի Ս.Ամիրյանի անվան պոլիկլինիկայի հետ, որտեղ փոխադարձ պայմանավորվածության համաձայն պարբերաբար իրականացվում են ներքին շահակիցների տարեկան բժշկական ստուգումներ (դասախոսներ, հանրակացարանի աշխատակիցներ, ճաշարանի աշխատակիցներ, գիշերային պահակներ և այլն) [/հավելված 7q2/](#): Համալսարանը համաճարակային վարակներից խուսափելու նպատակով սերտ համագործակցության մեջ է նաև Սյունիքի մարզային փորձագիտական կենտրոն «ՊՌԱԿ Գորիսի մասնաճյուղի» հետ:

Համալսարանի առողջապահական կյանքում զգալի ներդրում ունի ֆիզիկական դաստիարակության և սպորտի ամբիոնը, որի հիմնական խնդիրը ֆիզիկական դաստիարակություն առարկայի ուսումնական ծրագրերին համապատասխան ուսանողների կրթական, դաստիարակչական, ինչպես նաև առողջության ամրապնդմանն ուղղված գործունեությունն է և սպորտ-մասսայական միջոցառումների իրականացումը: Ամբիոնը

կազմակերպում է և՛ ընդհանուր, և՛ հոսքային դասընթացներ տարբեր մարզածներից /Ֆուտբոլ, վոլեյբոլ, բասկետբոլ և այլն/:

Համալսարանը հնարավորինս միջոցներ է հատկացնում մարզադահլիճի, սպորտային հրապարակների բարելավման և մարզագույքի ձեռքբերման համար, սակայն դրանք բավարար չեն: Պարապմունքների արդյունավետ կազմակերպմանը խոչընդոտում են նյութատեխնիկական բազայի, մարզադահլիճի ոչ բավարար վիճակը/շենքային պայմանները արդյունավետ չեն հոսքային պարապմունքների համար/:

ԳՊՀ-ի ուսանողների և աշխատակիցների հանգստի և առողջության վերականգնման գործընթացը ԳՊՀ-ն չի իրականացվում հանգստավայրերում և հանգստյան գոտիներում՝ անհրաժեշտ ֆինանսական միջոցների բացակայության պատճառով:

ԳՊՀ –ի տրամադրության տակ գտնվող հանրակացարանի սենյակներից օգտվում են ինչպես կարիքավոր ուսանողները, անպես էլ աշխատակիցները: Սենյակները հիմնականում գտնվում են բարվոք վիճակում:

ԳՊՀ-ում անվտանգության գծով ճարտարագետի կողմից համալսարանի աշխատակիցների համար յուրաքանչյուր տարվա սկզբին իրականացվում է անվտանգության կանոնների ծանուցում, որից հետո հատուկ հրահանգավորման մատյանում կատարվում է գրառում [/հավելված 7q3/](#):

Արտակարգ իրավիճակներում ուսանողների և աշխատակիցների քաղաքացիական պաշտպանությունն իրականացնում է ԳՊՀ-ի քաղաքացիական պաշտպանության շտաբը [/հավելված 7q4/](#): ԳՊՀ-ի մասնաշենքերում մշտական հիմունքներով գործում են քաղպաշտպանության տարհանման հանձնաժողովներ՝ մասնաշենքերի պարետների և ֆակուլտետների ղեկանների, աշխատակիցների և ուսանողների ներգրավմամբ [/հավելված 7q5/](#): Համալսարանի բոլոր մասնաշենքերում փակցված են արտակարգ իրավիճակների դեպքում տարհանման սխեմաները [/հավելված 7q6/](#): Մասնաշենքերն ունեն անհրաժեշտ թվով մուտքեր՝ ուսանողների տարհանումն արդյունավետ իրականացնելու համար: Երկու մասնաշենքերի և հանրակացարանի առաջին հարկերում գործում են հարմարեցված թաքստոցներ: Շտաբն իրականացնում է կազմավորումների ուսուցում, որի արդյունքում, ըստ ծրագրի, պատրաստվում են փրկարարներ, հետախույզներ, սանդրոմիայի անդամներ: Անհրաժեշտության դեպքում այդ ջոկատները կներգրավվեն փրկարար աշխատանքներում:

Համալսարանի մասնաշենքերում տեղադրված են հակահրդեհային պաշտպանության համար անհրաժեշտ սարքավորումներ /կրակմարիչներ, բահեր, հատուկ գործիքներ և այլն/: Սակայն մասնաշենքերը ապահովված չեն հրդեհ ազդարարող ինքնաշխատ համակարգերով:

Համալսարանում շուրջօրյա հերթապահության ռեժիմով իրականացվում է համալսարանի մասնաշենքերի և գույքի պահպանություն: Այդ աշխատանքները իրականացվում են 6 պահակների, 4 գիշերային պահակների և 3 բակապանների միջոցով: Ձմեռային ամիսներին բակապանների կողմից իրականացվում է ինչպես ձնամաքրման, այնպես էլ արահետների բացման աշխատանքներ:

Համալսարանի տնտեսական մասի կողմից իրականացվում են սանմաքրման աշխատանքներ: Սանմաքրողների թիվը հասնում է 11-ի, որոնք տեղաբաշխված են՝ ըստ ԳՊՀ-ի մասնաշենքերի:

ՉՍՓՈՂՈՇԻՉ է. ՄՈՒՀ-ում գործում են ուսանողներին և դասավանդողներին տրամադրվող ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատման մեխանիզմներ:

Հիմքեր

Կրթական գործընթացների կարգավորմանն ուղղված ծրագրերը

Կրթական գործընթացների իրականացման արդյունքների վերլուծությունը (նշելով արդյունավետությունը)

Գործընթացի նպատակների իրականացումն ու ձեռքբերումների գնահատման գործիքները *Վերլուծել ուսանողներին և դասավանդողներին տրամադրվող ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատման գործող մեխանիզմների և ծառայությունների արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը և արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից:*

ԳՊՀ-ում ուսանողներին և դասավանդողներին տրամադրվող ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատումն իրականացվում է հարցումների արդյունքներով / [հավելված 7ա2](#)/:

Որպես կանոն՝ հարցման արդյունքներով ուսանողները գոհ են տրամադրվող ռեսուրսների օգտակարությունից:

Ուսանողական հարցումներում տեղ գտած առաջարկություններն ու դիտողությունները հաշվի են առնվում հաջորդ տարվա գնումների պլանի կազմման, ռեսուրսների արդյունավետ բաշխման գործընթացներում:

Չափանիշ 7-ի SWOT վերլուծություն

<i>Ուժեղ կողմեր</i>	<i>Թույլ կողմեր</i>
---------------------	---------------------

<p>1. Ֆինանսական կայունության ապահովում,</p> <p>2. Ֆինանսական կառավարման բնագավառում ռազմավարական պլանով նախատեսված առաջընթացի գնահատման կողմնորոշիչ ցուցանիշների զգալի մասի ապահովում,</p> <p>3. Տեղեկատվական տեխնոլոգիաների առկայություն (ուսումնական պահանջներին համապատասխան),</p> <p>4. Լսարանների, լաբորատորիաների և ուսումնական կաբինետների փուլային նորոգում՝ ըստ ՌԾ-ի առաջնահերթությունների,</p> <p>5. Ապաստարանների և բուժական կետի առկայություն. կանոնակարգված են նաև աշխատանքային անվտանգության հետ կապված հարցերը,</p> <p>6. Շենքային պայմանների հարմարավետություն արտակարգ իրավիճակներում տարհանման աշխատանքների արագ կազմակերպման համար:</p>	<p>1. Համալսարանի առանձին ստորաբաժանումների կողմից արտաբյուջետային մուտքերի ձևավորման գործում թույլ նախաձեռնություն,</p> <p>2. Բյուջեի եկամտային մասում վճարովի ծառայությունների ընդլայնման անհրաժեշտություն,</p> <p>3. Համալսարանի շենքային պայմանների բարելավմանն ուղղված լրացուցիչ ֆինանսական միջոցների անհրաժեշտություն,</p> <p>4. Հատուկ կարիքավոր անձանց համար ոչ բավարար շենքային պայմաններ,</p> <p>5. Քաղ. պաշտպանության համար ժամանակակից գույքի բացակայություն. մասնաշենքերը ապահովված չեն հրդեհ ազդարարող ինքնաշխատ համակարգերով,</p> <p>6. Ֆիզիկական դաստիարակության համար ժամանակակից պահանջներին համապատասխան մարզադահլիճի բացակայություն:</p>
<p>Հնարավորություններ</p>	<p>Վտանգներ</p>
<p>1. Գործարար միջավայրի հետ փոխշահավետ համագործակցություն: ՊՈԱԿ-ից հիմնադրամի կարգավիճակի անցման դեպքում ձեռնակատիրական գործունեության ծավալում,</p> <p>2. Աշխատաշուկայի պահանջներին համապատասխան նոր ՄԿԾ-ների իրականացում և դրամաշնորհային ծրագրերում մասնակցության ակտիվացում,</p>	<p>1. Ըստ տարիների՝ դիմորդների հոսքի նվազում, մասնավորապես բնագիտական մասնագիտությունների գծով,</p> <p>2. Աշխատատեղերի բացակայություն. շրջանավարտների՝ աշխատանքի տեղավորման խնդիրները:</p>

VIII. ՀԱՍԱՐԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՓԱՆԻՇ:ՄՈՒՀ-ն իր տրամադրած կրթության, իրականացրած հետազոտության և օգտագործած ռեսուրսների համար հաշվետու է պետությանը և հասարակությանը:

ՉԱՓՈՐՈՇԻՉ ա. ՄՈՒՀ-ն ունի հաշվետվողականության սահմանված կարգ:

Հիմքեր

Շահակիցների առջև հաշվետվողականությունն ապահովող քաղաքականությունը, ընթացակարգերը և մեխանիզմները, Հասարակությանը տրամադրվող ծառայությունների ռազմավարական նպատակները և քաղաքականությունը (օր.՝ մասնագիտական զարգացման/վերապատրաստման դասընթացներ, խորհրդատվական ծառայություններ, օժանդակում հանրակրթական հաստատություններին, միջավայրի բարելավմանը միտված գործունեություններ և այլն, Հասարակությանը տրամադրվող ծառայությունների իրականացման հիմնավորումները, Հասարակության զարգացմանը միտված ՄՈՒՀ-ի իրականացրած այլ աշխատանքները, *Վերլուծել, թե որքանով է ՄՈՒՀ-ի հաշվետվողականությունը նպաստում կառավարման բարելավմանը: Հիմնավորել մոտեցումը և արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:*

ԳՊՀ-ն, լինելով Սյունիքի մարզի (տարածաշրջանի) միակ պետական բարձրագույն բուհը, կոչված է իրականացնելու կրթադաստիարակչական գործունեություն և բավարարելու հասարակության կրթական ու տեխնոլոգիական կարիքները՝ հաշվետու լինելով հասարակությանը և իր հիմնադրին՝ Հայաստանի Հանրապետությանը՝ ի դեմս ՀՀ կառավարության: Այդ պահանջը սահմանվում է [ԳՊՀ-ի կանոնադրության](#) 1-ին կետի երկրորդ ենթակետով: Ամբողջական տեսքով ԳՊՀ-ն հաշվետվողականության գործընթացը կանոնակարգում է «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության», «Կրթության», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների» մասին օրենքներով, ՀՀ կառավարության մի շարք որոշումներով, ինչպես նաև ԳՊՀ կանոնադրությամբ: Այն նպաստում է կառավարման բարելավմանը, որի արդյունքում արձանագրվում են ձեռքբերումները, տարանջատվում հիմնախնդիրները և մոնիտորինգի զարգացման միտումները:

Սահմանված հաշվետվության համար հիմք է հանդիսանում ԳՊՀ-ի հանրային կապերի կանոնակարգը [/հավելված 8ա1 և ԳՊՀ կանոնադրություն/:](#)

ԳՊՀ կառավարման բարձրագույն մարմինը ԳՊՀ Խորհուրդն է, որը, համաձայն ԳՊՀ կանոնադրության /գլուխ 3, կետ 15.3/, լսում և գնահատում է ԳՊՀ տարեկան գործունեության մասին ռեկտորի հաշվետվությունը, որով ապահովվում է հաշվետվողականության ընդհանուր համակարգի բնականոն աշխատանքը: Այն ներառում է Մանկավարժական բնագիտական, Մանկավարժական հումանիտար մասնագիտությունների, Պատմաիրավագիտական, Ճարտարագիտական և Տնտեսագիտության ֆակուլտետների, իսկ 2016թ. մարտի 17-ի գիտխորհրդի որոշմամբ վերակազմակերպված Հումանիտար և հասարակագիտական մասնագիտությունների, Բնագիտական մասնագիտությունների, Ճարտարագիտության և տնտեսագիտության ֆակուլտետների և մյուս ստորաբաժանումների տարեկան հաշվետվությունները:

Հաշվետվողականության իրականացումը կատարվում է ենթակարգային հետևյալ հաջորդականությամբ. յուրաքանչյուր միավոր իր գործունեության վերաբերյալ հաշվետվություն է

ներկայացնում ենթակարգային աստիճանով իրենից բարձր կառույցին՝ ֆակուլտետային ստորաբաժանումների հաշվետվություններն ամբողջական ներկայացվում է ֆակուլտետի տարեկան հաշվետվության ընթացքում, այս կերպ համալսարանական մյուս ստորաբաժանումները ևս իրենց ենթակա կառույցների հաշվետվություններն ամփոփ ներկայացնում են ռեկտորին, ռեկտորն էլ՝ ԳՊՀ խորհրդի տարեկան հաշվետվության նիստում:

Ֆակուլտետների հաշվետվությունների ներկայացման ժամանակացույցը կանոնակարգվում է ԳՊՀ ռեկտորի հրամանով, որը տրվում է յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբին: Այնուհետև կազմվում է հաշվետու ժողովների ժամանակացույց, որին համապատասխան հրավիրվում են ֆակուլտետների խորհուրդների նիստեր, որոնց ընթացքում ղեկանները ներկայացնում են իրենց տարեկան գործունեության վերաբերյալ հաշվետվությունները: Վերջնական արդյունքում ձևավորվում է ԳՊՀ հաշվետվությունը, որտեղ արտացոլվում են բոլոր գործունեության բնագավառները: Մասնավորապես ներկայացվում են մասնագիտությունները, ուսանողական և շրջանավարտների համակազմերը, պրոֆեսորադասախոսական անձնակազմը, գիտական և ուսումնամեթոդական հրապարակումները, սոցիալական ծրագրերի առկա վիճակը և զարգացման հեռանկարները, ֆինանսական ռեսուրսները, փորձուսուցումները, ֆինանսավորվող պայմանագրային թեմաները, կրթության որակն ու միջազգային համագործակցությունը և այլն:

Ռեկտորի հաշվետվության նիստի գումարման վերաբերյալ խորհրդի քարտուղարը տարբեր տեղեկատվական աղբյուրներով տարածում է խորհրդի նիստի օրակարգը և տեղեկացնում խորհրդի անդամներին: ԳՊՀ խորհրդի նիստը լուսաբանվում է տարբեր մեդիահարթակներով և տեղեկատվական միջոցներով՝ *ԳՊՀ պաշտոնական կայք*՝ <http://gorsu.am/news>,

ԳՊՀ ֆեյսբուքյան էջ՝ <https://www.facebook.com/%D4%B3%D5%B8%D6%80%D5%AB%D5%BD%D5%AB-%D5%BA%D5%A5%D5%BF%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%B0%D5%A1%D5%B4%D5%A1%D5%AC%D5%BD%D5%A1%D6%80%D5%A1%D5%B6Goris-State-University-345437562254225/?fref=ts>,

«Սյունյաց երկիր» պաշտոնական կայք՝ http://syuniacyerkir.am/news_view.php?post_id=15623, *«Սյունյաց երկիր» պաշտոնաթերթ*՝ [http://syuniacyerkir.am/pdfs/N_423%20\(05\)_1487252169.pdf](http://syuniacyerkir.am/pdfs/N_423%20(05)_1487252169.pdf):

Բոլոր ոլորտների ու հիմնախնդիրների վերաբերյալ հաշվետվությունները տպագրվում են տվյալ ուսումնական տարվա գործունեությունը ներկայացնող գրքույկում:

Բացի ԳՊՀ խորհրդին ներկայացվող հաշվետվություններից՝ ԳՊՀ-ն տարվա ընթացքում օրենքով սահմանված կարգով հաշվետվություններ է ներկայացնում ՀՀ Կրթության և գիտության նախարարությանը, Գիտության պետական կոմիտեին, Պետական ուսուցողական կոմիտեին, Վիճակագրական վարչությանն ու այլ պետական գերատեսչություններին:

Այսպիսով, ԳՊՀ-ում գործում է հաշվետվողականության որոշակի համակարգ՝ մեկ ընդհանուր ձևաչափով ու մեխանիզմներով:

Ընթացքի մեջ են շահակիցների առջև հաշվետվողականությունն ապահովող ընթացակարգի բարելավման աշխատանքները, շարունակվում են մշակվել նոր մեխանիզմներ, որոնք թույլ կտան առավել օբյեկտիվորեն գնահատելու յուրաքանչյուր ստորաբաժանման աշխատանքը:

ԶԱՓՈՐՈՇԻՉ Բ. ՄՈՒՀ-ն ապահովում է ընթացակարգերի, գործընթացների թափանցիկությունը և հասանելիությունը հասարակությանը:

Հիմքեր

ՄՈՒՀ-ի հաշվետվողականությունն ապահովող մեխանիզմները,

Հաշվետվությունները, զեկույցները, վերլուծությունները վերջին 5 տարվա ընթացքում,

Վերլուծել հասարակությանը հաշվետվողականությունն ապահովող մեխանիզմների արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

ԳՊՀ-ի ընթացակարգերի, կրթական գործընթացների, տեղեկատվական համակարգի թափանցիկության ու հասանելիության մեխանիզմներն ամրագրված են մի շարք իրավական ակտերում, մասնավորապես՝ «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքում (Հոդվածներ 4. 4., 6.7., 11. 5, 22. 5.), [ԳՊՀ 2011-2016 թթ. զարգացման ռազմավարական ծրագրում](#) /հիմնախնդիրներ 1, 2, 3, 4, 5, 6, 7/, ԳՊՀ-ի հանրային կապերի կանոնակարգում /6, 7,...12/ / [հավելված 8ա1](#)/ և մի շարք այլ նորմատիվ փաստաթղթերում («ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման անցկացման» կարգ, «Կրեդիտային համակարգով առկա ուսուցմամբ ուսումնական գործընթացի կազմակերպման կարգ» և այլն):

2013 թվականին ԳՊՀ-ում ստեղծվեց Հասարակայնության հետ կապերի և լրատվության բաժինը, որի առաքելությունն է Գորիսի պետական համալսարանի պատշաճ ներկայացումը և լուսաբանումը, համալսարանի վերաբերյալ հավաստի տեղեկատվության մատչելի ապահովումը, հանրության պահանջներին համապատասխանելու համար հանրային կարծիքի ուսումնասիրությունը, համալսարանականների պատշաճ ներկայացումը լայն հասարակությանը, հետադարձ կապի կայուն մեխանիզմների հաստատումը, ներքին ու արտաքին շահակիցների համար բուհի գործունեության թափանցիկությունը, ինչպես նաև ներքին ու արտաքին «Փի Ար»-ի արդյունավետ իրականացումը/ [ԳՊՀ կանոնադրություն](#)/:

ՄՈՒՀ-ի գործունեության թափանցիկությունն ու հասանելիությունն ապահովող տեղեկատվական միջոցներից են.

Ավանդական միջոցներ՝

- «Գորիսի պետական համալսարան», 2016թ. հոկտեմբերից՝ «Լրատու Գորիսի պետական համալսարանի» պաշտոնաթերթ <http://gorsu.am/%D5%BA%D5%A1%D5%B7%D5%BF%D5%B8%D5%B6%D5%A1%D5%A9%D5%A5%D6%80%D5%A9/>
- ՋԼՄ-ներ, մեդիա հարթակներ, հանդեսներ, մարզային թերթեր՝ մասնավորապես «ARMENIAN VIP BUSINESS», «Սյունյաց երկիր», «Շառավիղ» երիտասարդ լրագրողների ակումբ, <https://www.youtube.com/watch?v=tE6XLGFpRbI>, <https://www.youtube.com/watch?v=TH6g3v7QXAM>, TVADSTUDIO <https://www.youtube.com/watch?v=-T92dQitJaA>, Գորիսի մամուլի ակումբ <https://www.facebook.com/syunikinfotun/>, «Իրավունքների Տեղեկատվական Կենտրոն» ՀԿ <https://www.facebook.com/itekngo/>
- Բուհի շենքային տարբեր մասերում, ֆակուլտետների տեսանելի հատվածներում առկա հայտարարությունների, տեղեկատվության հաղորդման ցուցատախտակները,
- ԳՊՀ-ում տեղի ունեցող գործընթացները լուսաբանող բազմաթիվ բուկլետներն ու ալբոմները, տեսաֆիլմերը:

Էլեկտրոնային միջոցներ՝ ԳՊՀ-ի պաշտոնական կայք՝ <http://gorsu.am/>, ԳՊՀ-ի ֆեյսբուքյան էջ՝ <https://www.facebook.com/%D4%B3%D5%B8%D6%80%D5%AB%D5%BD%D5%AB-%D5%BA%D5%A5%D5%BF%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%B0%D5%A1%D5%B4%D5%A1%D5%AC%D5%BD%D5%A1%D6%80%D5%A1%D5%B6Goris-State-University-345437562254225/>:

2013-2017թթ. հասարակության հետ կապերի և լրատվության վարչությունը ԳՊՀ-ն գովազդող միջոցառումներ է ձեռնարկել, որոնց արդյունքում մեծացել է բուհի դերը տարածաշրջանում: Գործունեության նորացումը տարվել է հիմնականում համացանցային ռեսուրսների և տեղեկատվական այլ միջոցների օգտագործմամբ: Համացանցային ռեսուրսների անընդհատ հարստացումը խիստ արդիական է գործունեության և ընթացակարգերի թափանցիկության ու հասանելիության համար:

ԳՊՀ-ն տարածաշրջանում ամենամեծ բարձրագույն ուսումնական հաստատությունն է: Ուսումնական ամեն տարվա ընթացքում լուսաբանվում են 100-ից ավելի աշխատանքներ: ԳՊՀ-ի գործունեությունն արտացոլող հիմնական հաշվետվությունները պարտադիր հրապարակվում են: Տարվա ընթացքում սեփական և այլ լրատվամիջոցների կողմից մի քանի անգամ հարցազրույց է անցկացվում ԳՊՀ-ի ղեկավարի հետ:

ԳՊՀ-ի կայքում տեղադրվում են ոչ միայն հաշվետվությունները, այլև համապատասխան կանոնադրություններն ու կանոնակարգերը, ԳՊՀ Խորհրդի, Գիտական խորհրդի նիստերի մասին հաղորդումները, կրթական փաստաթղթերը (ծրագրեր, ուղեցույցներ, կարգեր և այլն)՝ ապահովելու ուսանողների և համապատասխան թիրախային խմբի՝ շահառուների համար նշված փաստաթղթերի հասանելիությունն ու մատչելիությունը: ԳՊՀ-ի Խորհրդի և Գիտական խորհրդի բոլոր նիստերի մասին հաղորդումները հրապարակվել և հրապարակվում են «Գործիսի պետական համալսարան», այժմ՝ «Լրատու Գործիսի պետական համալսարանի» պաշտոնաթերթերում:

Ստորև ներկայացնում ենք 2017թ.-ին համալսարանի տարբեր բաժինների գործունեության, ինչպես նաև ՄՈՒՀ-ում իրականացվող գործընթացների թափանցիկության ու հասանելիության, հետադարձ կապի արդյունավետ գործունեության գնահատման նպատակով ԳՊՀ ՈԱԿ-ի կողմից (վերջին թարմացված տվյալներով) համալսարանականների՝ համալսարանի աշխատակիցների, ուսանողների և ԳՊՀ ՀԿԼ-ի կողմից հասարակության տարբեր ոլորտների ներկայացուցիչների շրջանում իրականացված անանուն հարցումների արդյունքները(տե'ս Հարցաթերթ 1, 2):

2012թ.-ից ԳՊՀ-ում գործում էր «Գործիսի պետական համալսարան» ամսաթերթը, որը լուսաբանում էր բուհի կրթական, գիտական, հասարակական ու մշակութային գործունեությունը: Այն հեղինակություն էր վայելում ոչ միայն համալսարանի ներսում, այլև շահագրգիռ այլ կազմակերպություններում (թերթն առաքվում է Սյունիքի մարզի դպրոցներ, պետական գերատեսչություններ և այլն):

Տեղեկատվության ապահովման կարևոր միջոցառումներ են նաև ԳՊՀ-ի պրոֆեսորադասախոսական անձնակազմի այցելությունները մարզի դպրոցներ: Տարվա մեջ պարբերաբար կրկնվող այցելությունները նպաստում են համալսարանի դերի բարձրացմանը: Տեղեկատվության թափանցիկության ու հասանելիության ապահովման անհրաժեշտ միջոցառում է ԳՊՀ-ի կողմից հետևողականորեն իրականացվող հակակոռուպցիոն ձեռնարկումները: «Կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի համալիր միջոցառումների ծրագիրը» իր մեջ պարունակում է մի շարք դրույթներ, որոնք միտված են նպաստելու թափանցիկության և հրապարակայնության ապահովման գործընթացին: Հասարակական կազմակերպությունների հետ պարբերաբար սեմինար-հարցազրույցներ ու քննարկումներ են կատարվում կոռուպցիոն երևույթների վերաբերյալ:

Բուհում մեծ ուշադրություն է դարձվում նաև տեղեկատվության ազատության խնդրին: ԳՊՀ-ի հասարակության հետ կապերի և լրատվության բաժինը լրագրողների և լրատվական կառույցների՝ Գործիսի մամուլի ակումբի, Մարդու իրավունքների տեղեկատվական կենտրոնի, «Սյունյաց երկիր» պաշտոնաթերթի խմբագրակազմի և մյուսների հետ սերտ համագործակցություն է իրականացնում՝ միտված ԳՊՀ-ի գործունեության թափանցիկությանը, ուսանողների մասնագիտական գործունեությանը համակողմանի աջակցություն ցուցաբերելու քաղաքականությանը: Նույն պրոֆեսիոնալ մոտեցումն է ցուցաբերվում նաև քաղաքացիների

դիմում-նամակների պատասխաններին: ԳՊՀ-ի PR աշխատանքների վերաբերյալ Հասարակայնության հետ կապերի և լրատվության բաժինը յուրաքանչյուր ուսումնական տարի հաշվետվություն է ներկայացնում ԳՊՀ-ի ռեկտորին:

ԳՊՀ-ի կառուցվածքային ստորաբաժանումները, կախված իրենց գործունեության բնույթից և խնդիրներից, արտաքին շփումների և իրականացվող աշխատանքների հանրային հետաքրքրության աստիճանից, առնչվում են ԳՊՀ-ի հանրային կապերի աշխատանքներին: Կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները պատասխանատվություն են կրում իրենց կողմից ղեկավարած ստորաբաժանման հանրային կապերին առնչվող աշխատանքների կազմակերպման համար (ԳՊՀ-ի հանրային կապերի հայեցակարգ, կետ 10), որը դեռևս ցանկալի արդյունավետությամբ չի իրականացվում համապատասխան ստորաբաժանումների կողմից: Այդ որոշմամբ և այդ ինստիտուտի կայացմամբ հնարավոր կլինի ավելի համակարգված մոտեցում ցուցաբերել հասարակության հետ կապերի աշխատանքներին: ԳՊՀ-ի հանրային կապերի հայեցակարգով սահմանված աշխատանքային ուղղություններից է նաև ԳՊՀ-ի կայքի նորացման աշխատանքները, որոնք մեկնարկել են 2013 թվականի հունվարից, իսկ արդեն 2017թ.-ի հունվարից ԳՊՀ-ի կայքը՝ www.gorsu.am-ը, հանրությանն է ներկայացվել ամբողջովին նորացված ու արդիականացված՝ նոր չափանիշներին համապատասխան կառուցվածքային լուծումներով ու ինֆորմացիոն-բովանդակային համապատասխան ռեսուրսներով, որոնք դեռևս թարմացվում են՝ առկա տեղեկատվության համալրման, ամբողջացման, եռալեզու թարգմանությունների սակավության և նման այլ խնդիրների պատճառով:

Չափորոշիչ գ. ՄՈՒՀ-ում գործում են հասարակայնության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի կայուն մեխանիզմներ:

Հիմքեր

Հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի հաստատման քաղաքականությունը և ընթացակարգերը,

Հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի գործիքները

Ամփոփված արդյունքները և վերլուծությունները:

Վերլուծել ՄՈՒՀ-ում գործող հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի կայուն մեխանիզմների արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

ԳՊՀ-ի ռազմավարական կանոնադրային խնդիրներից է հասարակայնության հետ կապերի զարգացումը և հանրային ծրագրերում համալսարանի ակտիվ ներգրավումը ([«ԳՊՀ-ի զարգացման ռազմավարական ծրագիր 2011-2016թթ.»](#)) /Մջակցող նպատակներ 1...9/

Որպես հասարակայնության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի ապահովման արդյունավետ միջոց՝ նախ և առաջ կիրառվում են էլեկտրոնային միջոցները: Կայքի այցելուները իրենց հուզող հարցերի կամ լրացուցիչ տեղեկությունների համար հնարավորություն ունեն հարցեր ուղղելու համալսարանի տարբեր վարչական և գիտակրթական մարմիններին կայքում գործող «Դիմե՛ք մեզ հարցերով /մեկնաբանությունների էջ/», այժմ էլ՝ «Հետադարձ կապ» բաժնի «Ուղարկել հաղորդագրություն» էլ.հատվածը: Հարցերն օպերատիվ կերպով ընթերցվում են, հասցեագրվում համապատասխան ստորաբաժանման ղեկավարին, որի պատասխանն էլ տեղադրվում է կայքում: ԳՊՀ-ի պաշտոնական էլ. փոստին (gorissu@mail.ru), ԳՊՀ պաշտոնական կայքի էլ. փոստին (info@gorsu.am), ԳՊՀ-ի ֆեյսբուքյան էջին պարբերաբար *առաքվում են* նամակներ, որոնք արագ արձագանք են գտնում:

Facebook-ում ԳՊՀ-ն ունի իր պաշտոնական էջը: 2013 թ. հունվարի տվյալներով էջն ունեցել է 500 հետևորդ, 2015-ին՝ 1195, 2016-ին՝ 1615, իսկ արդեն 2017թ.-ի ապրիլ ամսվա տվյալներով՝

1716 հետևորդ ([հավելված 8գ2](#)): Այդ էջի միջոցով ԳՊՀ-ի ուսանողներն ու աշխատակիցները, դիմորդներն ու շրջանավարտները, ինչպես նաև լայն հասարակայնության ներկայացուցիչները մեծ թվով հարցեր են ուղղում, ստանում պատասխաններ, թողնում կարծիքներ և գնահատականներ համալսարանի գործունեության տարբեր ոլորտների վերաբերյալ:

ԳՊՀ-ում հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի գործիքներից են նաև հասարակական կարծիքի ուսումնասիրման տարբեր հարցումները: 2017թ.-ի մարտին հարցումներ են իրականացվել ինչպես համալսարանական, այնպես էլ հասարակական լայն շերտերի ներկայացուցիչների շրջանում:

ԳՊՀ ուսանողների շրջանում հարցումների վիճակագրությունը. ([հավելված 8գ1-Հարցաթերթիկ 1](#))

«Գորիսի պետական համալսարան» ՊՈԱԿ-ի հասարակայնության հետ կապերի և լրատվության բաժնի կողմից հասարակության տարբեր շերտերի իրազեկման ու ներկայացվող տեղեկատվության գործընթացների գնահատում.

Գերազանց- 26.25%

Լավ- 52.5%

Բավարար- 21.25%:

Հասարակայնության հետ կապերի և լրատվության բաժնի կողմից իրականացվող աշխատանքների թափանցիկության, տեղեկատվության մատչելիության ու անկողմնակալության գնահատումը.

Գերազանց- 20%

Լավ- 62.5%

Բավարար- 17.5%:

«Լրատու Գորիսի պետական համալսարանի» պաշտոնաթերթի կառուցվածքային և բովանդակային ընդհանուր հայեցակարգի, համալսարանական գործունեության իրազեկման մակարդակի, ներկայացվող նյութերի նպատակային համապատասխանության գնահատում.

Գերազանց- 28.75%

Լավ- 57.5%

Բավարար- 13.75%:

Նորացված և արդիականացված ԳՊՀ պաշտոնական կայքի՝ www.gorsu.am-ի (կայքը դեռևս թարմացվում է) գործունեության գնահատում.

Գերազանց- 42.5%

Լավ- 43.75%

Բավարար- 13.75%:

Գնահատել հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի հաստատման մեխանիզմների գործունեությունը.

Գերազանց- 17.5%

Լավ- 56.25%

Բավարար- 26.25%:

Մեղիա, ՀԿ սեկտորի ներկայացուցիչների, հասարակական գործունեություն իրականացնող անդամների հարցումների արդյունքներն են ([Հավելված 8գ1-Հարցաթերթիկ 2](#)).

«Գորիսի պետական համալսարան» ՊՈԱԿ-ի հասարակայնության հետ կապերի և լրատվության բաժնի կողմից հասարակության տարբեր շերտերի իրազեկման ու ներկայացվող տեղեկատվության գործընթացների գնահատում.

Գերազանց- 38.4%

Լավ- 53.8%

Բավարար- 7.6%:

Հասարակայնության հետ կապերի և լրատվության բաժնի կողմից իրականացվող աշխատանքների թափանցիկության, տեղեկատվության մատչելիության ու անկողմնակալության գնահատումը.

Գերազանց- 30.76%

Լավ- 46.1%

Բավարար- 23.14%:

«Լրատու Գործիսի պետական համալսարանի» պաշտոնաթերթի կառուցվածքային և բովանդակային ընդհանուր կոնցեպցիայի, համալսարանական գործունեության իրազեկման մակարդակի, ներկայացվող նյութերի նպատակային համապատասխանության գնահատում.

Գերազանց- 30.76 %

Լավ- 53.8 %

Բավարար- 7.69%:

Այլ պատասխան (ծանոթ չեմ) - 7.69%:

Նորացված և արդիականացված ԳՊՀ պաշտոնական կայքի՝ www.gorsu.am-ի (կայքը դեռևս թարմացվում է) գործունեության գնահատում.

Գերազանց- 15.38%

Լավ- 46.1%

Բավարար- 23%

Այլ պատասխան (ծանոթ չեմ) - 15.38%:

Գնահատել հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի հաստատման մեխանիզմների գործունեությունը.

Գերազանց- 30.76%

Լավ- 46.1%

Բավարար- 23.14%:

Գնահատել համալսարան-հասարակություն համագործակցությունը, նշեք խնդրեմ առաջարկություններ կամ նոր մեխանիզմներ առկա համագործակցությունը բարելավելու և ամրապնդելու համար.

Գերազանց- 15.3%

Լավ- 61.5%

Բավարար- 23.07%:

Առաջարկություններ՝

- Առավել թափանցիկ գործունեություն իրականացնել, ակտիվ համագործակցել քաղաքում գործող ՀԿ-ների հետ:
- Չնայած պաշտոնաթերթը բարձրորակ է իր բովանդակային և կառուցվածքային ընդհանուր հայեցակարգով, թերթի տարածումն իրականացվում է ոչ լիարժեք, այն հասանելի չէ հանրության տարբեր շերտերին: Անհրաժեշտ է աշխատանքներ իրականացնել այդ ուղղությամբ:
- Հաճախակի թարմացնել պաշտոնական կայքի օտարալեզու գրառումները: ([հավելված 8գ1-Հարցաթերթ2](#), Առաջարկություններ և նոր մեխանիզմներ):

Հասարակական կարծիքի ուսումնասիրման, ԳՊՀ-ում առկա տարբեր հիմնախնդիրների բացահայտման ու համապատասխան առաջարկություններ մշակելու (ուսանող-դասախոս փոխհարաբերություններ, ԳՊՀ-ի կրթական ոլորտի առկա խնդիրներ, մամուլում ԳՊՀ-ի մասին քննադատական նյութերի վերլուծություններ, ԳՊՀ-ի արտաքին և ներքին իմիջին վերաբերող հետազոտություններ և այլն) համար առկա են գործիք-միջոցներ՝ ԳՊՀ պաշտոնական կայքի «Հետադարձ կապ» բաժնի «Ուղարկել հաղորդագրություն» էլ.հատվածը, «Նամակ խմբագրությանը» փակ արկղը, որտեղ կարող են գրել նաև անանուն նամակներ, էլ. հասցեներ և այլն:

Չնայած հետադարձ կապի գործիքների կիրառման անհրաժեշտությունն ու կարևորությունն ամրագրված են ԳՊՀ-ի հանրային կապերի հայեցակարգում և մի շարք այլ փաստաթղթերում,

այնուամենայնիվ, հարկ է նշել, որ հասարակության հետ կապերի ոլորտում հետադարձ կապի գործիքների կիրառումը և այդ մեխանիզմների կարևորումը աստիճանաբար է զարգացել և դեռևս ունի կայացման խնդիր: ԳՊՀ հասարակայնության հետ կապերի և լրատվության բաժնի կողմից իրականացվում է պարբերական մամուլի և ինտերնետային պարբերականների մոնիթորինգ, առանձնացվում են ԳՊՀ-ին վերաբերող բոլոր նյութերը, դրանք վերլուծվում և ուղարկվում են ռեկտորատի անդամներին: Այդ գործընթացի արդյունքում ԳՊՀ-ին վերաբերող ցանկացած հրապարակում չի վրիպում ԳՊՀ-ի ղեկավարության ուշադրությունից, անհրաժեշտության դեպքում լինում են համապատասխան արձագանքներ, իսկ մոնիթորինգի վերլուծությունը հիմք է հանդիսանում տարվող քաղաքականության գնահատման և վերանայման համար:

ՉԱՓՈՐՈՇԻՉ դ. ՄՈՒՀ-ում գործում են հասարակությանը գիտելիքի (արժեքների) փոխանցման մեխանիզմներ:

Հիմքեր

Հաստատության կողմից լրացուցիչ կրթական և խորհրդատվական ծառայությունների իրականացման քաղաքականությունն ու ընթացակարգերը [/հավելված 4ա1 և 4ա1.1/](#),

Հասարակությանը մատուցվող լրացուցիչ կրթական և խորհրդատվական ծառայությունների ներքին և արտաքին գնահատման գործիքները,

Հասարակությանը գիտելիքի (արժեքների) փոխանցման հիմնական գործառնությունների ներքին գնահատման գործընթացները և հիմքերը,

Վերլուծել հաստատության կողմից լրացուցիչ կրթական և խորհրդատվական ծառայությունների իրականացման արդյունավետությունը և արդիականությունը: Հիմնավորել մոտեցումը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

[ԳՊՀ կանոնադրության](#) և [զարգացման ռազմավարական ծրագրում](#) /ԳՊՀ հայեցակարգ 2011-2016թթ., խնդիրները, կետ 9/ հիմնական խնդիրներից են համարվում հասարակության շրջանում գիտելիքների տարածումը, նրա կրթական և գիտամշակութային մակարդակի բարձրացումը, որոնց նպատակն է աջակցել հասարակության մտավոր, կրթական և մշակութային առաջընթացին: Միաժամանակ ԳՊՀ-ն իր ուսանողի առջև ունի ստանձնած պարտավորություն՝ պատրաստելու բարձրորակ մասնագետ, կրթելու ու դաստիարակելու հայրենասիրության, ազգային ու համամարդկային արժեքների ոգով քաղաքացիներ, ձևավորելու պատշաճ վարք ու վարվելակերպ: Սակայն ԳՊՀ-ի գործունեությունը չի սահմանափակվում միայն գիտելիքների փոխանցմամբ ու կրթական ծառայությունների մատուցմամբ: ԳՊՀ-ն, իր շահակիցների՝ հասարակության լայն շրջանների ներկայացուցիչների /դպրոցներ, միջնակարգ մասնագիտական հաստատություններ, արտադրական ձեռնարկություններ և այլն/ առջև կրելով հասարակական պատասխանատվություն, մասնագիտական կողմնորոշման շրջանակներում աշխատանքներ է իրականացնում՝ մատուցելով խորհրդատվական ծառայություններ, կազմակերպելով դասընթացներ ինչպես համայնքի ավագ դպրոցներում, այնպես էլ համայնքապատկան գյուղերի ավարտական դասարանների աշակերտների շրջանում:[/հավելված 4ա1, 4ա1.1, http://gorsu.am/%D%D5%BA%D5%A1%D5%B7%D5%BF%D5%B8%D5%B6%D5%A1%D5%A9%D5%A5%D6%80%D5%A9/](#)):

ՀՀ պետական բյուջեի միջոցներով ֆինանսավորվող ՀՀ կրթության և գիտության պետական կոմիտեի հայտարարած «Գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծրագրի շրջանակներում ԳՊՀ-ում 2010թ.-ից գործում է «Մյունիքի հայագիտական հետազոտությունների կենտրոն» <http://www.sarc.am/>, իսկ 2017թ.-ից՝ «Մյունիքի հոգևոր և նյութական ժառանգությունը» <http://gorsu.am/մյունիքի-նյութական-և-հոգևոր-ժառանգություն/> գիտական ծրագիրը: Գիտական այս ծրագրի շրջանակում ձևավորված գիտահետազոտական թիմի գործունեությունը միտված է ազգային ինքնության պահպանմանը,

մի շարք դեռևս չուսումնասիրված թեմաների ուսումնասիրմանը, ազգապահպան հիմնախնդիրների վերհանմանն ու լուծմանը: Ծրագրի շրջանակներում հրապարակված և հրատարակված բազմաթիվ գիտական նյութերը, իրականացված արժեքավոր ուսումնասիրությունները, դասընթացներն ու հանդիպում-քննարկումները ԳՊՀ-ում իրականացվող գիտելիքի փոխանցման կարևորագույն գործընթացներից կամ մեխանիզմներից են:

Որպես մասնագիտական ուսումնական հաստատություն՝ ԳՊՀ-ն, ունենալով ակտիվ քաղաքացիական դիրքորոշում, հաճախ է հանդես գալիս քաղաքացիական նախաձեռնությամբ և մասնակցում հասարակական տարբեր շարժումների:

«Դավիթբեկյան ուխտեր» ՀԿ-ի և Գորիսի պետական համալսարանի ուսանողական խորհրդի նախաձեռնությամբ իրականացվեց «Հակաաղանդավոր շարժում Գորիսում» քաղաքացիական շարժումը, որին մասնակցեցին ինչպես Գորիսի ավագ դպրոցների աշակերտները, այնպես էլ Գորիսի ակտիվ երիտասարդները: Ջինիշյան հիշատակի հիմնադրամի և ԳՊՀ ուսանողական նախաձեռնող խմբի նախաձեռնությամբ իրականացվել են մեծաքանակ ինչպես քաղաքացիական, այնպես էլ ներհամալսարանական միջոցառումներ («Համայնքային ծառատունկ» նախաձեռնությունը, Ազգային պարերի ուսուցում համալսարանում, որի նպատակն է ազգային արժեքների պահպանումը, ավանդումն ու տարածումը ինչպես երիտասարդության, այնպես էլ ավագ սերնդի շրջանում, «Առաջին կանգառներ» նախաձեռնության շրջանակում Գորիսում տեղադրվեցին բնակիչների կողմից սպասված կանգառները, որոնց վրա պատկերված Գորիսի քարտեզը՝ տեսարժան վայրերով, հրաշալի ուղենիշ է տեղաբնակների, առավել ևս զբոսաշրջիկների համար: «Լուսաբեր» կամավորական խմբակի ներկայացուցիչները «Մի ավ օգնություն» անունը կրող օրացույցերի վաճառք կազմակերպեցին, որի ողջ հասույթը տրամադրվեց ազատամարտիկների ընտանիքներին /հղումը՝ <https://www.youtube.com/user/eridasardner/>), որոնց հիմքում երիտասարդ սերնդի դաստիարակության, ձևավորման խնդիրն է, սերունդ, որը հետևողականորեն կիրառործի հայրենիքի, տարածաշրջանի ու սեփական համայնքի առաջընթացին ու զարգացմանը միտված նախաձեռնություններ ու ծրագրեր:

Զգալի է տարածաշրջանում ԳՊՀ-ի դերակատարությունը ազգային արժեքների ճանաչման, դրանց պահպանմանն ուղղված աշխատանքների ու ավանդման գործընթացներում: Այսուհանդերձ, լրացուցիչ կրթության և խորհրդատվական ծառայությունների իրականացման, դրանց ներքին ու արտաքին գնահատման ոլորտում ԳՊՀ-ի անելիքները տեսանելի են, ուստի հասարակությանը մատուցվող լրացուցիչ կրթական և խորհրդատվական ծառայությունների փոխանցման մեխանիզմները վերանայվում ու բարելավվում են:

Չափանիշ 8-ի վերաբերյալ ներկայացնել վերջին 5 տարվա SWOT վերլուծություն:

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
<p>1. ԳՊՀ-ում գործում են հաշվետվողականության համապատասխան մեխանիզմներ և մեկ ընդհանուր ձևաչափ:</p> <p>2. Առկա է համալսարանի գործունեության թափանցիկությունն առավելագույնս ապահովելու կայք՝ մատչելի և մշտապես թարմացվող տեղեկատվությամբ:</p> <p>3. ԳՊՀ ՀԿԼ բաժինը համագործակցում է տեղային ու մարզային լրատվամիջոցների հետ:</p>	<p>1. Հասարակական կարծիքի ուսումնասիրման մեխանիզմների բացակայություն մարզային ու հանրապետական մակարդակներով:</p> <p>2. ԳՊՀ-ի կայքը ենթակա է վերաձևավորման /աշխատանքները մեկնարկել են 2013 թվականի հունվար ամսին և միայն 2017թ.-ի հունվարին բարելավվել, այժմ էլ թարմացվում են/:</p>

<p>4. Բաժինն ակտիվորեն մասնակցում է քաղաքացիական նախաձեռնությունների և հասարակական շարժումների կազմակերպման, իրականացման գործընթացներին:</p> <p>5. Համալսարանի սեփական գովազդային միջոցների առկայություն՝ պաշտոնական կայք, ներկայացվածություն սոցցանցերում, տեղեկատվական բուկլետներ, եռամսյա պաշտոնաթերթ («ԳՊՀ Լրատու»):</p>	<p>3. Բարելավել, վերանայել շրջանավարտների աշխատանքի ուղղորդման և մասնագիտական կողմնորոշման աշխատանքները:</p> <p>4. ԳՊՀ-ի հասարակայնության հետ կապերի և լրատվության բաժնի կողմից իրականացվող մոնիթորինգի հաճախականության բացակայություն:</p> <p>5. Նպատակաուղղել լրատվական, գովազդային միջոցները համալսարանի դրական իմիջի պահպանմանն ու ամրապնդմանը, հասարակական վարկանիշի և տեսանելիության բարձրացմանը:</p>
<p align="center">Հնարավորություններ</p>	<p align="center">Վտանգներ</p>
<p>1. Հասարակության հետ կապերի ամրապնդում և շահակիցների հետ համագործակցության զարգացում:</p> <p>2. Կայքի և տեղակատվական այլ միջոցների դինամիկ զարգացումը կարող է նպաստել հետադարձ կապի և հաշվետվողականության որակի բարձրացմանը:</p>	<p>1. Տեղեկատվության տարածման և հետադարձ կապի ձևերի բազմազանեցում սոցիալական ցանցերի, էլեկտրոնային ժամանակակից ռեսուրսների ավելի ինտենսիվ օգտագործմամբ իրականացման խնդրում նյութատեխնիկական և ֆինանսական միջոցների և կադրերի բացակայություն:</p> <p>2. Տեղեկատվական մեխանիզմների թարմացում ու զարգացում, հանրամատչելիություն:</p>

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԳԱՅՆԱՅՈՒՄԸ

ԶԱՓԱՆԻՇ: Արտաքին կապերի միջոցով ՄՈՒՀ-ը խրախուսում է փորձի փոխանակումը և զարգացումը՝ նպաստելով հաստատության միջազգայնացմանը:

ԶԱՓՈՂՈՇԻՉ ա. Փորձի փոխանակմանը, զարգացմանը և միջազգայնացմանը նպաստող միջավայր ստեղծելու նպատակով ՄՈՒՀ-ում գործում է արտաքին կապերի հաստատումը խրախուսող քաղաքականություն ու ընթացակարգեր:

Հիմքեր

Արտաքին կապերի և միջազգայնացման ռազմավարությունը /[ԳՊՀ կանոնադրություն](#) , [ԳՊՀ ՈՕ 2011-2016թթ.](#) /

Արտաքին կապերին և միջազգայնացմանը նպաստող քաղաքականությունը, ընթացակարգերը և մեխանիզմները /[ԳՊՀ ՈՕ 2011-2016թթ.](#), [հավելված 2ա3.2/](#)

Արտաքին կապերի և միջազգայնացման տարեկան գործողությունների ծրագրերը (վերջին 3 տարվա համար) /[հավելված 9ա1/](#)

Համագործակցության պայմանագրերի օրինակներ՝ վերջին 3 տարիների համար, որտեղ նշված են ժամանակացույցով սահմանված գործողություններ, [հավելված 9ա1/](#)

Արտաքին կապերի և միջազգայնացման տարեկան հաշվետվությունները (վերջին 3 տարվա համար) / [ԳՊՀ տարեկան հաշվետվություններ](#) /

Վերլուծել փորձի փոխանակմանը, զարգացմանը և միջազգայնացմանը նպաստող քաղաքականության ու ընթացակարգերի արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը

/կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

ԳՊՀ-ում միջազգայնացմանը նպաստող գործընթացները շարունակում են մնալ որպես համալսարանի հիմնական նախապատվություն՝ մեծապես պայմանավորելով համալսարանի արտաքին մրցունակությունն ու նրա շրջանավարտների ծառայունակությունը: Համալսարանն ընթանում է Եվրոպական բարձրագույն կրթական տարածքում ինտեգրացման ուղիով, ուստի մեզ համար ուղենիշ են կրթության որակի եվրոպական չափանիշները և արժևորման մեխանիզմները:

ԳՊՀ-ի միջազգային գործունեությանն ուղղված գործընթացները բխում են համալսարանի կանոնադրության համապատասխան դրույթներից և ՌԾ-ի հետևյալ հիմնական դրույթներից՝ միջազգայնացնել համալսարանի գիտությունը և տեխնոլոգիական մշակումները, նպաստել ստորաբաժանումների մասնակցությանը միջազգային ծրագրերում, կազմակերպել միջազգային գիտաժողովներ, սեմինարներ և համատեղ նախագծեր՝ նոր տեխնոլոգիաների և դրանց կիրառությունների ուղղությամբ, զարգացնել տնտեսական միջավայրի հետ համալսարանի փոխազդեցությունը, բազմացնել և ապակենտրոնացնել արտաքին կապերը, զարգացնել նորաստեղծ շուկայական տնտեսության պայմաններում տնտեսական միջավայրի ակտիվ ներգործությունը համալսարանի կրթական և հետազոտական ծրագրերի վրա, ապահովել հակադարձ կապը մասնագետների որակի և պահանջարկի միջև:

Ռազմավարական առումով կարևոր է ապակենտրոնացնել համալսարանի արտաքին իմիջի ձևավորման ուղղությամբ իրականացվող աշխատանքները՝

1. Ընդլայնել և ամրապնդել գործընկերային հարաբերությունները համալսարանի պատվիրատու գործարար և արտադրական կառույցների հետ:
2. Զարգացնել համալսարանի կադրային առաջարկի, խորհրդատվական, հետազոտական և շարունակական ուսուցման ծառայությունների մարքեթինգը:
2. Աջակցել և կոորդինացնել համալսարանի առանձին ստորաբաժանումների, խմբերի և առանձին դասախոս-գիտնականների ջանքերն այլ կազմակերպությունների և համայնքների հետ գործակցային կապերի ձևավորման ուղղությամբ՝ ինչպես կրթական, այնպես էլ հետազոտական համագործակցության նպատակներով:
3. Ձգտել համալսարանի դրական կերպարի ձևավորմանը և հասարակայնորեն տեսանելիությանը:
4. Ստեղծել համալսարանի հասարակական հարաբերությունների զարգացումն ուղղորդող մասնագիտացված կառույց:
5. Նպաստել համալսարանի ներգրավմանը տարածաշրջանային զարգացման ծրագրերում:
4. Ստեղծել համալսարանի միջազգային համագործակցության դաշտ, ապահովել նրա մասնակցությունը միջազգային կրթական և հետազոտական ծրագրերում:
5. Ստեղծել համալսարանի միջազգային գործունեության պլանավորման և կազմակերպման ինֆորմացիոն-խորհրդատվական ապահովմանն աջակցող կենտրոն:

Այդ ուղղությամբ կատարվել են հետևյալ աշխատանքները.

ԳՊՀ-ն ստեղծել է Միջազգային համագործակցության կենտրոն, որի սկզբունքները համընկնում են ԳՊՀ-ի կանոնադրության և ՌԾ-ում տեղ գտած նպատակներին: Կենտրոնը գործում է որակի ապահովման կառույցի հետ համատեղ, սակայն հստակ սահմանված են երկու ուղղություններով կատարվող աշխատանքները: Դրանք համակարգվում են ՄՀՈԱ կենտրոնի կանոնադրությամբ, որը հստակ սահմանում է կենտրոնի դերը, նպատակները, աշխատակազմի պարտականություններն ու իրավունքները: ՄՀՈԱ կենտրոնը, ելնելով իր իսկ կանոնադրությունից, իրականացնում է համալսարանի միջազգային գործունեությանն ուղղված շարունակական բարեփոխումներ, այդ թվում՝ բարձրագույն մանկավարժական

կրթության ոլորտում միջազգային շարժունակության խնդիրների լուծման ժամանակ փորձում է ապահովել լուծումներ, որոնք նպաստում են.

- Ուսանողների շարժունակության հսկողության և կարգավորման մշտադիտարկման մեխանիզմների ստեղծմանը,
- Դասախոսների և օժանդակ անձնակազմի շարժունակության հսկողության և կարգավորման մշտադիտարկման մեխանիզմների ստեղծմանը,
- Համալսարանի միջազգայնացմանն ուղղված բոլոր գործընթացների փաստաթղթավորմանը:

Սակայն հարկ է նշել, որ վերոնշյալ բարեփոխումները դեռևս շարունակական են և բավարար չեն լիովին ապահովելու համալսարանի միջազգայնացումը:

ՉՍՓՈՐՈՇԻՉ բ. ՄՈՒՀ-ի արտաքին կապերի և միջազգայնացման ապահովման ենթակառուցվածքը երաշխավորում է կանոնակարգված գործընթաց:

Հիմքեր

Արտաքին կապերի և միջազգայնացման համար պատասխանատու ենթակառուցվածքը և դրա գործառույթները / [հավելված 2ա3.2 ՄՀԿՈԱ բաժնի գործառույթները](#) /,

Ենթակառուցվածքի գործունեությունը կարգավորող ընթացակարգերը /[հավելված 2ա3.2/](#),

Ենթակառուցվածքի որակի ապահովման քաղաքականությունը և ընթացակարգերը

/[հավելված 2ա3.2/](#),

Ենթակառուցվածքի արդյունավետ գործունեության այլ հիմքեր և վերլուծություններ վերջին 3 տարիների կտրվածքով /[հավելված 4ա11/](#),

Վերլուծել ՄՈՒՀ-ի արտաքին կապերի և միջազգայնացման ապահովման ենթակառուցվածքի աշխատանքների արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

2011թվականին ԳՊՀ-ում ստեղծվեց ՄՀԿՈԱ կառույցը, ինչի արդյունքում մշակվեցին նոր ուղղություններ միջազգային համագործակցության ոլորտում և մի շարք առանցքային փաստաթղթեր /ՄՀԿՈԱ կանոնադրությունը և այլ համապատասխան կանոնակարգեր/:

ԳՊՀ ՄՀԿՈԱ բաժինն իրականացրել է մի շարք ռազմավարական նշանակության նախագծեր, որոնք միտված են եվրոպական փորձի փոխանակմանը, եվրոպական կրթական տարածքում շարժունության խթանմանը, համալսարան-գործատու համագործակցային միջավայրի բարելավմանը: Սակայն, ինչպես նշվեց, այդ գործընթացների համակարգվածությունն ու փաստաթղթավորումը դեռևս չի համապատասխանում ուղենիշ հանդիսացող եվրոպական չափորոշիչների մակարդակին, և համալսարանը լուրջ քայլեր է ձեռնարկում ստեղծելու համապատասխան միջավայր՝ առավել արդյունավետ իրագործելիության ապահովման նպատակով:

ՉՍՓՈՐՈՇԻՉ գ. ՄՈՒՀ-ն արդյունավետորեն համագործակցում է տեղական և միջազգային հաստատությունների և կառույցների հետ:

Հիմքեր

Արտաքին կապերի և միջազգայնացմանը վերաբերող բոլոր համաձայնագրերը /[հավելված 9ա1/](#),

Արտաքին կապերը և միջազգայնացումը արտացոլող այլ հիմքերը /[հավելված 9գ1/](#):

Ներկայացնել վերջին 3 տարիներին արտաքին կապերի և միջազգայնացման գործընթացներում հաստատության հիմնական նվաճումները, համաձայնագրերի չգործելու պատճառները: Վերլուծել ՄՈՒՀ-ի համագործակցության արդյունավետությունը: Հիմնավորել

մուտքումը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Վերջին 3 տարիների ընթացքում զգալիորեն բարելավվել է համալսարանի միջազգային գործունեության ոլորտը: Մի շարք կարևոր պայմանագրեր են կնքվել եվրոպական, ԱՊՀ և ազգային համալսարանների ու գիտահետազոտական ինստիտուտների հետ/[հավելված 9ա1](#)/:

2012թ.-ին համալսարանի ԵՄ ծրագրերը համալրվել է երկուսով՝ ԳՊՀ-ում դրանց թիվը հասցնելով 6-ի: Տեմպուս-ի Cap4Com «Համալսարան-ձեռնարկություն համագործակցության խթանումը Հայաստանում, Ուկրաինայում և Վրաստանում հմտությունների վրա հիմնված վերապատրաստումների նպատակով» ծրագրի շրջանակներում ԳՊՀ-ի դասախոսական և վարչական աշխատակազմի ներկայացուցիչները պարբերաբար մասնակցել են ձեռնարկությունների հետ համագործակցության առաջատար փորձ ունեցող այնպիսի համալսարաններում կազմակերպված վերապատրաստումներին, ինչպիսիք են՝ Անգլիայի Քովենթրի համալսարանը, Բելգիայի Լուվենի համալսարանը, Ֆրանսիայի Գրենոբլի ակադեմիան և Գերմանիայի Ալենի համալսարանը: Փորձի փոխանակման արդյունքում ԳՊՀ-ում ստեղծվեց համալսարան-ձեռնարկություն համագործակցության օղակ, որը փորձում է նոր հիմքերի վրա դնել վերոնշյալ համագործակցությունը և ստեղծել ձեռնարկատիրական բարենպաստ միջավայր՝ համալսարանի և Սյունիքի մարզի արդյունաբերական սեկտորի միջև: «ARARAT, 2012 – 2015» և «CAP4COM, 2011-2014» ծրագրերի շրջանակներում համալսարան-գործատու համագործակցության արդյունքում «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ կողմից վերանորոգվել և անհրաժեշտ գույքով ապահովվել է Էլեկտրոնիկայի և Էլեկտրաէներգետիկայի ամբիոնին կից գործող Էլեկտրաէներգետիկայի լաբորատորիան:

Տեմպուս-ի ԱՐԱՐԱՏ ծրագրի շրջանակներում հստակեցվել են ԳՊՀ-ի համալսարան-գործատու համագործակցության զարգացման կենտրոնի դերը և գործառույթները: Կենտրոնն ընդգրկում է այն կառույցները, որոնք պատասխանատու են գործատուների հետ բազմապրոֆիլ համագործակցությունների համար (ուսումնական վարչություն, ուսանողների կարիերայի աջակցման կենտրոն):

Տեմպուս-ի ASPIRE «Հատուկ կարիքներով մարդկանց հասանելիությունը հասարակությանը» նախագծի շրջանակներում անդրադարձ է կատարվել ներառական կրթության արդի հիմնախնդիրներին և դրանց հնարավոր լուծումներին: ԳՊՀ-ում ծրագրի աշխատակազմը դասախոսական կազմի հետ համատեղ մշակել են ներառական կրթության մոդուլներ, որոնց հիմքում Իռլանդիայի Լիմերիկի տեխնոլոգիական համալսարանի հարուստ փորձն է: Ուսումնական մոդուլները կներդրվեն 2016-2017 ուսումնական տարում մեկնարկող «Սոցիալական մանկավարժություն» և «Հատուկ մանկավարժություն» մասնագիտությունների ուսումնական պլանների մեջ: Ծրագրի արդյունքում ստեղծվել է լսարան՝ հատուկ կարիքներ ունեցող ուսանողների համար:

Տեմպուս-ի «ՄԱՀԱԹՄԱ» ծրագրի շրջանակներում ընթացիկ տարում ԳՊՀ-ում գործում է «Կրթության կառավարում» մագիստրոսական մասնագիտությունը: Ծրագրի շրջանակներում ուսանողներին հնարավորություն է ընձեռվել իրականացնել շարժունակություն գործընկեր համալսարաններում /[հավելված 9ա1](#)/:

ԳՊՀ-ի ուսանողները մասնակցել են Եվրամիության համագործակցության և շարժունության «Backis» և «Humeria» ծրագրերին:

2015թ.-ից ԳՊՀ-ն իրականացնում է հետևյալ ծրագրերը.

Erasmus+ Heritag (2015-2018) (Բարձրագույն կրթության միջառարկայական բարեփոխումներ զբոսաշրջության կառավարման և երկրատեղեկատվության ոլորտների ուսումնական կրթական ծրագիր) և Erasmus+ LNSS(2015-2017) (Գրադարանային ցանցի աջակցության ծառայություններ. Գրադարանների արդիականացում Հայաստանում, Մոլդովայում և Բելառուսում՝

գրադարանների անձնակազմի զարգացման և գրադարանային ծառայությունների բարեփոխումների միջոցով)/[հավելված ա1-Partnership Agreement PAARA/](#):

Վերոնշյալ ծրագրերով ԳՊՀ-ն համագործակցում է տեղական և միջազգային 36 գործընկեր կազմակերպությունների հետ:

ԳՊՀ-ն կոնսորցիումի անդամության և համագործակցության առաջարկ է ստացել Erasmus + “Introducing life long learning entrepreneurship education in Armenia” project (ENTR-ARM), Armenian Network for Strengthen Employability and Development of graduates' skills (ANSED) և Tuning of capacities for international dimension in academia/CINDIMAC ապագա ծրագրերի համար:

Արտաքին կապերի և միջազգայնացման գործընթացների շրջանակներում նախատեսվում է հայաստանյան բուհերի, ինչպես նաև ԱՊՀ բուհերի միջև համագործակցության պայմանագրերի կնքում:

ԳՊՀ-ի և մասնավորապես միջազգային համագործակցության բաժնի մասին օտար լեզուներով տեղեկատվական նյութերը հրապարակվում են ԳՊՀ պաշտոնական կայքում ([www. http://gorsu.am](http://www.gorsu.am)):

ՀԱՓՈՂՈՇԻՉ Պ. ՄՈՒՀ-ն ապահովում է ներքին շահակիցների օտար լեզվի իմացության անհրաժեշտ մակարդակ՝ միջազգայնացման արդյունավետությունը բարձրացնելու համար:

Հիմքեր

Ուսումնառողների և դասավանդողների օտար լեզուների մասնագիտական մակարդակի իմացությանը նպաստող մեխանիզմները

Աշխատակազմի համար նախատեսված օտար լեզվի դասընթացների ցանկը և ժամանակացույցը,

Օտար լեզուներով տեղեկատվական նյութերը,

Միջազգայնացումը խթանող այլ մեխանիզմներ,

ԳՊՀ-ում պարբերաբար կազմակերպվում են վերապատրաստման դասընթացներ՝ ներքին շահակիցների օտար լեզվի իմացության մակարդակը բարձրացնելու նպատակով: Արդեն քննարկման փուլում է «Պրոֆեսորադասախոսական և ուսումնասօժանդակ անձնակազմի որակավորման բարձրացման եվ վերապատրաստման կանոնակարգը», որը ներառում է նաև կրեդիտներ օտար լեզուներից: Նկատելի է և՛ ուսանողների, և՛ աշխատողների՝ օտար լեզվին տիրապետելու ձգտումը, քանի որ միջազգային ծրագրերում հիմնականում ընդգրկվում են օտար լեզուներին տիրապետողները:

Օտար լեզուների ուսուցման առարկայական կաբինետն ապահովված է բավարար քանակությամբ տեղեկատվական նյութերով:

Բարելավվել են նաև ուսանողների օտար լեզուների ուսումնասիրմանը նպաստող պայմանները՝ մասնավորապես նախկինում ուսումնական պլանով նախատեսված 4 կիսամյակի փոխարեն վերջին տարիներին օտար լեզվի ուսուցումը կատարվում է 6 կիսամյակում:

2016-2017 թ.-ին Erasmus+ LNSS (Գրադարանային ցանցի աջակցության ծառայություններ. Գրադարանների արդիականացում Հայաստանում, Մոլդովայում և Բելառուսում՝ գրադարանների անձնակազմի զարգացման և գրադարանային ծառայությունների բարեփոխումների միջոցով) ծրագրի շրջանակներում ԳՊՀ-ում կազմակերպել են անգլերենի տարբեր մակարդակների դասընթացներ 48 դասախոսների, վարչական և գրադարանի աշխատողների համար:

ԳՊՀ-ում օտար լեզվի իմացությունն ապահովելու համար ձեռնարկվում են համապատասխան միջոցառումներ, որոնք շարունակական բնույթ են կրելու:

Օտար լեզուներին տիրապետող դասավանդողների, վարչական աշխատողների թիվը և տոկոսը վերջին 3 տարիների համար						
Աշխատակիցներ	2013		2014		2015	
	Քանակ	%	Քանակ	%	Քանակ	%
Դասավանդող	94	85%	80	89	92	75
Վարչական աշխատող	17	56%	20	64	16	76
Օտար լեզուներին տիրապետող ուսանողների թիվը և տոկոսը վերջին 3 տարիների համար:						
Ուսանողներ	2013		2014		2015	
	Քանակ	%	Քանակ	%	Քանակ	%
Բակալավր	110	9%	910	43+40	631	46 +44
Մագիստրոս	27	18.2%				
Հետազոտող						
Օտարերկրյա ուսումնառողներին առաջարկվող օտար լեզուներով դասավանդվող դասընթացներ/ՄԿԾ-ներ և օտարերկրյա ուսանողների թիվն ըստ տարիների						
Դասընթացի կամ ՄԿԾ-ի անվանումը	2011	2012	2013	2014	2015	
Օտար լեզուներով դասավանդվող դասընթացներում/ՄԿԾ-ներում ներգրավված ուսանողների թիվը ըստ երկրների						
Երկրներ	2011	2012	2013	2014	2015	
Իսպանիա			1			
Ֆրանսիա			1			
Լիտվա			2			

Ներկայացնել այն կազմակերպությունների ցանկը (նշելով երկիրը), որոնց օրինակով ՄՈՒՀ-ը կատարել է արտաքին կապերի ու միջազգայնացման քաղաքականության և ընթացակարգերի բենչմարքինգ (առաջավոր փորձի համեմատական վերլուծություն):

Գործիսի պետական համալսարանը միջազգային գործունեությունն ընդլայնելու նպատակով պարբերաբար կատարում է համեմատական վերլուծություն, որը ոչ միշտ է լինում փոխհամաձայնեցված (ըստ համաձայնագրի):

ԳՊՀ-ն բենչմարքինգ է իրականացրել՝ հիմնականում նկատի ունենալով Բելգիայի Լյովենի համալսարանի, Ամստերդամի համալսարանի, Գրենոբլի ակադեմիայի և Քովենթրի համալսարանի առաջավոր փորձը:

Վերլուծությունների արդյունքները հնարավորության և անհրաժեշտության դեպքում կիրառվում են ԳՊՀ-ում:

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
<ol style="list-style-type: none"> 1. Միջազգային համագործակցության կառույց՝ գործունեության անհրաժեշտ բազայի և համապատասխան կանոնադրական փաստաթղթերի առկայությամբ, 2. Ուսանողների և դասախոսական անձնակազմի շարժունակություն, 3. Եվրոպական փորձի փոխանակման ծրագրերի արդյունավետ իրականացում, 4. ԳՊՀ-ի մասնակցությունը Եվրամիության Տեմպուս և Էրազմուս ծրագրերին, ինչն ընդլայնել է ԳՊՀ-ի միջազգային համագործակցության շրջանակները և նշանակալից չափով հարստացրել արտաքին կապերի փորձը, 5. Առկա է միջազգային ծրագրերի շրջանակներում աշխատանքներ իրականացնելու փորձ: 6. Առկա են նոր առաջարկներ և հեռանկարներ՝ կոնսորցիումի անդամակցության և ապագա ծրագրերի մեջ ներգրավվածության: 	<ol style="list-style-type: none"> 1. Ենթակառույցի անձնակազմի սահմանափակ կարողություններ միջազգային ծրագրերի մշակման ու իրականացման ոլորտում, 2. Օտար լեզուներին տիրապետող փոքրաթիվ աշխատակազմ, 3. Որոշակի թերացումներ նախորդ ծրագրերի արդյունավետ իրականացման առումով, 4. Ուսանողների և դասախոսների՝ փոխանակման ծրագրերում ներգրավվածության ցածր մակարդակ, 5. Դասախոսների և վարչական աշխատողների պասսիվ ներգրավվածություն միջազգային ծրագրերում և ենթակառույցի աշխատանքներում:
Հնարավորություններ	Վտանգներ
<ol style="list-style-type: none"> 1. Նոր կրթափոխանակման ծրագրեր, 2. Դասախոսական անձնակազմի վերապատրաստման հնարավորություններ, ինչպես ազգային համալսարաններում, այնպես էլ եվրոպական առաջատար համալսարաններում, 3. Գործարար սեկտորի հետ ավելի արդյունավետ և արդի համագործակցային կապեր, 4. ՀՀ և Եվրոպական նմանատիպ բուհական ենթակառույցների հետ համագործակցություն, 5. Էրազմուսի և այլ միջազգային ծրագրերում ընդգրկվածության հնարավորությունը՝ համալսարանական կոնսորցիումների ձևաչափով, 6. ԳՊՀ-ում իրականացվող ծրագրերի 	<ol style="list-style-type: none"> 1. Օտար լեզուների իմացության ոչ բավարար մակարդակ, 2. Համապատասխան կոմպետենցիաներով մասնագետների պակաս, 3. Աշխարհաքաղաքական իրադրության փոփոխությունների հետևանքով միջազգային ծրագրերի կրճատում, 5. Որոշակի թերացումներ ծրագրերի շրջանակներում իրականացվող աշխատանքների իրականացման և վերջնաժամկետների կատարման մեջ՝ սակավ ներուժի պատճառով:

<p>շրջանակներում կազմակերպվող դասընթացների և վերապատրաստումների շնորհիվ ենթակառուցի աշխատակազմի հմտությունների և կոմպետենցիաների բարելավում և կատարելագործում:</p>	
--	--

X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

ՉԱՓԱՆԻՇ: *ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման ներքին համակարգ, որը նպաստում է հաստատության բոլոր գործընթացների շարունակական բարելավմանը և որակի մշակույթի ձևավորմանը:*

ՉԱՓՈՂՈՇԻՉ ա. ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման քաղաքականություն ու ընթացակարգեր:
Հիմքեր

Որակի ապահովման ներքին համակարգի ձեռնարկը / [հավելված10ա1/](#),

Որակի ապահովման քաղաքականությունը և ընթացակարգերը / [հավելված 2ա3.2/](#),

Այլ փաստաթղթեր:

Ներկայացնել և վերլուծել ՄՈՒՀ-ի որակի ապահովման ներքին համակարգի քաղաքականության և ընթացակարգերի արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը և արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

ԳՊՀ ՈԱ գործընթացներն օրինականացնող և ուղղորդող փաստաթղթային փաթեթը ամբողջովին բխում է ԳՊՀ-ի ռազմավարական ծրագրի համապատասխան դրույթներից, որն առաջնային է համարում «Որակի ներքին ապահովման համակարգի ներդրման և գործարկման» բաղադրիչը: Այդ դրույթից բխող որակի ապահովման գործընթացների իրականացման շրջանակներում 2010-2011թթ.-ին ներդրվեց ԳՊՀ ՈԱ ներքին կառույցը, որի հիմնական նպատակն է որակի ապահովման համակարգի և գործընթացների աջակցումն ու համակարգումը: ԳՊՀ ՈԱ համակարգին վերագրվեց կոնկրետ առաքելություն, որն ամփոփում է ուսանողակենտրոն համակարգի ստեղծմանն աջակցումը՝ ուսուցման, հետազոտության և այլ ծառայությունների վստահության դաշտի զարգացման միջոցով և որակի ապահովման ներքին մշակույթի ձևավորմանը նպաստելը: Բարեփոխումների շարունակական գործընթացում համալսարանը մշակեց որակի ապահովման հեռանկարային քաղաքականություն, որի իրականացմանն աջակցելու միտումով մշակվեց նաև որակի ապահովման ձեռնարկը (ուղեցույց): Հարկ է նշել, որ ԳՊՀ-ի որակի ապահովման համակարգը հիմնականում հիմնված է ինքնավերլուծության վրա, որը գործում է ենթակառուցվածքային բոլոր օղակներում և շարունակական շրջափուլային բազայի տարբեր մակարդակներում՝ ուղղված իր գործունեության շարունակական բարեփոխումներին և շահակիցների նկատմամբ հաշվետվողականությանը: ԳՊՀ-ի ՈԱ քաղաքականությունը և ընթացակարգերը մանրամասն ներկայացված են ԳՊՀ ՈԱ ձեռնարկում, որը նախատեսում է, որ ՈԱ քաղաքականությունը պետք է ներդրվի և իրագործվի համալսարանի առաքելության և արժեքների կոնտեքստում: Այն հիմնվում է կոնկրետ սկզբունքների, իրագործելի նպատակների և դրանից բխող խնդիրների լուծման վրա:

2007թ.-ից սկսած ԳՊՀ-ն իրականացնում է շարունակական բարեփոխումներ, սակայն բացակայում էր որակի ներքին ապահովման համակարգը, չկար կոնկրետ ընտրված ռազմավարություն, քաղաքականության հստակ սահմանում, որը չէր նպաստում որակի ապահովման նպատակների արդյունավետ իրականացմանը: Մակայն վերոնշյալ համակարգի ներդրումը հնարավորություններ ստեղծեց մշակելու և ԳՊՀ-ի ԳԽ-ում հաստատման ներկայացնելու որակի ապահովման առաջին հայեցակարգը, որը սահմանում է որակի ապահովումը բարձրագույն կրթության մեջ, ԳՊՀ ՈԱ սկզբունքները, նպատակները, դերերի և պարտականությունների բաշխումը և իրականացումը:

Մշակվեցին և ներդրվեցին մի շարք կարևոր ընթացակարգեր, որոնց մի մասը դեռևս գործարկման փուլում է: Հայեցակարգում, որպես հիմնական դրույթներ, համալսարանի կողմից առանձնացվել են.

1. Ծրագրերի և դասընթացների որակի գնահատում,
2. Դասավանդման և ուսումնառության փորձի որակի գնահատում,
3. Հետազոտության որակի գնահատում,
4. Հասարակության ներգրավածության որակի գնահատում,
5. Աջակցման ծառայությունների որակի գնահատում,
6. Ռեսուրսների, ենթակառուցվածքների որակի գնահատում:

Յուրաքանչյուր դրույթի համար գործում են համապատասխան կանոնակարգեր և ընթացակարգեր, որոնք են.

1. Ծրագրերի և դասընթացների որակի գնահատումների ուսումնական պլանների մշակման, հաստատման, մշտադիտարկման և գնահատման ընթացակարգ / [հավելված 3ե4/](#),
2. Դասավանդման և ուսումնառության փորձի որակի գնահատում, [սկադեմիական ազնվության հայեցակարգ](#), դասախոսների վերապատրաստման ընթացակարգ:

Վերոնշյալ ընթացակարգերը հաստատվել են ԳՊՀ-ի ԳԽ համապատասխան նիստերում և աշխատանքներ են տարվում բոլոր կետերի իրականացման ուղղությամբ: /[ԳՊՀ հայեցակարգ2011-2016թ.](#), [հավելված 10ա1](#)-ի, Ընթացակարգեր)

ՉՍՓՈԸՈՇԻՉ ք. Որակի ներքին ապահովման գործընթացների կառավարման նպատակով ՄՈՒՀ-ը տրամադրում է մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ:

Հիմքեր

Որակի ապահովման գործընթացներում մարդկային ռեսուրսների ներգրավվածությունը կարգավորող փաստաթղթերը /Գիտխորհրդին կից ՈԱ հանձնաժողով, ֆակուլտետային հանձնաժողովի ստեղծման քաղվածք, [հավելված 10բ1/](#),

Որակի ապահովման գործընթացների իրականացումը երաշխավորող, ֆինանսական ռեսուրսների բաշխումը կարգավորող փաստաթղթերը / [ԳՊՀ եկամ. և ծախս. նախահաշիվ/](#),

Որակի ապահովման գործընթացների իրականացումը երաշխավորող, նյութական ռեսուրսների բաշխումը կարգավորող փաստաթղթերը /[հավելված 7գ1/](#),

Որակի ապահովման ենթակառուցվածքը՝ ներառյալ մարդկային ռեսուրսները և նրանց աշխատանքային նկարագրերը / [հավելված 2ա3.2/](#):

Վերլուծել որակի ներքին ապահովման գործընթացների կառավարման համար տրամադրվող ժամանակային, մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը / կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Որակի ներքին ապահովման աշխատանքների իրականացման նպատակով ԳՊՀ-ն ապահովում է բոլոր տեսակի ռեսուրսերի ներգրավում, որոնցից առաջինը մարդկային ռեսուրսների ապահովվածության մակարդակն է: ԳՊՀ-ի ՈԱ քաղաքականության մեջ և ԳՊՀ-ի ՈԱ ձեռնարկում ներկայացված են ՈԱ կառավարման մարմինների դերերի և պարտականությունների բաշխումը, որը նախատեսում է իրականացնել ՈԱ կառավարում համալսարանի բոլոր մակարդակներում: ԳՊՀ ՈԱ կազմակերպական կառուցվածքը առավել տեսանելի է դարձնում որակի ապահովման ամբողջական պատկերը, որը քարտեզագրում է որակի ապահովման պատասխանատու օղակների միջև կապը՝ ըստ իրականացվող գործառնությունների: 2007թ.-ից սկսած բարեփոխումներին ուղղված որոշումներն ու հրահանգները ԳՊՀ-ում հիմնականում իրականացվում էր ուսումնական վարչության կողմից: Սակայն ելնելով համալսարանի ՌԾ-ից և ԵԶՈԻ պահանջներից՝ անհրաժեշտություն առաջացավ ստեղծելու որակի ապահովման ներքին կառույց, որի դերն ու նշանակությունը հիմնավորվեց կառույցի կանոնադրությամբ: Սույն կանոնադրությունը հաստատվեց ԳՊՀ-ի ԳԽ-ի 2012թ. սեպտեմբերին տեղի ունեցած նիստում: Կանոնադրության մեջ հստակ սահմանված են կառույցի գործառնությունները, աշխատակիցների իրավունքներն ու պարտականությունները: ԳՊՀ-ի որակի ապահովման կենտրոնում աշխատում են 6 աշխատակիցներ (կառույցի ղեկավար և 5 մասնագետ): Կենտրոնը ԳՊՀ-ի գլխավոր մասնաշենքում ունի հատկացված տարածքներ և համապատասխան նյութատեխնիկական բազա: Համալսարանում որակի ապահովման գործընթացներին ուղղված կարևոր որոշումներն ընդունվում են ԳԽ-ի համապատասխան նիստերում, որին կից գործում է նաև որակի ապահովման հանձնաժողովը: ԳԽ-ին կից ՈԱ հանձնաժողովը խորհրդատվական և միաժամանակ որոշումներ կայացնող հանձնաժողով է, որը բաղկացած է 7 անդամից, այդ թվում՝ ներքին և արտաքին շահակիցներից:

ԳՊՀ-ի ինքնագնահատման գործընթացը սկսվել է 2012թ.-ից: Համալսարանի բոլոր ստորաբաժանումները գործընթացից ելնելով վերանայեցին իրենց կողմից իրականացվող գործընթացների արդյունավետությունը, որից հետո ԳՊՀ-ում ստեղծվեց ինքնագնահատման հանձնաժողով: Ենթակառուցվածքային հավատարմագրման պետական չափանիշներին համապատասխան ԳՊՀ-ում ստեղծվեցին 10 աշխատանքային խմբեր, որոնք ձեռնամուխ եղան համալսարանի ենթակառուցվածքային զեկույցի նախապատրաստմանը: Խումբը պետք է ներկայացված ժամկետներում մշակի և ներկայացնի համալսարանի ընդհանուր զեկույցը՝ հնարավորինս ներառելով ներքին ու արտաքին շահակիցների դիտողություններն ու առաջարկությունները:

ՀՄՓՈՐՈՇԻՉ գ. Ներքին և արտաքին շահակիցները ներգրավված են որակի ապահովման գործընթացներում:

Հիմքեր

Որակի ապահովման գործընթացներում ուսումնառողների և այլ շահակիցների ներգրավվածությունը հաստատող հիմքերը [/հավելված 10գ1/](#)

Ներկայացնել որակի ներքին ապահովման գործընթացներում ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածության աստիճանը և վերլուծել արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

ԳՊՀ-ն որակի ապահովման բարեփոխումների գործընթացում կարևոր դեր է հատկացնում ներքին ու արտաքին շահակիցների ներգրավվածությանը: Ոլորտում ներգրավվածության մակարդակը բարձրացնելու նպատակով ՄՀԿՈԱԲ-ի կողմից համալսարանում պարբերաբար

կազմակերպվում են տեղեկատվական, վերլուծական միջոցառումներ, այդ թվում սեմինար խորհրդակցություններ և վերապատրաստումներ/[հավելված 10գ2](#)/ :

ԳՊՀ-ի ներքին ու արտաքին շահակիցների ներգրավվածությունը որակի ապահովման գործընթացներում հիմնավորված է մի շարք գործընթացներով և դրանք օրինականացնող փաստաթղթերով: Մկսած 2006թ-ից ԳՊՀ-ն իրականացնում էր ավանդական հարցումներ դասախոսների, ուսանողների և արտաքին շահակիցների շրջանում՝ կարիքների բացահայտման և բարեփոխումների նպատակով: Սակայն բացակայում էր համակարգային մոտեցումը խնդրի նկատմամբ, քանի որ հետագա վերլուծությունը և հետևողական, շրջափուլային իրականացումը չէր կատարվում: Ստացված ինֆորմացիան համապատասխան վերլուծություն չէր անցնում և չափելի արդյունքների չէր հանգեցնում ուսումնառությանն ուղղված բարեփոխումների ոլորտում: ԳՊՀ ՄՀԿՈԱԲ-ի կազմավորումից ի վեր համալսարանում ստեղծվեց աշխատանքային խումբ, որը կազմված է ֆակուլտետների համապատասխան մասնագետներից, ուսանողներից, դասախոսներից և արտաքին շահակիցներից, ընդ որում, հաշվի առնելով մասնագիտությունների առանձնահատկությունները՝ յուրաքանչյուր ֆակուլտետ ստեղծեց իր խումբը՝ ներգրավելով իր մասնագիտական կարիքների համահունչ արտաքին շահակիցներ: Ներկայումս գործընթացն իրականացման փուլում է և նախատեսվում է ավարտից հետո մշակել և ներդնել տվյալ գործընթացի էլեկտրոնային տարբերակը:

ԳՊՀ-ի որակի ապահովման համակարգում շահակիցների ներգրավվածությունն ապահովվում է հետևյալ կերպ.

1. Համալսարանի խորհրդում ներառված են ինչպես ներքին, այնպես էլ արտաքին շահակիցներ, որոնք անմիջականորեն մասնակցում են որոշումների կայացման գործընթացին:
2. ԳՊՀ գիտխորհրդի կազմում ներգրավված են ուսանողներ, դասախոսներ և արտաքին շահակիցներ: Որակի ապահովման գործընթացներին առնչվող բոլոր կարևոր որոշումներն ընդունվում են ԳՊՀ-ի ԳԽ նիստերում:
3. Ֆակուլտետային հանձնաժողովներ, որտեղ քննարկվում են ՄԿԾ-երի և առհասարակ ուսանողների ուսումնառության հետ առնչվող բոլոր կարևոր խնդիրները:

2ՍՓՈԸՈՇԻՉ ղ. Որակի ներքին ապահովման համակարգը պարբերաբար վերանայվում է:

Հիմքեր

Որակի ներքին ապահովման համակարգի վերանայման քաղաքականությունը և ընթացակարգերը / [հավելված 10ա1](#)/,

Որակի ներքին ապահովման համակարգի պարբերաբար վերանայման մեխանիզմները և գործիքները / [հավելված 10ա1](#)/,

Համապատասխան այլ հիմքեր և վերլուծություններ:

Վերլուծել որակի ներքին ապահովման համակարգի պարբերաբար վերանայման մեխանիզմների արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը / կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

ԳՊՀ-ի ՈԱ համակարգը դեռևս գտնվում է զարգացման փուլում, որի վերանայման մեխանիզմները դեռևս լիովին հիմնավորված չեն, և կիրառվում են տարբեր մեխանիզմներ ու մեթոդներ, որոնց արդյունավետությանը հնարավոր չէ միանշանակ գնահատական տալ: ԳՊՀ-ն 2013թ.-ին ստեղծել է իր առաջին ՈԱ հայեցակարգը և ՈԱ ձեռնարկը:

Ինչպես նշվեց 10.գ կետում, դասավանդման գնահատման վերաբերյալ ուսանողական հարցումները ենթարկվել են վերանայման ու բովանդակային լրամշակումների: Գործընթացը դեռևս կրում է շարունակական բնույթ: Մյուս հարցումները վերաբերում են շրջանավարտների՝

կրթությունից բավարարվածության աստիճանի ստուգմանը, որն իրականացվում է նոր սկզբունքների հիման վրա և ապահովում է ձեռնարկությունների ակտիվ ներգրավվածություն:

Վերանայվել և լրամշակվել են ԳՊՀ-ի կրթական ծրագրերի և ուսումնական պլաններին առնչվող ընթացակարգերը:

ՉՍՓՈՐՈՇԻՉ ե. Որակի ապահովման ներքին համակարգն ապահովում է բավարար հիմքեր որակի ապահովման արտաքին գնահատման գործընթացների համար:

Հիմքեր

Տարեկան ինքնավերլուծությունները և հաշվետվությունները ըստ ինստիտուցիոնալ հավատարմագրման չափանիշների և չափորոշիչների: / [հավելված 10ա1/](#)

Հիմնավորել տրամադրված հիմքերի հավաստիությունը և մոտեցման արդյունավետությունը / կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Ինչպես նշվեց 10.ա կետի վերլուծության մեջ, ԳՊՀ-ի ՈԱ համակարգը հիմնականում հիմնված է ենթակառուցվածքային ստորաբաժանումների ինքնագնահատման գործընթացի և հաշվետվությունների վրա: 2012թ.-ից ԳՊՀ-ն իրականացնում է ինքնագնահատման գործընթաց՝ համաձայն ՌԾ-ում տեղ գտած որակի ապահովմանն ուղղված դրույթների նախ շեշտը դնելով բոլոր բաժինների կողմից իրենց իսկ գործունեության վերլուծության վրա: Այնուհետև, ինչպես նշվեց նույն կետի վերլուծության մեջ, համալսարանում ստեղծվեց ինքնագնահատման հանձնաժողով և համապատասխանաբար 10 աշխատանքային խմբեր, որոնք ԳՊՀ-ի ինքնավերլուծությունն իրականացնում են՝ ելնելով ՀՀ կառավարության կողմից հաստատված չափանիշների և ՈԱԱԿ-ի կողմից լրամշակված ենթակառուցվածքային հավատարմագրման ձևաչափի: Նախատեսվում է ինքնավերլուծության զեկույցի վերջնական տարբերակի ներկայացում ազգային հավատարմագրող կառույցին՝ ՈԱԱԿ-ին, ինչպես նաև արտաքին ու ներքին շահակիցների համար հասանելիության և հետադարձ կապի ապահովում:

ՉՍՓՈՐՈՇԻՉ գ. Որակի ապահովման ներքին համակարգն ապահովում է ՄՈՒՀ-ի գործունեության թափանցիկությունը՝ տրամադրելով ՄՈՒՀ-ի գործընթացների որակի մասին տեղեկատվություն՝ ներքին և արտաքին շահակիցների համար:

Հիմքեր

Շահակիցների տեղեկացվածությունն ապահովող մեխանիզմները և համապատասխան փաստաթղթերը / [հավելված 1բ1/](#),

Շահակիցների տեղեկացվածության աստիճանի գնահատման/վերլուծության արդյունքները/ մակարդակը:

Վերլուծել ՄՈՒՀ-ի գործունեության թափանցիկությունը ապահովող մեխանիզմների արդյունավետությունը / կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Որակի ապահովման ներքին համակարգն ապահովում է ՄՈՒՀ-ի գործունեության թափանցիկությունը՝ տրամադրելով ՄՈՒՀ-ի գործընթացների որակի մասին տեղեկատվություն՝ ներքին ու արտաքին շահակիցների համար:

ԳՊՀ-ում գործում են մի շարք ներքին մեխանիզմներ, որոնք ուղղված են համալսարանի թափանցիկ գործունեությանը և հաշվետվողականության ապահովմանը արտաքին շահակիցների առաջ: Դրանք են.

1. ԳՊՀ-ի ռեկտորի ամենամյա հաշվետվությունը, որում ներկայացվում են անցած տարվա բոլոր ստորաբաժանումների և բոլոր գերակա ուղղություններով կատարված աշխատանքների արդյունքները.
2. ԳԽ-ում պարբերաբար ներկայացվող բոլոր ստորաբաժանումների հաշվետվությունները՝ կատարած աշխատանքների վերաբերյալ.

3. Արտաքին և ներքին շահակիցների հետ անցկացվող քննարկումները, սեմինար խորհրդակցությունները, համատեղ ծրագրերը.
4. Ուսանողական հարցումների հիման վրա ներկայացվող հաշվետվությունները.
5. ԳՊՀ-ի պաշտոնաթերթում լուսաբանվող տեղեկատվությունը, որը տպագրվում է յուրաքանչյուր ամիս 200 օրինակ և տրամադրվում է ինչպես ներքին, այնպես էլ արտաքին շահակիցներին, տեղադրվում է նաև համալսարանի ինտերնետային կայքում և հասանելի է բոլորին.
6. Կրեդիտային համակարգով ուսումնառության ուղեցույցը, որը հրատարակվում և տրամադրվում է բոլոր ուսանողներին:

Այդ ամենով հանդերձ ՈԱ մշակույթի լիակատար ձևավորման համար դեռևս շատ գործընթացներ պլանավորման, իրականացման, վերանայման փուլում պետք է հանգամանալից վերլուծվեն՝ նոր մեթոդաբանությամբ և ավելի համակարգված:

Չափանիշ 10-ի վերաբերյալ վերջին 3 տարվա SWOT վերլուծություն.

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
<p>1. ՈԱ ներքին ապահովման համակարգ, որը դինամիկ է և բաց է ստեղծագործ գաղափարների, իրագործելի նպատակների և չափելի արդյունքների համատեքստում: Այն թափանցիկ է իր իսկ շահակիցների առաջ և շարունակաբար համագործակցության նոր ուղիներ է որոնում բոլոր արտաքին և ներքին գործընկերների հետ և փորձում ապահովել բանակցային միջավայր մասնավորապես շեշտը դնելով համալսարան-գործատու համագործակցության զարգացման հեռանկարների վրա.</p> <p>2. ՈԱ հեռանկարային քաղաքականություն, որի շնորհիվ ստեղծվել է ԳՊՀ ՈԱ հայեցակարգը, ձեռնարկը և ընթացակարգերի ու կանոնակարգերի փաստաթղթային փաթեթը.</p> <p>3. ՈԱ տեղեկատվական վերլուծական պորտալ, որը շարունակում է զարգանալ՝ դառնալով ՈԱ մշակույթի տարածման հիմնական հարթակ.</p> <p>4. ՈԱ ապահովման ներքին մեխանիզմներ, որոնք հաջորդաբար անցնում են գործարկման:</p>	<p>1. Լիովին չձևավորված ՈԱ մշակույթ.</p> <p>2. Որակի ապահովման գործընթացներում բուհի շահակիցները դեռևս ամբողջությամբ ներգրավված չեն, երբեմն փոփոխությունների նկատմամբ դժգոհություն և հավելյալ տեղեկատվության պակաս է նկատվում.</p> <p>3. Ոչ բավարար համագործակցային կապեր արտաքին գործընկերների հետ.</p> <p>4. Որոշ գործընթացների ոչ լիարժեք համակարգվածություն և փաստաթղթային հենքի ապահովվածություն.</p> <p>5. Համալսարանում դեռ չի ձևավորվել որակի ապահովմանն ուղղված ուսանողների բավարար ներգրավվածություն:</p>
Հնարավորություններ	Վտանգներ
<p>1. Եվրոպական առաջատար համալսարանների հետ համագործակցություն և բենչմարկինգ.</p>	<p>1. Գիտության և հետազոտության ֆինանսավորման նվազում.</p> <p>2. Կրթական ռեսուրսների ոչ լիարժեք</p>

<p>2. Անձնակազմի կոմպետենցիաների զարգացման հնարավորություններ տարբեր վերապատրաստումների միջոցով.</p> <p>3. Կրթափոխանակման նոր ծրագրերի ներդրում:</p>	<p>ապահովվածություն:</p>
--	--------------------------